85
Մ-43
ՑՍՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

# ԱՆՈՒԱՆՔ

Ազգասէր անձանց որք յօժարակամ ձեռնտու եղեն տպագրութեան գրոցս ։

Հոգևորականք ։

| | | հատոր | արծաթ ռուբլէ |
|---|---|---|---|
| 1 | Արք եպս Հայոց Վրաստանի, Տայոց, Իմերէթի և ասպետ Կարապետ | 5 | 45 |
| 2 | Արք Եպս Ախալցխայի Գէորգ Տր Գաւթեան և ասպետ | 3 | 15 |
| 3 | Բարձր Արժանապատիւ Եփրեմ վարդապետ Երզնկեան | 3 | 10 |
| 4 | Բարձր Արժանապատիւ Վարդան վարդապետ Օձնեցի | 3 | 10 |
| 5 | Խաչակիր Գէորգ աւագ քահանայ Մէհրաբեան և ասպետ | 2 | 10 |
| 6 | Խաչակիր Մովսէս Ա. քհն Սայաթնեն. | 2 | 10 |
| 7 | Պօղոս Աւագ քահանայ ՚ի Սղնախայ | 2 | 10 |
| 8 | Խաչակիր Ղազար Ա. քհնյ Գաւթեան | 2 | 12 |
| 9 | Խաչակիր Աւետիք քհնյ տր Աւետիսեն. | 2 | 10 |
| 10 | Ղազար քահանայ տէր Ղազարեանց | 2 | 10 |

Բարեծնունդ աշխարհականք և աստիճանաւորք ։

| | | | |
|---|---|---|---|
| 11 | Աղէքսանդր Թայիրեանց | 2 | 10 |
| 12 | Յովհաննէս Կարապետեան Խուբեանց | 1 | 5 |
| 13 | Սիրական Սուքեաղեան Գորոյեանց | 2 | 10 |

14 Մելքոն և }
15 Վարդան } Խլանիչք Վարդանեանց.

16 Ազնիւ Աւետ. Խլանիչ Փիրատով....... 1 3
17 Նազարէթ Տիգրանեան 'ի Շիրակայ..... 2 10
18 Յակոբ տ͞ր Թադէոսեան Սահակեանց. 2 10

Բարեպաշտօն ժողովոյէ ։

19 Աւետիք մովսէսեան Փիրոյեանց 'ի Տփ".. 2 10
20 Սարգիս Պօղոսեան Պօղոսով..............
21 Գալուստ Բօղդանիչ Բայենդուրով..... 1 3
22 Հէջուբ Տ͞ր Գաբրիէլեան Հէջուբեանց. 2 10
23 Նազոր Ռոստոմեան Մանդենեանց...... 2 10
24 Խաչատուր Օհանջանեան Մանուկեանց. 2 10
25 Սողոմոն Վարդանեան Բուղդանեանց.... 2 5
26 Սիմոն Յօնանեան 'ի Շուշայ........... 1 3
27 Այրի Աննայ Առաքելեան 'ի Տփխիսայ. 2 10
28 Մկրտիչ տ͞ր Գրիգորեան 'ի Տայոց..... 1 5
29 Արիստակէս Յարութիւն Երզնկեանց..... 1 5
30 Ստեփաննոս Մովսէսեան Մանդինեանց. 1 5
31 Բօղէն Ամբակումեան Բօրջիլով 'ի Ղզլարյ. 1 3
32 Գաբրիէլ Յարութեան Միրաբով..... 1 3
33 Մելքօ Միրաքեան՝ 'ի Սղնախայ....... 2 10



# ՅԱՌԱՋԱԲԱՆ

—

Լուսաւորեալ ազգք Եւրոպացւոց, որք յամենայնի զհետ լինին գտանել զնորանոր եղանակս 'ի դիւրել զընթացս ամենայն ուսմանց և արուեստից. և խնդառիթ մտօք յօժարակամ առնել զաշակերտս 'ի նոյնս, զեղերերգակ բանաստեղծութիւնն ևս 'ի նոյն օգուտ 'ի կիր արկին, ուստի և զամենայն երևելի դիպուածս գրեալս 'ի սրբազան և յարտաքին պատմութիւնս՝ յօրինեցին 'ի ձև Թատերական խաղուց, որպէս զի՝ ուսումնասէր մանկտին առանց ձանձրութեան՝ զուարճանալով ուսցին. և ուսանելով զուարճասցին, զայս օգուտ և Հայացի մանկանց կամելով ընծեռել արժանայիշատակ Հարքն միխիթարեանք, զքանի մի երևելի դիպուածս աւանդեալս յԱստուածաշունչ գիրս, զյօրինեալս 'ի ձև Թատերական խաղուց՝ յանուանի բանաստեղծէն Մէթասթազեայ թարգմանեցին 'ի տաճկական բարբառ, և Հայկական տառիւ 'ի լոյս ընծայեցին 'ի 1831 ամի: Այս աշխատասիրութիւն նոցա արդարև օգտաբեր եղև մանկանցն Կոստանդնուպօլսոյ, որք քաջավարժ են 'ի գիտութիւն տաճկական բարբառոյ, այլ 'ի մանկանց Հայաստանի մնաց գրգ. անվերծանելի, ուստի ըստ ընթացից նոցա և ես աշխատասիրեալ զայս համառօտ տետրակ հոգեշահ խաղուց մատուցի 'ի զբօսանս նորուսումն աշակերտաց ազգիս, իբրու տղայոց կաթն ջամբելով, և ոչ կատարելոց հաստատուն կերակուր:

Յովսէփ Աւրէնեանց:

Որ միանգամ գեղեցիկ յարմարութեամբ զար-
դարել զամենայն բանաւորացն կարէ արուեստս, և
լուսաւորագոյն յայտ բանիւք զլսելիս հեշտացու-
ցանել, ինձ մանաւանդ ոչ այլ ոք տուեալ 'ի դէպ,
քան եթէ զերջանիկ քերթողականս բերել․ ցուց-
ցի ախորժակ։ Խորեն․ յԲ․ գիրս․ պիտոյից․ օրին․ Դ։



# ՄԱՀ ԱՐԷԼԻ։

## ԽՕՍՕՂՔ:

—

Ադամ,

Եւայ,

Կայէն,

Աբէլ,

Հրեշտակ,

Երգիչք:



Печ. позв. 9. Сент. 1841. г. Ценз. С. Р. Архим. Агапитъ.

# ՄԱՀ ԱԲԷԼԻ:

## ԱՌԱՋԻՆ ԱՆՑՔ:

---

### Աբէլ և ապա Կայէն,

### ԱԲԷԼ:

Ամենայն գործք ձեռաց մարդկան՝
  են նոր զարմանք զանազան:
Գո՛հ եմ զքէն իմ Արարիչ,
  զքէն կացից գոհաբան:
Ցորչափ ծծեմ ես զօդ կենաց·
  զամենայն օր յոր կեցից,
Նորոգելով զյոյս առ քեզ·
  զքեզ յաւէտ օրհնեցից:
Եկա՛յք ընդ իս ո՛վ ազինք·
  եկա՛յք համայն դուք ընդ իս:
Ընդ փառս Աստուծոյ զարմացարո՛ւք·
  և ընդ նորա երախտիս:
Ոյր գթութիւն է անբաւ,
  յոր հաւատամ անկասկած:
Որ հաշտ ակամբ յիմս զոհ,
  նա հայեցաւ նախախնայծ:

Այլ ես ո՛վ եմ իմ Արարիչ,
  կամ ո՛վ բնաւ ազգ մարդկան։
Ո՛ւմ գթութեամբ՝ յամէն նուագ,
  յայտնես զգութդ հայրական։

ԿԱՅԷՆ։

Զինչ է այդ քո ուրախութիւն սիրելիդ,
  արտասուք յաչսդ՝ ծիծաղ 'ի դէմսդ ցանկալ
Թէ այսօր քեզ նոր ինչ դէպք դիպան.
  ասա՛ մաղթեմ նազելիդ։

ԱԲԷԼ։

Ա՛կ անձկալիդ իմ բարեկամ.
  լե՛ր հրճուանաց խնդակից։
Ա՛յր բաժանորդ թէ ո՛չ լիցիս.
  շիջցի լապտեր մեր սրտից։
Զի զիմ այսօր մատուցեալ զոհ.
  տէ՛րն ընկալաւ ամենից։

ԿԱՅԷՆ

Յանդուգն այդ բան քոյդ բերանոյ՝
  ասա՛ չէ վեր քան զչափդ։
Երկի՛ր այդ քոյ ծանր բարբառ.
  զքեզ պատրէ զհպարտդ։

ԱԲԷԼ.

Ո՛չ, ո՛չ սիրելիդ. զի փառք նորա յայտնի են.
  թէ կամք նորա չհաճին. հողմք զտերևս չշարժ
Լո՛ւր աղաչեմ զանցեալն զվէպ.
  'ի քեզ կասկած այլ չիցէ։

Զանդրանկածինն յիմոյ դաւանոյ,
  զոր ընծայեցի 'ի ծնէ.
Զոր մատուցի իմ Արարչին՝
  որ ամենից տուող է:
Ո՛վ Տէր առեալ. քրտունք դիմացս.
  վաստակք ձեռացս. քեզ պատարագ միայն չեն.
զՍուրբ խորհուրդս իմում սրտի.
  այդ չնչին տուրք գուշակեն:
Նոր խնդրէի հայել 'ի նոյն.
  բանք 'ի բերանս Մացին.
Զգիտեմ զանկեալ 'ի պարզ գիշեր.
  տեսեալ ես զատող երկնային:
Արդէս յերկնից երբեւ կայծակն,
  էջ հուր պատեաց զիմ մատաղ.
Ծախեաց 'ի հուր փոխեաց յաճխն,
  անջուր խարշեալ եւ անալ:
Թուեալ կրակն ուստ իջեալն էր.
  ըմբռնեցայ ես յապուշ:
Յոյս եւ երկիւղ եւ խնդութիւն.
  յիմում սրտէ բարձին զուշ:

## ԿԱՅԷՆ.

Զինչ խօսիս, կամ զինչ պատմիս,
  բանքդ սուտ են չաեմ ես։

Բայց եւ ես՝ զմի այսօր՝ պատարագ՝ մատուցի Տեառն իմոյ Աստուծոյ. այլ իւ պարծիւք այդ զոհմանք, չյայտնեցան քեզ, չգիտեմ վասն էր, եւ ոչ հրոյ ինչ խարակ,

Ե՛կ մայր իմ եկ լո՛ւր Աբէլի,
տե՛ս զի՞նչ պատմէ նոր զարմանք։
Զո՛ր հողեղէն աչք չէ տեսեալ.
տա՛ նմա հաւատա՛յք:

## Եւայ, Կայէն և Աբէլ:

ԵՒԱՅ·

Հաւատամ, որդեա՛կ, և ես տեսի,

ԿԱՅԷՆ·

զի՞նչ տեսա՛ր.

ԵՒԱՅ·

Զպատարագն մատուցեալ. և զհուրն իջեալ յերկնից:

ԿԱՅԷՆ·

Ո՛ւրեմն ճշմարիտ է

ԵՒԱՅ·

Մի՛ կասկածեր ճշմարիտ է.

ԿԱՅԷՆ (Ի ծածուկ)·

Ո՞հ այդ անողորմ ճշմարտութի սպանելոց է զիմ ոգի:

ԵՒԱՅ·

Յուրախութեանց սրտից Ձերոց մի՛ ըմբռնի՛ք, զառաջին պատարագն մատուցիք, արդ դարձարո՛ւք ՚ի գործ ձեր: Կայէն գնա՛ դու յանդն, և Աբէլ երթիցէ ՚ի հօտ ոչխարաց, կատարեցէք զպաշտօնն՝ զոր հայր ձեր յանձն արարեալ է ձեզ, հաւատա-

Նոյն զպարտիս՝ ծառայէ Աստուծոյ, և ՚ի նմանէ վարձատրի:

## ԱՂՋԻԿ.

Քաղցր քան զայդ հրաման,
  չկարէ լինել մայր իմ:
Որ ջերմ սիրով քեզ յայտնի,
  ես լաւ սիրեմ զհօտ իմ:
Ո՛չ եմ կրեալ անձկութիւն.
  ծանր ինձ թուի, ո՛չ քիլան իմ:
Ե՛ս եմ, ե՛ս եմ, այն հովլու.
  սիրող հօտին ՚ի սրտէ:
Որ յիւր հօտին փոխանակ,
  ըղձիւ զկեանս իւր դնէ:
Գառինք զհովլիւն ճանաչին,
  և ես զնոսա յանուանէ:
Յայց եղանեմ, և հոգամ
  զոր յիմ հօտիս թուոյ են:

---

## Եւայ և Կայէն:

### ԵՒԱՅ.

Վասն էր տրտմեալ ես, որդեակ իմ Կայէն, զի՞նչ պատահեցաւ քեզ, զի միայն յերկիր հայեցեալ ամենևին չխօսիս ինչ, տժգոյն կերպարան դիմացդ· կնճիռ ճակատուդ, և մրմռալով հառաչելդ, նշան են բարկութեան, և զայրացեալ կրից, զի՞նչ է ցաւ քո ասա՛:

ԿԱՅԷՆ·

Զի՞նչ ճիչ ունիմ ուրախութիւն։

ՆԻԱՅ·

Վասն Էր որդեակ, զի՞նչ քեզ պակաս է. դի- պուածք եղբօրդ՝ պակա՞ս ուրախութեան իրք են։

ԿԱՅԷՆ·

Ո՛չ տարքէն դիպուածք նորա են,
որ զկեանս իմ սպառեն։
Բարութիւնք նորա և բարկութիւն,
՚ի հոգիս հուր բորբոքեն։

ՆԻԱՅ·

Ուրախութիւնք տարրայ՝ քեզ վիշտ լինի՞ն, բարիք տարրայ՝ քեզ չար թուին, և ահա այդ է յանցանք սատանայի, ո՛հ այդ չար նախանձ է, որ ըղ- բարեկամն ՚ի բարեկամէ զրկէ, և զամենայն ճշմարտութիւն ծածկեալ· զբորբոքեալ սէր եղբարց անգամ մարէ։

Զչար սերմանդ այդ արմատ·
խլեա՛ սրտէդ ՚ի բա՛ց հան։
Ո՛հ չգիտես երբ աճեսցէն·
զո՛ր անախորժ պտուղ տան։
Ա՛յս են խրատ քոյդ ծնողի·
զոր վասն օգտիդ բարբառի։
Ցորչափ զայդ թոյն՝ ընդդէմ եղբօրդ·
սնուցանես ՚ի սրտիդ։
Քեզ ինչ վտանգ՝ գայ հասանէ,
և նմա վտանգ ինչ չդիպի։

Համապատօրէայ վըրդովումն·
 չտայ երբէք դիւր սրտիդ:
Ո՛վ որդեակ իմ, ծանի՛ր զքեզ,
 և 'ի բա՛ց կա՛ց, յայդց կրից:
Մի՛ թողուր յօրինակ· այլի մարդկան,
 զայդ չար պտուղ անիծից:
Երբ յակն աղբեր՝ բղխէ այսպէս պղտոր ջուր·
 յառնել գետոց· դիւրաք շատ միան· բանիս լո՛ւր:
Ողորմելի որդեակք իմ·
 երբ դուք, այսօր այսպէս էք
Ի հոլովիլ բազում դարուց·
 չգիտեմ զո՛ր հուր բորբոքէք:

## ԿԱՅԾՆ·

Ես զիա՛րդ· համբերեցի՞ց արդեօ՛ք· զի փոքր եղեալ իմոյ· այն բարիք դիպեցի՞ն, օ՞ն անդր, քա՛ւ, չէ, ես չկարեմ համբերել· ինձ նախատի՞նք են փառք օտարաց, ես կամելով աղօտ արկանել փառաց այլոց· և աչա՛ պատահիմ հազար զալթ նոցա յաւելուածոյ: Ե՛ս իմով նախանձու ըզթշնամիս բարձրացուցանեմ, երբ կամիմ զնա անարգել 'ի բարձր զնա տեսանեմ, զհուր կիզիչ իմոյ մտաց, անձամբ անձին արծարծեմ, ցորչափ զբաղդ Աբէլի յիշեմ, հարեալ 'ի դող ցնորք կամ երազ ես զնոյն կարծեմ· այլ թէ վա՛ռն էր, գիտեմ հարցանես, հաւատա՛ զի և ես չգիտեմ:

Օ՜, պատաճառ, նախանձուս՝
 և ես որոնեմ, այլ ո՛չ գտանեմ·

Բայց զանմեղութիւն
եղբօրս Աբէլի, ես միայն գիտեմ։

## Հրեշտակ և Կայէն։

### ՀՐԵՇՏԱԿ·

Ընդէ՞ր ցասուցեալ ես Կայէն· վասն էր ակնկոր հայիս յերկիր, ասա՛ և մի՛ երկնչիր· ասա՛ և տո՛ւր պատասխանի, ասա՛ զյանցանս քո, զի արդարասցիս։ Այր ճշմարիտ՝ խոստովանի զիւր յանցանս, ճանաչել և խոստովանել զյանցանս, և ամաչել, ապաշխարութիւն իմն է, գիտեա՛ զի եթէ խոստովանիս և թողութեան արժանի լինիս։

### ԿԱՅԷՆ·

Իսկ եթէ մեղայց·

### ՀՐԵՇՏԱԿ·

Յայնժամ անձին քում եղո՛ւկ· զի մեղքն զխիղճդ տանջէ· և քեզ հանգիստ չիք յումեքէ, զյանցաւորին դաժան մեղս, թէ և աշխարհ չգիտէ, սակայն անքուն յիւր անձին, անդուլ զմիտս տանջէ· խաւար տեսակ գիշերոյ, տունջեան լոյս արևու, համայն գոյակք երևեալք, նա և ցնորք մտածեալք, գիտօղք գործոյն չարաց, նա և անգէտք այնպիսեաց, ամենեքեան հալածեն զնա, երբ յարթնութեան նստեալ կայ· զանձն նորա խռովեն, երբ ՚ի խոր քուն մտանէ, ցնորք զմիտս սպանեն։

ԿԱՅԷՆ·

Ապա ուրեմն.....

ՀՐԵՇՏԱԿ·

Ոչ այդպէս,

Գիտեմ զոր ինչ կամիս ասել. մեղքն 'ի ձեռս քոյ է, բայց ընդ քոյով իշխանութեամբ, զոր կամաւ քով կարես արկանել ընդ քոյդ իշխանութեամբ. Նա՝ որ ետ քեզ զանձնիշխանութիւն վասն այն ետ. զի մի՛ կարիցես ճարտարել զմեղաց պատճառ: Դու՝ զԱմենակալէն գանգատեալ, զԱրարիչն զրպարտես, բայց թէ կամաւ զքեզ զրկես. և դու ինքնին ճանաչես, ցնորական մտածութեամբ, զստեղծչին գութ խափանեալ, քեզ 'ի պատիժ փոխարկես:

---

## Կայէն և Աբէլ:

ԿԱՅԷՆ (է ծ–ծ––է)·

Որչափ ես անարգեցայ առաքինութեամբ Աբէլի, այն բան չէր· տակաւին 'ի պատճառս նորա, զայս նախատինս ինձ լսել պարտ էր:

Ահա՛ ատելի եղբայր իմ, ընդ հօտին իւրոյ 'ի պարակէն գայ 'ի դուրս, ուրախութիւնք սրտի նորա փայլին 'ի դէմս և 'ի կուրծս, խորհուրդք մտաց նորա, 'ի կերպարանս նորա յայտնի նկարեն. փախեայց· փախեայց, և ծածկեցի՛ց զիս, դէթ 'ի չտեսանել զերեսս նորա, զոր աչք իմ չհանդուրժեն

տեսանել, երկոցունցս բաղդ ՚ի միմեանց յոյժ հեռի են, յանցանք իմ և երջանկութիւնն՝ զոր ես կորուսի, և նա եղիտ. առանց խօսից, ո՞չ նախատակած զլս առնեն։

ԱԲԷԼ.

Վասն ո՞ր փութաս եղբայր ջա՛ն, ընդէ՞ր յինէն փախչիս.

ԿԱՅԷՆ.

Ես չկարեմ մերձիլ առ այր, զոր սիրէ Աստուած, որպէս դուդ՝ ես.

ԱԲԷԼ.

Սիրեցեալ եղբայր իմ, զի՞նչ խօսիս, ես զայդպիսի բանս չեմ լուեալ ՚ի քէն, ասա՛ աղաչեմ, զի՞նչ ասես։

ԿԱՅԷՆ.

Զառաքինութիւնդ որք յայտնի են աշխարհի միանգամ պատմեցեր՝ լուայ, միւսանգամ կամիս ճառել։

ԱԲԷԼ.

Վասն ո՞ր պարծեցայց ես. զի չի՛ք առ իս ինչ արժանի պարծանաց. ամենայն ինչ Աստուծոյ է, և նովաւ միայն պարծիմ։

ԿԱՅԷՆ.

Դու մի՞այն մատուցանես՝ զզոհ Աստուծոյ արժանի. զի զիմն անարգեալ՝ զքոյդ ընդունի։

ԱԲԷԼ.

Վա՜յ եղբայր իմ, զի՞նչ խօսիս. այդ յանցանք քո՝ մեծագոյն է քան զառաջինն. տես լուսաւորիչ աչաց.

դժոյդ խաւարեցուցանէ արդեօ՞ք։ Աստուած այլով աչօք յիս հայեցեալ, քեզ ածէ տանէ, բայց դու տակաւին յանցուցեալ, գործի չարութեն առնուս ձայն քո Մարբէչ յունկն երկոցունցս՝ զիա՞րդ հակառակս ածէ. դու զերկուեանս ես հրաւիրես ՚ի ճանապարհ ճշմարտութեան, բայց ոմն դառնայ յապաշխարել, և ոմն առ ՚ի զմեղսն յաւելուլ։

Զհիւթ ծաղկանց մեղուաց կերլի·
 ծծէ և օձ չարաթոյն։
Այլ երկոցունց այլատեսակ·
 բաշխէ զհիւթ այլազգոյն։
Մեղուն ծծեալ՝ զմեղր յօրինէ·
 զո՛գ աշխարհի սիրելի·
Բայց օձն ծծեալ նիւթէ զթոյն·
 ամենեցուն խորշելի։

ԿԱՅԷՆ·

Տակաւին և դու յանդգնիս՝ նախատել զիս անզգամ, չամաչե՞ս արդեօ՛ք. զինչ է այդ քո իշխանութիւն. հա՛յր իմ ես դու, տէ՛ր, թէ իշխան.

ԱԲԷԼ·

Հասու չեղեր բանից իմոց, զոր խօսեցայ քեզ. չէ յամբարտաւանութենէ, այլ յեղբայրական սիրոյ։

ԿԱՅԷՆ·

Մի՛ սիրեր զիս, չեմ ուզեր·

ԱԲԷԼ·

Այլ հակառակութիւն.....

### ԿԱՅԷՆ.

Ա,յ՛, Ա,յ՛.

Յետ այսօրիկ, հակառակեա՛լց ընդ իս. յայսմ հետէ չիք իմ այլ հանգիստ. նա միայն է դիւրութի՛ սրտիս։

### ԱԲԷԼ.

Ո՛հ, այդ բանք քո ցաւ են ինձ. այդ նախանձ քո առ իս մի՛ թէ ախորժելի է քեզ. ո՞հ եղբայր իմ, մի՛ առներ զայդ, եթէ յանցաւոր եմ յանձն առ-նում զպատիժ, միայն եթէ այն ՚ի սիրոյ եկեսցէ յա-ռաջ. մի՛ նախատեր զիս, քան զքոյդ նախատինս չիք ինձ ցաւ դժնդակ. աղաչեմ զքեզ ցո՛յց ինձ զհնար. շահելոյ զքոյ սիրտ. ակնարկութեան քո և հրամանի կամ կամակատար. հրամայեա՛ եղբա՛յր. ծա-ռա՛յ քոյ եմ, եղբա՛յր՝ հպատա՛կ, և ստրո՛ւկ. զի ինձ սիրտ քո և սէր միայն ցանկալի է։

### ԿԱՅԷՆ.

Լռեա՛, և մի՛ ևս խօսիր, ամենայն բանք քո՝ յա-ւելուն զվէր սրտիս։

### ԱԲԷԼ.

Գէթ ասա՛ զի՞նչ է իմ յանցանք.

### ԿԱՅԷՆ.

Չե՛ս յանցաւոր, ահա՛ այն է, ՚ի բա՛ց գնա՛։

# Ադամ, Կայէն և Աբէլ։

## ԱԴԱՄ.

Զի՞նչ վիճէք որդեակք իմ, նախանձ եղբօր առ եղբայր՝ զիա՞րդ փոյթ եմուտ յաշխարհ։ Ձայնը արեան՝ որ զեղբայր ընդ եղբօր կոչէ, տակաւին յարգանդի մօր՝ սկսաւ եղծանիլ, որդւոց ձերոց և թոռանց որք ծնանելոց են, զի՞նչ յիշատակ թողուք. զխաղաղն աշխարհի մեք չթողումք նոցա, յառաջին իսկ աւուր մեք զաշխարհս ընդ մեղք արկաք, որ օր յաւուր աճեցեալ զօրանայ, յորէ անտի ծննդեան՝ մեք լցաք դժոխն։

## ԿԱՅԷՆ.

Հայր, նախատեա՛ միայն զորդի քո զԱբէլ, որ առիթն է իմում բարկութեան, յորէ անտի տանալոյ նորայ յԱստուծոյ զպատիւ, չէ մարթ տակալ ամբարհաւաճութեան նորա։

## ԱԴԱՄ.

Եթէ չճանաչէի զորդիս իմ, հաւատայի քոյդ բանից. ո՞հ կայէն, որդեակ իմ Կայէն, այդ ո՞րպիսի նախանձ է, որ կուրացուցեալ է զաչս քո. Աբէլ յանցաւո՞ր է այնու. զի քեզ ո՛չ նմանի. ե՛կ փոխանակ նախանձու, և դու նման նորա լե՛ր։ Գիտեմ զի պատարագ Աստուծոյ, անդրանիկն է 'ի գոյից, և զլաւն նա ընդունի. մի՛ բարկանար որ քեզ՝ օրինակ առաջի կայ, այլ ուսի՛ր 'ի նմանէ, երկնչիմ զի մի՛ վատթարագոյն վիճակի դիպեսցիս, և այնմ

յայսմ խնկ աւուր. յեզերս խորխորատի շրջեալ, չնկատես զվտանգն: Սաստիկ կատաղութիւն մեղաց, նախ զմիտսն յիմարեցուցանէ, և ծպտեալ կերպարանաւ քաղցր երևի, և զդառնութիւն թունիցն տակաւ տակաւ յայտնէ:

Մինչդեռ առաջի. պայծառ լոյս ունիս,
՚ի կե՛ր ա՛րկ յերկրի. դու զառողջ զմիտս,
և մի՛ խղճալից ճա՛ր յանարգ կերս:
Եկեսցէ թերևս. այլ ևս մթին օր,
զի յօժարութեամբ՝ խնդրեսցես զայս օր,
այլ ո՛չ գտանիցես. զկորուսեալդ այս օր:

ԿԱՅԷՆ·

Որդի՛ս լե՛ր Աբէլ, հպարտացի՞ր, աշխարհ ամենայն հակառա՛կ է ինձ: Տե՛ս ճա՛ց ոք նորածին յաշխարհի, զի որսասցես ինձ թշնամի: Ահա՛ և մի ՚ի նոցանէ է մայր իմ: Ե՛կ մայր իմ, փութա՛ եկ ՚ի թշնամանել զիս:

---

## Եւայ և նախադրեալքն:

ԵՒԱՅ·

Որդեա՛կ իմ Կա՛յէն զի՞նչ խօսիս, դու ինքն ես ոսոխ անձին քում:

ԱԴԱՄ·

Խելքն անչափ տկա՛ր է,
և բժշկիլ չկամի:

Հիւանդութիւն տկար մնաց,
սպեղանեօք ոչ բուժի:
Եւ մեր խրատ օգտակար՝
յայնպիսի միտս ոչ հանգչի:

ՏԻԱՅ·

Ո՛չ, ես յուսամ, զի կայէն զբնութիւնն փոխեալ, ոչ միայն ՚ի մեղս: Եթէ զճանապարհ մեղաց ուսաւ ՚ի մէնջ, և զեղանակ դարձին ուսանի ՚ի մէնջ: Ե՜կ որդեակ իմ, ե՛կ առիս, և մի՛ ՚ի դերև հաներ զյոյս սիրելի մօր քո: Ցո՛յց զնշան դարձի. և կրկին սիրեա՛ զեղբայրդ, և յապացոյց սիրոյ, մատո՛ նմա զհամբոյր: Եկա՛յք երկոքին իսկ ՚ի գիրկս իմ, զի հաշտեցուցից զձեզ: Եւ՚ այնու գիտասջիք, թէ յերակունս երկոցունցդ տարածեալ արիւն. ՚ի միոյ յաղբերէ է: Ե՛կ կայէն, ե՛կ մերձեա՛ Աբէլ:

ԱԲԷԼ·

Ահա՛ եկի. . . .

ԿԱՅԷՆ (յ—ն)·

՚Ի բա՛ց գնա՛, այդ ոչ լինի:

ՏԻԱՅ·

Վա՜յ ինձ վա՜յ, զի՞նչ է այդ փոխանակ մերձենալոյ ՚ի բա՜ց փախչիս:

ԿԱՅԷՆ·

՚Ի զո՛ւր են ջանք քո մայր, ունայն վաստակիս:

ՏԻԱՅ·

Ջա՛նք իմ ՚ի զո՛ւր են հա՜: Ա՛յս էր իմ յոյս առ քեզ, արտօսր մօր քո որ տեսեալ զորդիդ ՚ի

փափագի, աղաչէ զքեզ, չարչէ՞ ինչ. եկ որդեակ վասն կաթին՝ զոր դիեցեր 'ի ստեանց իմոց, և երկանցն՝ որ զառաջինն վասն քո կրեցի. էջ 'ի հպարտութենէդ ։

ԿԱՅԷՆ.

Բարի է, այդպէս եղիցի ։

ԵՒԱՅ.

Դաս տալիս որդեակ՝ ուրախացուցեր զիս, արտասուք իմ ոչ հեղան 'ի զուր, հազիւ սկսաւ երեկ կայ եղբայրութեան. և ահա ճանաչեմ զի որդիք իմ էք. ահա 'ի սմանէ նկատեմ թէ յորդէք ըղձայր ձեր ։

ԱԴԱՄ.

Աստուած տայ, բայց, ո՞հ․․․․․

ԵՒԱՅ.

Վասն է՞ր կասկածես ։

ԱԴԱՄ.

Երկնչիմ, չգիտեմ վասն էր, անզգամիդ սուս հաշտութիւն, դուցէ պատրող կեղծիք էր՝ թէպէտ պչէմս՝ հաշտ ցուցանէ, այլ 'ի ներքուստ զերթ խալող ծով զալիսն 'ի խորս պահպանէ. անարգ ծնունդ հպարտութեան, ամէն ախտից աղբիւր է. իւր բնութեան խիկ հակառակ, անդէն անձայն թըշնամի՝ է ։ Ո՜վ զազրալի ախտ հոգւոյ, մարդկան ազգի սպառող, որպէս ժանիկն երկաթոյ. և դու մարդոյ ես մաշօղ, դու նման ես բաղեղան, զի յոր պատ և պատառես, մաշես զնա 'ի կործան ։

Հրով սիրոյ դու Ա՛ծ, ՚ի թունաւոր յայս աշխարհ,
Պահեա՛ զքոյդ զհաստատուած. դու խնկանոց ինքդ եռ սէր.
Եւ որք զնոյն ունիցին. ընդ քե՛զ լիցին միո՛յն Տէր։

---

## ԱՆՑՔ ԵՐԿՐՈՐԴ։

—

## Կայէն և զէնի Աբէլ։

### ԿԱՅԷՆ.

Օ՛ն անդր, այլ ո՛չ ես տպաւեմ, զեղբայրն իմ մահու մատնեմ, որչափ և հաստատ իցէ սիրտ իմ ընդ նմա. չկարեմ տոկալ, բարերարծն հակառակ է իմում բնութեան, զճշմարտութիւնն մատնեցից բռնութեան, բարձից յերկրէ զնորա կեան, և ահա գայ, զնախանձս ՚ի ներքս թագուցեալ, ծիծաղ զդէմս ցուցից, և պատրելով զանփորձ տղայն, զեղձ իմ սրով լցուցից. ո՜հ սիրելի եղբայր իմ։

### ԱԲԷԼ.

Փառք Աստուծոյ, զանուն եղբօր լսեալ ՚ի քէն ուրախանամ յանձն իմ։

### ԿԱՅԷՆ.

Աբէլ. ես կերպարանափոխ եղէ, յետ այսորիկ չէք յիս նախանձ և ատելութիւն, զղջացայ յանկարգ ատելութենէ, ե՛կ եղբայր իմ, երթիցո՛ւք ընդ քեզ ՚ի դաշտ, և ցուցից թէ որչափ ապշեալ յիս, յան-դիմանութիւն հօր իմոյ։

ԱԲԷԼ.

Յայսմ հետէ՝ յուսամ 'ի Տէր,
զի յիմ զոհ ո՛չ չարակնես,
Աստուծոյ հաճոյ մատաղ. դու միայն
զքեն չասասցես.

ԿԱՅԷՆ.

Զի՞նչ խորհուրդ տաս ինձ, փոխանակ մեղայս՝ կամիմ այսօր զմի զոհ մատուցանել:

ԱԲԷԼ.

Ե՞րբ.

ԿԱՅԷՆ.

Զկնի սակաւ ժամու:

ԱԲԷԼ.

Ո՞ւր տեղ:

ԿԱՅԷՆ

Ահա՛ անդէն 'ի գլուխ արտին:

ԱԲԷԼ.

Պատրա՛ստ է զոհն:

ԿԱՅԷՆ.

Պատրաստ:

ԱԲԷԼ.

Աստուած ընկալցի 'ի հաճոյս իւր զքոյդ զոհ:

ԿԱՅԷՆ.

Կարի՛ սիրելի է նմա.

ԱԲԷԼ.

Զի՞նչ է այն:

ԿԱՅԷՆ·

Յետոյ լսես :

ԱԲԷԼ·

Ո՛հ եղբայր իմ ներեա ինձ գալ ը՟ քեզ :

ԿԱՅԷՆ·

՚Ի հարկէ, և դու պարտիս գալ,

ԱԲԷԼ·

Ապա մ՟ էր. յապաղես, արա՛ զոր առնելոց ես :

ԿԱՅԷՆ·

Այլ ոչ ևս սպասեմ, հրամմէ գնամք :

## Եւայ, Կայէն և Աբէլ :

ԵՒԱՅ·

Ո՞ւր բարեաւ :

ԿԱՅԷՆ·

Յանդն.

ԱԲԷԼ·

Յանդն.

ԵՒԱՅ·

Ապրիք, այդպէս ցանկամ զի սիրեսջիք զմիմեանս, և հաստատուն սիրով ՚ի դերև հանջիք զկասկած հօր ձերոյ :

ԿԱՅԷՆ·

Ո՞ւր երթիցուք·

ԱԲԷԼ·

Ահա գամ· Մ՛նա բարեաւ·

ԿԱՅԷՆ·

Յամեցայք, ժամանակն անցանէ·

ԱԲԷԼ·

Համբեր սա վայր մի, ահա եկի ։

ԿԱՅԷՆ·

Ո՞ւմ սպասես·

ԱԲԷԼ·

Ո՛չ մայր իմ, Մնա բարեաւ ։

ԵՒԱՅ·

Զի՞նչ կամիս որդեակ իմ,
  զի զգերագոյն սէր ցուցանես։
Զձեռս իմ առեալ ՚ի քո ձեռս,
  քնքուշ սրտիդ վերայ դնես։
Յիս հայեցեալ տխուր դիմօք հառաչես,
  երթաս յառաջ մի քայլափոխ,կրկին յետս՚նշնջես։
Զի՞նչ են քո խղճք, զի մեկնել յինէն չզօրես ։

ԱԲԷԼ·

Խաղաղ սրտիւ, բարբառ արեանս զիս յանձնէ·
  խաղաղ հանեալ, զիս ցնորէ· ով երբէք եղեւ չէ ։
Քանի հայիմ ՚ի քոյդ երեսդ,
  աղիքս զնդոս խարշառէ·
Իմ որոշումն ՚ի քէն մայր իմ·
  չգիտէի թէ դառն է ։

# Նուայ և Ադամ.

ՆՈՒԱՅ.

Ո՛հ քաղցրիկ բարբառ սիրելի որդւոյս ։

ԱԴԱՄ.

Զի՞ է, զի լաս Նուայ, երկնչիս գուցէ կեղծաւ հաւատուն անառակ որդւոյդ 'ի վտանգ փոխեսցի.

ՆՈՒԱՅ.

Օ՜ն անեղր ես ուրախ եմ ։

ԱԴԱՄ.

Ուրախ ես և լաս ։ Ուրեմն այր 'ի դէպս ուրախութեան լայ, և եթէ վտանգ ինչ հանդիպեսցի տակաւին լայ. եթէ յուրախական կրից ըմբռնի. Նոյնպէս արտասուք իջանեն յաչաց, նշանակ ուրախութեանց երբեմն ցաւոց կցորդեն . յայսմ աշխարհի զկատարեալ երջանկութիւն՝ ո՛չ ոք եգիտ՝ զի ո՛չ են ։

ՆՈՒԱՅ.

Այո, ես ուրախութիւն մեծ ունիմ, կարծեմ իրաւունս և առ այն ունիմ. արտասուք հեղեալ յաչացս, չեն 'ի վշտաց զի ուրախ եմ. քաղցր լեզու Աբէլի, այսպէս զիս յոյժ շարժեցին, որդւոյդ սէր ձեռն 'ի ձեռն ձեռն, զքեզ անգամ լացուցեն ։

ԱԴԱՄ.

Ընկերացեալ են արդեօք, և ուր գնան ։

ՆՈՒԱՅ.

Յանդն.

ԱԴԱՄ·

Աւա՜ղ

ԵՒԱՅ·

Ո՞վ է։

ԱԴԱՄ·

Երագ հաշտութեն կայենի զփնուլթ կարծիս ինձ տայ։

ԵՒԱՅ·

Ա՜յլ դու՝ զորդի մեր ՚ի սպառ գազան վարկանես ։

ԱԴԱՄ·

Սիրող մեղաց ՚ի սրտէ· չար ևս Ք գազան է,
ընուլ զիւր իղձ չարութ. զանազան զէն գտանէ ։

ԵՒԱՅ·

Ո՜հ պտուղ նախկին յանցանաց մերոց է, որ այդպիսի կասկածանօք զմեզ չարչարէ, մեք մեզէն տանջեմք զմեզ՝ չգիտելով զյարգ ածային գթութեն բնաւ զո-զորմութն նո՛ր մեզ վիշտ համարել, առաջին թշնամիք մեր մեք լինիմք ։

Յաւուրց անտի նախկին մեղաց՝
պատճառք վշտաց մեր անձին։
Ի խորհուրդ մեր և ՚ի միտս՝
տեղակալեալ պահպանին ։
Դահիճ մնաց է նոյն ինքն·
որ անխնայ չարչարէ։
Հազար ցաւօք վշտագնեալ՝
յամէն կուսէ խոցոտէ ։

Երբեմն հոգք բարի դիպաց՝
  երբեմն երկիւղք զրկանաց:
Պատկերացեալ առաջի՝
  Մեան հանդէպ երեսաց:

ԱԴԱՄ·

Թէպէտ զխօսացն· բայց երկնչիմ, ո՞հ, ի վայր իջանել չկարեմ:
Զի յորմնել զորդւոյս ուղի· ՚ի ընմռէնս ստիպիմ:

---

# Ադայ և Կայէն.

ԱԴԱՅ·

Ո՛հ յաշխարհի աստ ուր՝ աքսորեալ եմք չգտանի ուրեք հանգիստ բայց միայն յԱԾ: Կայէն չէ՞ նա որ գայ· զկարգ այսմիկ փութով դարձաւ· Եւ միայնակ գայ, Հայեաց յերկչոտ յաչս նր, որ յածի զեւրև, վա՜ էր արդեօք այնպս լեղապատառ վազէ, յամէն հողմոյ շնչել երբ տերևք շարժին, նա երկիւղիւ յետս հայեցեալ շաւաղնի: Որդեակ իմ Կայէն· ո՛ւր, մի՛ փախչիր, ոչ ծանեա՞ր զիս, ո՛չ ապաքէն ես մայր քո եմ, զի՞նչ է այդ քո հող:

ԿԱՅԷՆ ջոթ·

Ո՛հ ուստի՞ հանդիպեցաւ·

ԱԴԱՅ·

Մեռայ որ դեռ՛մ, վա՜յ ինձ, վա՞ էր կարմիր են ձորձք քո արիւնաթաթաւ, ո՞ւր է Աբէլ· ընդէ՞ր չխօսիս

ո՛վ անգութ․ զի՞նչ արարեր՝ կամ զի՞նչ գործեցեր լուեա՛լ լուեա՛լ, մի՛ խօսի՛ր, արիւնդ այդ ծանոյց ինձ ։ ո՛հ որդեա՛կ իմ․ ո՛հ անուշ զաւակ, Աւա՛ղ… Ա՛ծ… ո՛հ, մեռանիմ ։

## ԿԱՅԷՆ (յ-ծ)․

Ցորչափ ուշաթափ է, ես հեռացայց աստի ։

---

# Հրեշտակ և Կայէն:

## ՀՐԵՇՏԱԿ․

Կայէ՛ն ու՞ր է եղբայր քո․

## ԿԱՅԷՆ․

Զի՞ հարցանես ինձ զեղբօրէ իմմէ, մի՛ թէ պահապան նո՛ր իցե՛մ ։

## ՀՐԵՇՏԱԿ․

Զի՞նչ գործեցե՛ր դու ո՞վ անզգամ․ միթէ և քո ջանաս ծածկել զգործդ․ որում և անգործք մարդկան յայտնի են, նա զա՛մ ինչ գիտէ և լսէ, բողոք արեան անմեղ եղբօր քո բարձրացաւ յաթոռ Տ՛ն զօրութ՛ց, զի՞է զի՛ գործեաց եղբայր քո Աբէլ․ միայն նախանձեցար դու ը՛ այն՝ զի Ա՛ծ ընկալաւ զզոհ նո՛ր․ բայց անմեղելի յանցանք էր, այնու պատճառաւ սպանանել զնա․ երթ յաւաշերտն իւ՛ր երկրի․ զոր ոտնեցեր արեամբ եղբօր քո․ կաց տրտում, տխուր և անմխիթար, առակ աշխարհի ։

## ԿԱՅԷՆ

Ո՛հ զի՞նչ լինելոց ինձ· Նզո՞ւք անձին իմոյ· այս ինչ դառն վիճակէ· Ա՛ծ անարգէ զիս, 'ի վ՛ր երկրի երերեալ և տատանեալ շրջելոց եմ ։ Ո՛հ երանի թէ կարէի ծածկել զիս 'ի լուսոյ տունջեան, ա՛խ երանի թէ որ դիպեսցի ինձ 'ի լերինս կամ 'ի դաշտս դահիճ եղիցի անձին իմոյ ։

## ՀՐԵՇՏԱԿ·

Ո՛չ, ո՛չ, մի՛ երկնչիր յայսմանէ· թէպէտ բազմիցս զդահիճ խնդրես· այլ մի՛ յուսար· զի ո՛չ գտանես· անզգամաց երկար կեանք՝ մեղաւորաց են խրատք ։ Բայց դու 'ի խիղճ քոյոյ մտաց՝ կեցցես երկար ո՛չ մեռցիս, բայց չար ևս քան 'ի մահ, ի քում խղճէ տանջեսցիս ։ կեցցես· կեցցես և մի՛ մեռցիս· բայց զրաջան քոյով քրտամբք, շատ վաստակելով քեզ կերիցես ։

## ԿԱՅԷՆ·

Վա՛յ ինձ վա՛յ· ո՞պաւմ՝ սոսկալի վիճակի դիպեցայ՝ չէի արարած որ խապառնալեաց՝ Արարչին զիս պահեցէ· փախեայց... ո՛ւր... զի՞նչ օգուտ 'ի փախստենէ, դահիճն 'ի ներքս իմ է, ծունկք իմ կթուցեալ, ոտք ո՛չ ևս յառաջ ընթանան ։

## ԵՒԱՅ·

Ուր ես...

## ԿԱՅԷՆ [illegible] ([illegible])։

## ԵՒԱՅ·

Որդեակ իմ Աբէլ·

### ԿԱՅԷՆ ցած·

Ո՛հ լուր այդ անուան, ՚ի խոր զիս խոցոտէ ։

### ԱԴԱ·

Ո՛ անագորոյն գազան· ո՛ւր է, զի՞նչ արարեր, տո՛ւր ինձ զորդին իմ Աբէլ ։

### ԿԱՅԷՆ·

Աւա՜ղ ո՛հ· և դու զսիրտ իմ խոցոտես, ո՛հ մայր իմ հերի՛ք է·

### ԱԴԱ·

Մա՛յր կոչես զիս· և ո՛ւմ մայր եմ· լոյս երկուց աչացս, մինն մեռեալ, և միւսն արիւնաթաթաւ, արիւնոտն առաւել կսկծալի է· քան զմեռեալն ։

### ԿԱՅԷՆ·

Աղաչեմ՝ այլ մի՛ ևս խօսիր ։

### ԱԴԱ·

Ո՞չ զօրեցին ձեռք քո, խմորմորուած վերջին շնչոյն ո՞չ ճմլեցաւ սիրտ քո, և ո՛չ դողացին մատունք քո յայնմ՝ սոսկալի պահու, ցուրտ քիրտն ո՛չ եկն յանձն քո և ոչ ածեր զմտաւ, զաշխատութի հօր և մօր քո ։ Յայսմհետէ, զերախտագիտութի· զհաւատարմութի, և զեղբայրսիրութի· առ ո՛վ և ո՛ւր պա՛րտէ գտանել ։ Խղճալի հա՛յր, վշտակի՛ր մայր, բե՛ր զսիրտ որ զխածսայ ։

### ԿԱՅԷՆ·

Բաւ է· բաւ է, ես գիտեմ·
և զիմ վիճակ ճանաչեմ ։

Ընցեա՛ն զիս չարչարէ·
՚ի ներկայիս հուր այրիմ։
՚Ի յապառնեաց որք գայցեն·
ես երկուցեալ սարսափիմ։
Յամմէն մարդիկ որք դիպին·
զպատիժ չարեացս տեսանեմ։
Օ՛ հրեշտակս և զմարդիկ·
անձինս դահճից փարկանիմ։
Աստուած օգնել չկարէ՝
կամ թէ կարէ չկամի՝
՚Ի նմանէ յոյս չունիմ՝
մեղքս զգթութն զանցանէ։
Օ՛ ծանրուն մեղանացս՝
իմ առաջի տեսանեմ։
Եւ զոր պարտ է ինձ առնել·
անուսուցիչ ես գիտեմ։
Այլ ո՛չ մերժումն յաստուծոյ·
և ո՛չ զգութ աղերսեմ։
Եւ ոչ զյոյս եդեալ ՚ի միտ՝
դարձի աւուրս սպասեմ։
Խիղճս անհանգիստ զիս չարչարէ·
ո՛չ դուլ տուեալ ո՛չ դադար։
Մեղային ժամ էա՛նց գնաց·
այլ չլինի օգտակար։
Կարծ և զղջումն և արտասուք·
երբ ժամանակն անցանէ։
Չօգտէ բնաւ մեղուցելոյն·
և զհոգին ո՛չ մաքրէ։

# Եւայ և Ադամ.

## ԵՒԱՅ.

Սուտ է սուտ. աներկիւղ կայ, որչափ և ծանր իցեն յանցանք մեր, գիտեմ զի ողորմունի Տ՟ն տուեալ է, տես զանդգամդ, զի և լսել չկամելով ելեալ գնայ, վա՜յ, վա՜յ. զի՞նչ է այն, Ադամ. ո՛հ. մեռայ. զի՞նչ է այդ բեռն. Ը՛ ոլով հեծես. չէ՞ այդ մարմին անմեղ որդւոյս Աբելի. վա՜յ զիարդ կերպարանափոխ է եղեալ. ո՛հ սիրելի որդեակ, արիւնախանձ կերպ եղբօրդ, ո՞չ զքեզ այլագունեցին. վա՜յ, ուլուն, ուլուն կաթիլք արտասուաց՝ խառնեալ ը՛ արեան և փոշւոյ տակաւին 'ի կարմիր յայտոդ վտակ վտակ երևին. Ո՛հ. որդեա՛կ իմ, 'ի յետին շունչդ. երբ քաղէին ոգիք քո, զմայրդ արդեօ՞ք կոչեցեր թէ զհայր. 'ի գիրկս ն՛չ առանդեալ զոգիդ: զարթի՛ր Աբէլ զարթի՛ր սթափեա՛ 'ի քնոյդ որդեա՛կ իմ ազնիւ. Ա՛հ 'ի վ՛ր քնքուշ անձին հազար վէրք. յոմանց բոսորաներկ արեան հոսի, և ոմանք 'ի կապոյտ գոյն երևին, քանի զաչս իմ 'ի նա դարձուցանեմ. զա՛յն չարչարանս ն՛ր առաջի աչաց նկարեմ. ծանր յանցանք անզգամ որդւոյս, և իմ եղկելի վիճակ զիս խայտակթուցանեն: Ո՛հ. այս ո՞չի անզգամութի է. ո՛հ ո՞չի արիւն. և ո՞չի մահ է.

Սիրտ այսպիսի վշտաց դիպեալ
Եթէ զցաւ չիմանայ,
ո՛չ մեռցէ՞ն, այլ գուլ պիտի երկաթեայ,

Երկիր անգամ երերեալ.
 արեւ լուսին խաւարին ։
Յայսպիսի սոսկալի դէպ,
 եթերք երկնից սարսափին ։

## ԱԴԱՄ.

Լա՛ց եւայ լա՛ց. արժան է լալ՝ գիտե՟մ զի զմահն ո՛չ արար Ա.Ծ, ը̄ որում նա չկամի զմահ արարածոց իւրոց. բանք և խորհուրդք անհնազանդ ծառայից զմահն յաշխարհ հրաւիրեն. զորոյ զառաջին ճանա-պարհ, և զդուռն մեք բացաք ։

## ԵՒԱՅ.

Արդա՛րև ճշմարիտ խօսիս, զայս անողորմ վիշտս մեք մեզէն գտաք. և զոր մեզ արժան էր կրել՝ անմեղն Աբէլ կրեաց. յանցանք Աբէլի միայն ան-մեղութիւն էր. Ո՛հ Ա.Ծ, զիա՟րդ համբերես. երբ ան-մեղք ո՟չ զյանցաւորս դատին ։

## ԱԴԱՄ.

Յայս սքանչելի գործ. թերևս ծածկեալ խորհուրդք ին̄ պահպանին. զհրաշս որք լինելոց են յանցանել դարուց և ժամանակաց, իբրու զարեգակն ծածկեալ ը̄ ամպովք տեսանեմ, եկ Եւայ եկ ձեռամբն. որով զմահաբեր պտուղն ինձ մատուցեր բա՛րձ ՚ի վե՟ր վշտա-կիր ուսոյս զմիրմին որդւոյ իմոյ, և տարեալ մերձ այրին, փորեսցուք, զգետինն ձեռամբ, և հանգուսցո՛ւք ՚ի նմ; դո՛ւ անմեղ Աբէլ. դու անմեղ արեամբ քով ազա-տելոցս ես զազգ մարդկան, զօրինակն ՚ի քեզ տե-

սանեմ, երանի Ձեզ Թոռունք իմ. և երանի՜ այն աւուրց, որք զխորհուրդս մոյ կայանի տեսանելոց են։

## ԳՈՒՍԱՆՔ.

Զայն մեռելոյն Աբելի,
  յարիւնոտ աղբերաց գայ.
Օ՜ ծարաւին եղբօր արեան,
  զայս ասելով մեզ ցոյց տայ.
Ամենից ձեռք յարեան է,
  չիք որ յապաշաւ գայցէ.
Ամենայն ոք զմեղս անարգէ,
  բայց չիք որ յետ փախիցէ.
Օ՜ հետ Կայենի բիւր անարգանս,
  ամենայն ոք առաքէ.
Բայց բոլորքն են մէն մի Կայէն,
  չիք որ զանձն իւր ճանաչէ.



# ԶԵՆՈՒՄՆ ԻՍԱՀԱԿԱՅ։

## ԽՕՍՕՂՔ։

Աբրահամ,

Իսահակ,

Սառայ,

Գամար, հասակակից ընկեր'ի Սահակայ·

Հրեշտակ,

Ծառայք,

և

Հովիւք,



Печ. позв. 9. Сент. 1841. г. Ценз. С. Р. Архим. Агапитъ.

# ԻՍԱՀԱԿ։

## Օրինակ Տեառն մերոյ՝

## ԱՌԱՋԻՆ ԱՆՁՔ։

—

## Աբրահամ և Իսահակ

### ԱԲՐԱՀԱՄ.

Լուսոյ որդեակ իմ, յայսմ գիշերի այսչափս բան է, այժմ ժամ է ննջելոյ և հանգստեան ։ Դու սիրահար ուսման, և ես ուսուցանելոյ. գիշերն միջահասեալ է չգիտեմք, այժմ հանգիցուք դոյզն ինչ. և այն կարևոր է մարդոյ, զմնացորդն յայլում ժամու պատմեցից ։

### ԻՍԱՀԱԿ.

Զվէպ վշտացն՝ զոր կրեալ ես,
մինչ պատմեցես ո՛վ հայր իմ,
Զարմանալիք՝ Տեառն հրաշից՝
զորս լուայ հեռանին ։
Յուրախութեանց իմոց մտաց՝
ո՛չ քուն խնդրեմ ո՛չ դադար ։

Սիրահարեալ ՚ի դեղ բանիցդ,
 ցանկամ խօսիլ անդադար ։
Զարմանահրաշ այդ պատմութիւնք,
 այնպէս զսիրտս բորբոքեն ։
Զգոյշ ինձ քեզ վշտակից՝
 զկեանս անգամ անարգեմ ։
Զգողանի անձն իմ հարաւ,
 ընդ ձեր ուղի բազմօրեայ ։
Երբ ընդ մօր իմ թողեալ զխաւան,
 յերկիրն հասիք Գմերարայ ։
Այնպէս ոճով դու պատմեցեր,
 այնպէս ըղձիւ ես լուայ ։
Կարծեմ և զիս լինիլ ը ձեզ,
 յուսադուտ դաշտն Սաղիմայ ։
Ի խիստ սովուն ՚ի մեծ վտանգ,
 երբ դուք կայիք վշտացեալ ։
Գո՛գ առ քաղցին ՚ի գիրկըս ձեր,
 կարծեմ զանձն իմ նուաղեալ ։
Ի գոռ մարտին առ Դամասկեաւ,
 յաղթութիւն քոյդ եղբօր ։
Յաղթօղ զքեզ հանդիպացեալ՝
 գո՛գ տեսանեմ ՚ի Սեգօր ։
Մտաբերեալ զոր ՚ի բանիդ,
 զՏեառն առ քեզ զխոստմունս ։
Ինձ պատմեցեր զուխտն իւր ընդ քեզ՝
 յանհուն մատնիմ սարսափմունս ։
Որով ամայ քոյդ երջանիկ՝
 ինձ ցանկալի ուսումն են ։

Ա՜խ քոյդ դիպուածք զարմանալիք·
 այր կատարեալ գիս առնեն ։
զԱնհաս խորհուրդս Ա՟ծայնոս,
 այս հըրաշից ընդ քողով ։
Ես գուշակեմ անշո՛ւշտ լինիլ,
 զերթ արեգակն ընդ ամպով ։
Աստ աստ շընորհաց ձիրք·
 զոր անագահ տուեալ է։
կՏեառն առ քեզ, և քոյդ առ Տէր·
 հաստատուն սէր գուշակէ։
Ո՜հ սիրելի հայր իմ գիտե՞ս.
 թէ 'ի սիրոյն Աստուածեան։
Ես ո՞ր անճառ մտաբերեմ,
 գոլ 'ի նոսա խորհրդեան։

## ԱԲՐԱՀԱՄ·

Գիտեմ գիտեմ, զի սերմն բանից իմոց, արկեալ 'ի միտս քո՝ իբրև 'ի պարարտ երկրի աճեցին. այլ գիշերն էանց հանգիցո՛ւք դոյզն ինչ։

## ԻՍԱՀԱԿ·

Ո՞հ մոռացեմ զքեզ հայր իմ, սամ միւսանգամ, ծնծաղեցաւ մայր իմ 'ի միտս իւր, զի՞նչ եղև քեզ այսօրիկ ։

## ԱԲՐԱՀԱՄ·

Զկնի սակաւ աւուրց՝ կատարեցաւ խոստումն, և Սառայ յղացաւ ։

## ԻՍԱՀԱԿ·

Ես եմ որ 'ի նմանէ ծնայ։

### ԱԲՐԱՀԱՄ·

Այո՛ որդեակ իմ դու ծնար· ծնունդ քո հրաշք իմն է, զի չորացեալ իմն ծառ, ետ զպտուղ քաղցրահամ։

### ԻՍԱՀԱԿ·

Եւ զինչ խոստացեալ աւետիքն......

### ԱԲՐԱՀԱՄ·

Աւետիք տամ քեզ որդեակ, զի երկիրն յորում կաս դու պանդխտութ̅, եղիցի ժառանգութ̃ի որդւոց քոց, 'ի Նեղոսէ ցգետն Եփրատ· իշխեսցեն նք̃ ։

### ԻՍԱՀԱԿ·

Ապա ուրեմն զորդիս...

### ԱԲՐԱՀԱՄ·

Առաւել քան զաստեղս երկնից,
և քան զաւազ առ ծովափն։
Բազմասցի թիւ քոյդ զաւակաց,
զանցեալ ը̅ համար և ը̅ չափն ։
Աստուած 'ի սէր քոյդ սերընդեան,
զքանչելիս գործեսցէ՞ ։
Իբր յառկացեալ հօտի իւրոյ,
զանչափ 'ի ճամբս ցուցցէ։
Յաղթէ մեղմէ անթիւ իշխանք,
նաև արքայք յայտնեսցին ։
Ամէն աշխարհ 'ի մեր պատճառս՝
երջանկութեան դիպեսցին·

### ԻՍԱՀԱԿ·

Վա՜շ, վա՜շ, քաղց ո՜րքն երջանկուն է, երանի՛ է ինձ…

### ԱԲՐԱՀԱՄ·

Մի՛ որդեակ իմ.

Կարճ փափաք երջանկութեան.
և առաւել խնդութիւն,
բազմիցս զմեզս ծնանին.
և զանթողլի չարութիւն։
Նորք ՚ի միտս խինդն յաւելու,
ծընանի օձ դառնութեան,
հպարտութիւնն զբաղդի տուրս,
չտայ վայելել մարդկութեան։

### ԻՍԱՀԱԿ·

Ո՜ն անդր, ՚ի միտս իմ, չի՛ք տեղի այն օձի, բայց տակաւին զգոյշ լինիմ, զի մի՛ յանդգնաբար ըմբռնեցայց ՚ի նմանէ, Հա՛յր դու այդու ուսմամբ երկիւղ արկանես ՚ի սիրտ իմ։

### ԱԲՐԱՀԱՄ յ–ծ·

Ո՛հ· ցանկալի երկիւղ, ո՜հ հիմն ամ իմաստութն։

### ԻՍԱՀԱԿ·

Զլուա՛ր Հա՛յր, եթէ սխալեցի ինչ, ո՛հ մեղայ, աղաչեմ զքեզ խնայելով յիս՝ դու մի՛ վշտանար, յերկիր անկեալ զոտս համբուրեմ։

### ԱԲՐԱՀԱՄ·

Մի՛ երկնչիր որդեակ իմ, բանք իմ զոր խօսեցայ առ քեզ, ո՛չ թէ յանդիմանութի այլ խրատք են,

այդ քո տխրուն ինձ մեծ յոյս է, ե՛րթ որդեա՛կ ի
ե՛րթ բոլոր կեանք քո եղիցին իբրև զայս օր ։

### ԻՍԱՀԱԿ.

Զանմեղ հոգիս՝ թէ տեսանես,
աղտով մեղաց ժանդահար ։
Մի՛ խնայեր՝ միակ որդւոյդ,
զանփորձ հասակս սանձեա՛ Հա՛յր ։
Ցո՛յց ճանապարհ, յոր անսայթաք,
գընալոց եմ յամէն օր ։
Արգել զուղին, զոր քեզ և Տեառն՝
են հակառակ, և խո՛տոր ։
Կարի ցանկամ ես մեռանիլ,
քան յախտաւոր կեալ 'ի կեանս ։
Զհայրական պարտուց վճար,
այնու միայն դու ինձ տաս ։

---

## Աբրահամ և Հրեշտակ.

### ԱԲՐԱՀԱՄ.

Ո՛հ Ա՜ծ իմ, զոր գոհութիւնս
քեզ մատուցից ո՛ր հոգւով ։
Որ յալևոր իմ հասակի.
խնդացուցեր զիս որդւով ։
Բայց զմիակ զայս իմ որդի,
ինձ սիրելի քան զկեանս ։
Որ 'ի վերջին աւուրս սահման,
մատուցանէ ինձ հրճուանս…։

Զի՞նչ է այդ լոյս զոր տեսանեմ, արեգական արդեօ՞ք, օ՞ն անդր, լոյս արեգական չկարէ լինել· այդպէս ճառագայթաւէտ, ո՛հ խնայեա, խնայեա, զլուսադեղ նկատուրդ՝ 'ի ճաճանչիցն ծանեայ ։

## ՀՐԵՇՏԱԿՆ·

Աբրահամ, Աբրահամ,

## ԱԲՐԱՀԱՄ·

Ահաւասիկ եմ Տէր,

## ՀՐԵՇՏԱԿՆ·

Անդարձ հրաման է Արարչին, առ դու զորդիդ քո միածին, զոր սիրեցեր զԻսահակ, և հա՛ն զնա 'ի վերայ միոյ ուրուք լերանց, կամ 'ի վ̄ր բլրոց յորոց ասացից քեզ, և անդէն քոյով ձեռամբ՝ զէն զնա Տեառն պատարագ ։

Զանմեղ որդիդ՝ և զանփորձ՝
 խնդրէ 'ի քէն պատարագ։
Զամբիծ արիւն՝ միակ որդւոյդ,
 Տեառն ընծայել լե՛ր արագ ։

## ԱԲՐԱՀԱՄ·

Ո՛վ Ած իմ, զի՞նչ են այս բանք,
 զի՛նչ այս պատգամք նորալուրք ։
Զի՞նչ այս սաստիկ առ իս հրաման,
 և զի՞նչ ահեղ որոտմունք ։
Զմահ որդւոյս կնքէն խնդրես,
 ո՛չ սատարայ իմ՝ ձեռօք.

Եւ ընդ նմին զկիրս հոգւոյն,
 ինձ աղդ առնես արհաւրօք ։
Որովք անբոց՝ մինչև ցայսօր
 կիզեալ 'ի հուր ջեռանիմ ։
Մտաբերեալ զանցեալ աւուրս,
 նոր նոր փշովք խոցոտիմ ։
Գո՛հ եմ զքէն իմ Արարիչ,
 զորդիս խնդրես քեզ 'ի զոհ ։
Քեզ մատուցից Տէր իմ Աստուած,
 կրկին եղէց զքէն գոհ ։
Այլ ասա՛ ինձ անսուտ բնութիւն.
 միակ որդիս երբ մեռցի,
Նախկին խոստումնդ ընդ ներկայիս՝
 ո՛չ հակառակ դիպեսցի ։
Ո՞ն անդր ո՛չ կարծեմ ես մարդկօրէն,
 քո ս՟բ պատգամք ո՛չ ստին ։
Այլ խորհրդոցդ զաղտնածածուկ,
 որդիք մարդկան տգէտ են ։
Ուստի մնայ ինձ միայնակ՝
 հրամանացդ կալ հլու ։
Զի կասկածել զքոյդ հրաշից՝
 ինձ յանցանք են անթողլի ։
Զհաւատս առ քեզ հաստատ պահեմ.
 զյոյս երբէք ո՛չ թիւրեմ ։
Ըստ ամենայն քոյդ պատգամաց՝
 զվճիռդ անշուշտ կատարեմ ։
Այլ սոսկալի յայնմ պահու.
 եթէ բազուկքս դողասցին ։

Դու լե՛ր ընդ իս տալ զօրութիւն.
Իմ միայն յոյս ապաւէն ։
Ըստ որում մա՛րդ իմ հողածին.
Դահի՛ճ որդւոյս միածին,
Գուցէ անկցի սուրն ՚ի ձեռաց՝
Առ չտանիլ այն վշտին ։

Ուք են այդր. մանկունք.

---

## Գամար, Աբրահամ.

### ԳԱՄԱՐ.

Աւասիկ իմ Տէր,

### ԱԲՐԱՀԱՄ.

Գնացէք. ա՛խ յարուցէք զԻսահակ ՚ի քնոյ և համբ-տեցէք զէշն. և ՚ի ձէնջ երկու անձինք եկա՛յք ընդ իս ։

### ԳԱՄԱՐ.

Եղիցի՛ ըստ բանի Տեառն.

### ԱԲՐԱՀԱՄ.

Լուարո՛ւք ինձ.

### ԳԱՄԱՐ.

Հրամայեա՛ Տէր.

### ԱԲՐԱՀԱՄ.

Մի՛ ազդ առնէք Սառայի զի մի՛ քնաթափ լիցի ։

---

# Աբրահամ, Սառայ.

## ԱԲՐԱՀԱՄ յ—ծ.

Զմիակ որդին համեալ 'ի գրկաց պառաւեալ մօրն՝ տանիմ 'ի զենուլ, առանց ազդ առնելոյ նմ, զի մի վշտասցի, և ահա՛ գայ զինչ տաց հարցման նորայ պատասխանի։

## ՍԱՌԱՅ.

Զինչ է պատճառն զի այսօր, վաղ յարուցեալ ես 'ի քնոյ։

## ԱԲՐԱՀԱՄ.

Զոհ ամբիծ Տեառն իմ,
կամիմ այսօր ես զոհել։
Զճարակ հրոյ՝ զցախս կամ փայտ.
իմով ձեռամբ ժողովել։
փութամ զի մի յամեցայց, Մնա՛ բարեաւ։

## ՍԱՌԱՅ.

Հա՛, և ես և ես գամ.

## ԱԲՐԱՀԱՄ.

Յայս նուագ դու մի գար ընդ իս։

## ՍԱՌԱՅ.

Ամէն վշտացդ. և հրճուանացդ՝
ես բաղդակից գտեալ եմ։
'ի ժամ խնկոց, պատարագաց՝
ես անհաղորդ մնայցեմ։

## ԱԲՐԱՀԱՄ (յ-ծ)·

Ճշմարիտ խօսի, զի՞նչ ասասցից· բաւ չէ զբանն 'ի խա-
պառ ծածկել. զի մի՛ յաղագս որանջիցէ, յայտ-
նեցից զխորհուրդս՝ (մանկունք. ու փոյր մի 'ի բաց
գնացէք։) Ա՛ծ իմ, տո՛ւր զօրութիւն լեզուի իմում։

## ՍԱՌԱՅ (յ-ծ)·

Զ՛ինչ կամի խօսիլ առանձին ։

## ԱԲՐԱՀԱՄ·

Սա՛ռայ, յուսամ զի դու զանչափ երախտիս Արար-
չին չիցես մոռացեալ ։

## ՍԱՌԱՅ·

Մա՛րթ ինչ իցէ արդեօք մոռանալ ։

## ԱԲՐԱՀԱՄ·

Գո՞հ ես զնմանէ·

## ՍԱՌԱՅ·

Աստուած ճանաչէ զխորհուրդ իմ ։

## ԱԲՐԱՀԱՄ·

Իսկ եթէ ապա՛ցոյց ինչ խնդրիցէ գոհութեան քում ։

## ՍԱՌԱՅ·

Զոր ինչ խնդրէ,
կա՛մ հնազանդ գտանիցէ·
Զ՚կեանս անգամ թէ խնդրեսցէ·
ո՛չ խնայեմ ես նմին ։

## ԱԲՐԱՀԱՄ·

Եթէ զորդին խնդրեսցէ՞·

ՍԱՌԱՅ·

Զիսահա՛կ·

ԱԲՐԱՀԱՄ·

Այո՛ զԻսահակ,

ՍԱՌԱՅ·

Թէպէտ յանձինս՝ զցաւ սաստիկ՝ ես զգամ,
Այլ որ եմ ինձ, նմ՝ զորդիս իմով կամաւ՝ ընծայ տամ։

ԱԲՐԱՀԱՄ·

Ե՛կ ուրեմն տո՛ւր։

ՍԱՌԱՅ·

Մի՞թէ խնդրէ՞

ԱԲՐԱՀԱՄ·

Խնդրէ, զի այսօր իմով իսկ ձեռօք զենից զնա նման պատարագ, այս է անդարձ հրաման Արարչին.

ՍԱՌԱՅ·

Զի՞նչ խօսիս Աբրահամ, և ո՞ւր մնայցէ խոստումն բազմանալ որդւոց նո՛ր իբրև զաստեղս երկնից, և իբրև զաւազ առ ափն ծովու. եթէ մեռցի որդին, ուստի՞ այն լինիցի.

ԱԲՐԱՀԱՄ·

Պատճառն ինչ է չգիտեմ,
միայն այս է հրամանն։
Հնազանդիլ մեզ վայելէ.
'ի գլուխ տանիլ զնորա բանն։
Զոր ինչ ասէ Ամենագութն,
ամենեքեան բարի են։

Զպատճառ գործոյն, մեզ հարցանել,
աններելի յանցանք են ։

ՍԱՌԱՅ·

Նա այդպէս յետ սակաւ ժամուց, մեռանելո՛ց է Իսահակս ։

ԱԲՐԱՀԱՄ·

Այո՛, 'ի տեղի ողջին՝ զբոլոր արեանն հեղլոյ է ։

ՍԱՌԱՅ·

Ձեռամբ հօ՞րն·

ԱԲՐԱՀԱՄ·

Այո՛՝ այո՛՝ հօրն ձեռամբ՝
այն ամբիծ ողջ մատուսցի ։
Նա քոյդ Սա՛ռայ՝ եթէ խորհուրդ՝
հաղորդ լինել հաճեսցի ։
Քեզ գալ յայն վայր՝ չէ՛ ինչ պիտոյ,
զնոյն և ես չկամիմ ։
Այլ մայրական քով գթութ՛,
միտքդ ընդ ձեռաց պաշտեսցէ ։
Կա՛ց դու բարեաւ՝ մեք գնասցո՛ւք,
Սահակայ ինչ մի՛ յայտներ ։
Նա զայն խորհուրդս՝ կամաց կամաց՝
հանեմ նմա 'ի յերև ։
Վ՝ան է՞ր հեղան այդ արտասուք՝
'ի քոյդ աչաց գետօրէն ։
Մի՛ առներ զայդ՝ քա՛ղցր ամուսին·
դու զայդ բնաւ մի՛ առներ ։

Դու եկն տատրակ. Նորաշէն լճիկ՝ հլու կամարար,
  զհրաման նորա՝ զինչ եւ տայցէ՝ ածել ՚ի կատար:
Բանիւ զայն ասել՝ չեաւ է միայն՝ այլ հոգի խոնարհ,
  բայցէ տուաջի՝ մոլորեալ անձանց, զայն ճանապարհ:
Զօրայինք դու՝ քա՛ղցր ամուսին,
  յաղթեա՛ զգթոյ մայրական:
Զամբիծ որդիդ՝ տու՛ր պատարագ,
  աստուծոյն Էութեան:
Զփոխանակն՝ նա ո՛չ խնայէ,
  տալ զբարին՝ եւ զհաճոյն:
Նա լա՛ւ գիտէ՝ քան զոր խնդրեմք,
  զմեր կարեւորն՝ եւ զպիտոյն:
Որդի եւ կեանք՝ ինչք կենցաղոյս,
  ամենեքեան՝ են նորա տուրք:
Մեք զնորայն՝ ՚ի նորայնոց,
  զոր ինչ խնդրէ՝ զոհեսցուք:
Սրբեա՛ զսիրտդ՝ ՚ի տխրութեանց.
  մի՛ տանէր դու՝ ինչ մրմունջ:
Զի քան զամէն՝ զոհ ողջակէզ,
  զսիրտ խնդրէ՝ անտրտունջ:
Զի որք զենուն՝ Տեառն ողջակէզ.
  զայլոց արիւն՝ տան ընծայ:
Այլ որք կամաւ՝ զիւրն տանին,
  ՚նոյա եւ սիրտն՝ է ընծայ:

## Սառայ, Իսահակ և Գամար:

ՍԱՌԱՅ·

Ուրեմն զինի սակաւ ժամու, խղճալի մայր Սահակայ, այլ ևս ոչ է կոչելոց մայր: Ո՞հ, այն երախտապէտ սիրտ զբոլոր արիւնն հեղլոյէ: Ո՛հ, այն սուր, այն մահաբեր սուր, արդէն զինքս վիրաւորէ, և ես նախ քան զորդիս զոհիմ: Ո՜վ Աստուած յաւիտենական, ընկա՛լ զկեանս սրտի իմոյ, որ չէ ինչ ընդհատ քան զայն պատարագ·

ԻՍԱՀԱԿ·

Մա՛յր ջան·

ՍԱՌԱՅ (յ-ի)·

Ո՞ւր յաւաքեր անուն:

ԻՍԱՀԱԿ·

Ո՞ւր է հայրս· գիտե՛ս զտեղի նորա: Երթամ փութով գտանել զնա:

ՍԱՌԱՅ·

Ե՛կ ինձ, մի՛ երթար (Աստուա՛ծ իմ զօրացո՛ զիս)։

ԻՍԱՀԱԿ·

Կարծեմ չգիտես, զի մեք այսօր զզոհ ունիմք, և 'ի սեղանոջ զոհին ես ևս պարտիմ գտանիլ:

ՍԱՌԱՅ·

Լուա՛յ, լուա՛յ, գիտե՛մ·

ԳԱՄԱՐ·

Իսահակ՝ ո՜ւմ ճնաս, հայրդ կոչէ զքեզ:

ԻՍԱՀԱԿ·

Ահա՛ գամ, սիրելի՛ մայր իմ, մնա՛ բարեաւ:

ՍԱՌԱՅ·

Մի՛ գնա այսպէս թողուր, կա՛ց առ վայր մի· (յ-ե)·
Զի ո՛չ ես կարեմ համբերել՝ մեռանիմ:

ԻՍԱՀԱԿ·

Վասն է՞ր խռովիս մա՛յր իմ, և զիա՞րդ լաս·

ՍԱՌԱՅ·

Դու երթաս՝ որդեա՛կ իմ, և ես մնամ անորդի:

ԻՍԱՀԱԿ·

Մի՞թէ այս առաջին անգամ է, իմում ուղևո-րութեան, երթամ և փութով վերադառնամ:

ՍԱՌԱՅ·

Այդպէս է՝ բայց այս նուագ· · · ո՞հ՝ գո՞յ արդեօ՞ք յաշխարհի ցաւ, հաւասար իմոյ վշտաց·

ԻՍԱՀԱԿ·

Զի՞նչ է այս Գամար· համարեա՛՝ թէ հրամանաւ հօրս իմոյ ձեռամբ՝ յերկուս ճեղքեմ զսիրտ սի-րելի մօրս· գնայցե՞ս արդեօ՞ք, թէ ո՛չ: Ո՞հ Գամար սիրելի իմ, ՚ի մի՛տ բեր զաւուրսն յորս կացաք ընդ քեզ, եղբայրական սիրով, մինչև բազմիցս քո կուրծք ինձ, և իմն քեզ եղեալ են ննջարան· դու այժմ փոխանակ իմ, մխիթարեա՛ զմայրս, ցորչափ ես չեմ աստ, դու լե՛ր ընդ մօր իմում: Մա՛յր՝ մին-չև ցգալուստ իմ, ահա՛ որդի քո:

ՍԱՌԱՅ․

Ո՜հ՝ այդ զի՞նչ զերագոյն սէր է, զոր ցուցանես ինձ։

ԻՍԱՀԱԿ․

Դու տակաւին լաս, ես զի՞նչ արարից, գիտես զի հրաման է հօրս․ . .

ՍԱՌԱՅ․

Երթ որդեակ՝,
կատարեա՛ զհրաման նորա, զնոյն և ես ցանկամ։ Թո՛ղ սիրտ իմ Տեառնէ կսկծագին, երթ… լո՛ւր… աւա՜ղ, ո՞հ, փարեա՛ զինև որդեակ, զի միւսանգամ համբուրեցից զերեսդ։

ԻՍԱՀԱԿ․

Ողորմագին կոծ քոյ, սիրելի մայր, վշտագնէ զիս, մի՛ լար մայր իմ․ ո՛չ թողում զձեզ, թէ և հեռացայց, տակաւ ընդ ձեզ եմ․ երթամ ո՛չ այլուր, առ հայր իմ երթամ, երթամ և փութով դառնամ ես առ ձեզ։ Հայրս այսպէս ինձ պատուիրեաց, գիտես՝ հնազանդ եմ ես նորա կամաց, երթամ ուսանիմ զտեղի զոհին․ և եկեալ զձեզ տանիմ յայն տեղին։

---

## Սառայ և Գամար։

ԳԱՄԱՐ․

Երեա՛ ինձ՝ տիկին՝ կոչել զքեզ մայր․ մայր իմ, զի՞ խռովեալ ես, զի՞նչ հոգաս․

ՍԱՌԱՅ․

Ո՜հ որդեակ իմ՝ զվիշտ սրտիս,
ես չկարեմ՝ քեզ յայտնել։

Եւ դու ինքն՝ իմ աղէտից,
 չկարես ճշտիւ՝ հասու լինել։
Յարատայայտեալ, դցաւ սրտիս.
 ցաւքս պատրոն՝ տալ դադար։
Դու խոկութեամբ՝ լինել հասու.
 պատրոնս լինել՝ որդւոյ մայր։

## ԳԱՄԱՐ.

Կարծեմ թէ և Աստուած չհաճի ընդ այսպիսի հոլ։

## ՍԱՌԱՅ.

Զմտս Աստուած՝ լաւ ճանաչէ,
 և զխորհուրդս՝ նա գիտէ։
Թէ հակառակ՝ կամաց նորա,
 ո՛չ շարժեցայ՝ յորդանէ։
Աղագ արդ՝ ի խոր սրտէ,
 ես հառաչեմ՝ անդադար։
Նա զպատճառ՝ նոյն գիտէ,
 թէ և լինիմ՝ անբարբառ։
Եթէ վարատեսայ՝ հեղուլ լուսոյ,
 տեսու զգութն՝ Աստուածեան։
Մանկերեալ, բերկրիմ յանձին՝
 կա՛մ զնմանէ՝ գոհաբան։
Այո՝ Տէր իմ. որչափ իմ միշտ յաւելցի,
 միշտ գոհութեամբ՝ տամ քո կամք՝ եղիցի.
Զի զամենայն զոր դու կամիս. ամենեքեան բարի են.
 յօժարիմ կրել զնոսին. ցորչափ զշունչ՝ ես ծծեմ։
Թէ կարասցես իմ Աստուծոյ կրել զայլ միշտ՝ չարաչար,
 կամ՝ նահատակ՝ կրել զնոսին. իբրև ծառայ՝ կամաւոր։

# Գամառ և Հովիւք:

## ԳԱՄԱՌ.

Մանկունք, հովիւք, եկայք և մեք երթիցուք 'ի մխիթարել զանկենն, Մեղուէք, և զո՞ւք լայք. միայն հայեցեալ 'ի քնքուշ սիրտ քաղցրաբարոյ անձանց, չէ պարտ լինել նոցա սրտակից, այլ և առաքինական վարուց նոցա պա՛րտ է նմանել, ո՞րս սէր, ո՞րս տրտմութիւն, և ո՞րս հնազանդութիւն զոր ունանէք, Աստուածային հրամանաւ է: Նորանի մեղ, եթէ զգամք, և վա՞յ եթէ անզգայ մնամք:

Մեզ անօգնական՝ ուղեւորաց՝ են պայծառ արփիք.
 իբրև մոլորակք՝ արփւոյն հետեւակք՝ նմա հետեւիմք:
Ցորչափ նոքա են առաջնորդ.
 ոչ մոլորիմք 'ի յուղւոյ:
Քանի գնան ընդ մեզ՝ ունիմք,
 չկարօտիմք մեք լուսոյ:

## ՀՈՎԻՒՔ.

Ով ցանկալի՝ խոնարհութիւն,
 բարձրացուցիչ՝ ունողաց:
Որ անպատճառ՝ զմարդոյ վարս,
 փոխարինես՝ խոնարհաց:
Մեք չկարծեմք՝ թէ բոյն 'ի քէն,
 գոյ 'ի մէջ սոյն՝ աշխարհի:
Իբրև զքեղ՝ մերձ բարեկամ.
 տարինի՝ սուրբ կենի:
Օ՛ վայրենի՝ զուարդ արմատ,
 որ 'ի սիրտ մեր՝ բուսանիս:

փոյթ հատանես՝ քայլ ձեռամբ.
յայնժամ Յեան՝ նոքա սէն :
Զպտղաբեր՝ ուռս բարեաց.
ընդ նոյն արմատ՝ պատուաստես
Զանպիտան կոճղն. ներեւաթափ
յուռճացեալ ծառ փոխարկես :

---

## ԱՆՑՔ ԵՐԿՐՈՐԴ :

---

### Սառայ և Հովիւք.

### ՍԱՌԱՅ.

Ո՛հ որդեակ իմ, որդեակ սիրելի.
յումմէ զքեն հարցից՝ պատգամ նալելի
Զծառայս հովիւս, զկնի քո առաքեալ.
այլ ո՛չ զմին արդ տեսանեմ, անտի առ իս
յետս դարձեալ :
Զցաւ սրտիս՝ ամենեքեան՝ քաջ գիտեն,
թէ քան զամէն՝ չափ և քանակ՝ զանցանեն :
Ուստի մեկին՝ կան և սպան՝ աղեկէզ.
յերկոց վշտաց՝ կարեկցաբար՝ վառեալ կէզ :
Ո՛հ դու անմեղ՝ հեզ և հանդարտ՝ իմ զառնուկ,
Հնազանդ հօրդ՝ միայնակ յոյս՝ մօրդ խղճուկ.
Թերեւս 'ի սոյն՝ 'ի սոյն ժամու՝ մայելով,
առաջի հօրդ՝ տաս զհոգիդ՝ խառալով :
Ո՛վ դու Աստուած՝ ինձ մխիթար՝ առաղ ո՛հ,
չիք որ տայ ինձ՝ յանկարծական՝ զորդւոյս զոհ :

Արտասուաց ջուրք՝ հեղեալ յաչացս՝ գետօրէն,
  զսեամս տան՝ և զամէն վայրս՝ ողողեն ։
Ալէկոծեալ՝ 'ի վշտաց ծով՝ հողմայոյզ՝
  միտքս յընկղմիլ՝ մերձեցեալ են, և 'ի սոյզ։
Ո՜հ. ես առ ո՞վ դիմեցից,
  զցաւս ո՛ւմ պատմեցից։
Անձինս օգնել՝ իբր անորդի·
  զո՞ր որդւոյ մայր խնդրեցից։
Երբեմն անձինք ճոխ ընչիւք·
  զիմ սեղանով փարէին։
Այժմ շիջաւ ճրագ իմ տան,
  ո՛չ ևս իմ փառք երևին։
Կործանեցաւ՝ տունս 'ի հիմանց, այլ ո՛չ է,
  հրապարակն իմոյ աչաց, զո՛ր երևի թէ կո՛ծէ։
Երամք հօտից 'ի հովուէ զուրկ, բառաչեն,
  գառինք զուղին կորուսեալ, 'ի խոր սրտէ հառաչեն։
Սովին հարեալ· չէ՛ որ զնոսա, ժողովէ·
  ցան և ցիր հօտն տարածեալ, ուր և կամի դադարէ։

Ո՛հ երանի թէ մին յանձանց զոր առաքեալ էի, դայր, և ահա՛ մին գայ, զինչ արարից, հարցէ՞ց արդեօ՛ք... երկնչիմ... հովի՛ւք. (ո՛հ արդեօ՛ք զինչ պատասխանեն) վասն է՞ր տխուր գայք, ո՛ւր է այրն իմ Աբրահամ, զի՞նչ տեսիք, ասացէք սիրելիք ընդէ՞ր չխօսիք,

Նստեալ զցաւս՝ զվիշտս մի՛ յաւելո՛ւք,
  զոր ասելոց էք լաւ գիտեմ, մի՛ խօսիք։
Օ՜ միածին որդւոյս վախճան վաղահաս,
  ինձ պատմելով. դահիճ անձինս մի՛ լինիք։

Մեռա՛ւ որդիս իմ մէկ հատիկ սոսայէք,
  զարիւն և զո՛հ սիրականիս ինձ ցուցէք ։
Ո՛հ այն դանակ, այն դանակ.
  միակ որդւոյս մահաբեր։
Որ զնմա սիրտ նոր վիրօք,
  ՚ի խոր խոցէ կարեվէր ։

## Գամառ և Սառայ.

ԳԱՄԱՌ.

Ներեցէք ինձ զի յամեցի, ես յանցաւոր եմ...

ՍԱՌԱՅ.

Լա՛ւ է, իմացայ, ո՛հ Գամառ. Սահակս մեռա՞ւ, հա՞.

ԳԱՄԱՌ.

Ո՛վ ասաց,
Այժմ իսկ տեսի զնա առ ափն լերինն, ուր կայր.

ՍԱՌԱՅ.

Նա վիճո՞րդ չէ մեռեալ, զգո՛յշ լեր, զի մի՛ սխալիցիս.

ԳԱՄԱՌ.

Այժմ տեսցես և հաւատասցես ։

ՍԱՌԱՅ.

Ամենակարո՛ղդ Տէր, թերևս արտասուք իմ, հա-ճոյացեալ քեզ փոխեսցին զդ՛ր կամսդ. և զի՞նչ՝ապա-զոհ մատուցեալ ։

ԳԱՄԱՐ.

Զոհն թերեւս այժմ ընկնու. ըստ որում 'ի գալս իմ տակաւին չէր ընկնեալ ։

ՍԱՌԱՅ.

Վասն էր այս Աբրահամ հայր առ այն լերինն։

ԳԱՄԱՐ.

Եւ ես չգիտայի, և ո՛չ ես համարձակեցայ հարցանել զնա, թերեւս յերկնից նշան ինչ տեսանէր, ընդ որում անտի ուղղակի դիմեաց 'ի սարն՝ 'ի վեր ։

ՍԱՌԱՅ.

Աւաղ, աւաղ, ո՛հ...

ԳԱՄԱՐ.

Անդէն 'ի դաշտին եթող զպատանեակսն, 'ի մի ձեռն առեալ զհուրն, և 'ի միւսն զսուրն, ել 'ի գլուխ լերինն.

ՍԱՌԱՅ.

Եւ զինչ Իսահակ ։

ԳԱՄԱՐ.

Զկնի Աբրահամու երեւ գնայր, բարձեալ զփայտն հեւալով ելանէր 'ի լեառն.

ՍԱՌԱՅ.

Ո՛հ մեռանիմ, մի խօսիր.

ԳԱՄԱՐ.

Արդարեւ՝ ես ինքն եւս տեսանելով թէ հեայ 'ի ներքոյ ծանր բեռին, մորմոքէր սիրտս ։

Քանի՛ զքայլսն նա փոփոխէր,
կարծեմ՝ ընկճէր ընդ նոքօք ։

Քանի՛ առ նա ես հայէի,
 Թուէր կիս բեռն ծանրոցօք։
Ցորչափ հեւայր.
 Նա ընդ բեռամբն տքալով,
Դի կսկծոյս սառն քրտինք.
 զանձնս սպառէր դողալով։

ՍԱՌԱՅ.

Ո՞հ այլ մի՛ եւս խօսի՛ր՝ զի բանք քո նորոգեն զցաւ սրտիս։

ԳԱՄԱՐ.

Ահա՛ գայ Աբրահամ։

ՍԱՌԱՅ.

Աւա՜ղ, ո՛հ, աւարտեալ զգործն վերադարձեալ է.

ԳԱՄԱՐ.

Դանակն արիւնոտ երեւի. Թուի թէ կատարեալ է։

ՍԱՌԱՅ.

Թո՛ղ ինձ հեռանալ. ո՞հ զի մի՛ տեսից։

---

## Աբրահամ, Իսահակ եւ առաջինիքն:

ԻՍԱՀԱԿ.

Մա՛յր ջան.

ԱԲՐԱՀԱՄ.

Ո՛ Սառայ.

ԻՍԱՀԱԿ·

Ո՞ւր երթաս.

ԱԲՐԱՀԱՄ·

Ե՛կ՝ յումմէ՞ փախչիս.

ՍԱՌԱՅ·

Որդեա՛կ իմ՝ սահակ· դո՞ւ ես՝ թէ ցնորք են ։

ԻՍԱՀԱԿ·

Ե՛ս եմ, ես եմ. մայր իմ՝ ողջամբ եկի առ քեզ ։

ՍԱՌԱՅ·

Որդեա՛կ իմ... կենդանի ես դու հա՞ ։

ԻՍԱՀԱԿ·

Այո՛, այո՛, մայր իմ՝ կենդանի եմ ես. Աստուած բա-
ցեաւ զգանձ ողորմութեան իւրոյ, այց արար մեզ ։

ՍԱՌԱՅ·

Ո՞հ որդեակ իմ...,

ԻՍԱՀԱԿ·

Ո՛հ, զի՞նչ եղև, զի՞նչ առնես ։

ՍԱՌԱՅ·

Ո՛հ, որդեակ իմ... մեռայ...,

ԱԲՐԱՀԱՄ·

Կա՛լ զձեռացն Ի՛սահակ· յերկիր գլորի·

ԻՍԱՀԱԿ·

Աւա՜ղ, աւա՜ղ, զի՞նչ այս ցուրտ քիրտն, մեռանի՞
արդեօք ։

### ԱԲՐԱՀԱՄ.

Սե՛. մի՛ երկնչիր՝ որդեա՛կ իմ, երբ մարդն շատ ուրախանայ. այդպէս յերկիր անկեալ թուլանայ. բայց համբե՛ր առ վայր մի. երբ կրկին շունչ առնէ և տայ, յինքն եկեալ զօրանայ։

### ԻՍԱՀԱԿ.

Նու զլխա՛րդ, որ հազար ցաւոց տոկայ, 'ի միոյ ուրախութե՛ն այսպէս վտանգի։

### ԱԲՐԱՀԱՄ.

Այո՛ որդեակ. վշտաց սիրող. սովոր եմք.
Հրճուանքն մեզ հիւրի պէս է,
ուստի նմա անսովոր եմք։
Որ մուտ գործէ յայս աշխարհ.
յալէկոծեալ նաւ նաւի։
Տկարն 'ի խանձարուրս.
կրել զվիշտ սովորի։
Երջանկութիւնն այնչափ դոյզն է,
մինչ ճանաչելն դժուա՛ր է։
Ուստի սակաւ ուրախութիւն.
զմարդոյ խելքն յնորէ։

### ԳԱՄԱՐ.

Ահա՛ բանայ զաչսն.

### ՍԱՌԱՅ.

Աբրահամ,... Իսահակ, դու ես։

### ԻՍԱՀԱԿ.

Ե՛ս եմ, ե՛ս եմ, մա՛յր, 'ի գիրկս իմ հանգուցեալ ես։

## ՍԱՀԱԿ

Ո՛հ, Ա՛Ծ իմ, գոհանամ զքէն։ Աբրահամ, զի՞նչ եղև·

## ԱԲՐԱՀԱՄ·

Լո՛ւր ինձ, ես պատմեցից քեզ, և դու գոհասցիս զՏեառնէ, յորժամ եցոյց ինձ Աստուած զլեառն ուր զզոհն մատուցանելոց էի, նախքան առեալ զԻսահակ Էիս՝ դիմեցի ՚ի գլուխ լերինն· յայնմ պահու, ՚ի մի՛տ առ, թէ ո՞ր խորհուրդք Ճմէին դիպան· ծերութիւն և տկարութիւն թէպէտ կթուցեալ էին զծունկս, այլ ՚ի պատիւ Ա՛ծային հրամանին հոգիս առեալ ՚ի բերան իբրև զառաջ երիտասարդ երթայի· բայց վա՜յ ինձ· դարձաւ առ իս Իսահակ, և ասէ, հա՛յր, ահա՛ հուր, և ահա՛ փայտ, ո՞ւր է ոչխար ողջակիզի, այլ ես անկոր· և ո՛չ ՚ի չքնաղ կերպարան դիմացն իշխեալ հայել, ասացի Ա՛Ծ տեսցէ́ իւր ոչխար ողջակիզի· Պատրաստեցի զսեղան զոհին, զփայտն պատրաստեցի, և զբազուկս Իսահակայ, ձե՛ռս յետս կապեցի պարանաւ՝ որով զփայտն յուս ՛նր բարձեալ էի։

## ՍԱՀԱԿ·

Ա՞խ, եղո՛ց արդեօք յայնմ ժամու· մտաբերեա՛լ զվշտալի մայրն, որում ժամ՝ մի յառաջ խոստանայր, փութով վերադառնալ· խորհեցաւ ինչ արդեօ՛ք, թէ յօժարակամ զանձն նուիրեաց ։

## ԱԲՐԱՀԱՄ·

Իբրև զգաստ անմեղ· անմռունչ եկաց զակն արկեալ միայն ՚ի սուրն, զոր ՚ի ձեռին իմում ունէի

ՍԱՌԱՅ.

Վա՜յ, Աբրահամ, յայնմ սոսկալի պահու դու զինչ արարեր, զի 'ի լուր ահեղ մնացեր՝ ցամաքի արեան իմ։

ԱԲՐԱՀԱՄ.

Ո՛չ սաստ ոչ․ յայնմ պահու.
Աստուած զմարդն զօրացուցանէ:
Եւ ամենակարող զօրութիւն նորա,
զտկար բնութիւնն փոխարկէ:
Յայնմ պահու ես ոչ մարդ էի և ոչ հայր,
այլ միայն՝ Տեառն կամարար,
Յանձնառութեան՝ լոյս իմն իջեալ,
զանկարելին իմ ՝ ուրախ արար:

Հաւատ, յոյս և սէր. այնպէս զմիտս մերան բոլորակեցին. զի ընդ այդ համարձակ խառնել կարծէի, լինել: 'Ի ծանուցս արկեալ զԻսահակ, յոյժ ձեռքն սուր յանձեալ հար յերկինս հայէի, և ահա այն ինչ զգանակն 'ի վերայ պարանոցին քսէի:

ՍԱՌԱՅ.

Ո՛հ, ո՛հ, մի՛ խօսիր:

ԱԲՐԱՀԱՄ.

Տեսի յերկինս զՀաւր, և 'ի հրոյն լուսոյ ձայն, որ գոչէր. «Աբրահա՛մ, Աբրահա՛մ, մի՛ մխեր զձեռն քո 'ի պատանեակդ, և մի՛ ինչ առներ դմ, զի այժմ գիտացի թէ երկիւղած ես դու յիս, և ոչ խնայեցեր յորդւոյ քո սիրելւոյ վասն իմ.«

ՍԱՌԱՅ.

Ո՜հ,

# ԱԲՐԱՀԱՄ·

Ա՜յն ձայն, այն ձայն՝ ով Աստուած,
  զսիրտըս իմ՝ զարթուցին ։
Յայնժամ՝ ծանեայ՝ թէ մարդ եմ ես,
  մարդ եմ՝ և հայր՝ որդեծին ։
Օ՜անցեալ խորհուրդս՝ յուշ ածեալ·
  այն ձայն զանձն իմ՝ պաշարեաց ։
Կրկին խորհուրդք՝ մարդկայինք·
  զայգոյն միտքս՝ պատեաց ։
Մեծ գոհութիւն՝ և երկիւղ՝
  հանգիստ և դիւր զարմանաց ։
Խնդմութիւն՝ և աղօթք·
  զխորհուրդս կշտամբ՝ գրաւեաց ։
Օ՜աչս ամբարձեալ·
  երբ կամէի գոհանալ՝
Բանք 'ի բերան իմ՝ մնացին·
  առ 'ի շփոթմանս չհանեալ ։
Երբ շտապս, զկայն արձակել, ջանայի·
  թուլացան ձեռքն, սրտիս 'նախ ալեաց, կայէի ։
Օ՜պարանոցս, պատեալ որդւոյս՝ փարէի·
  ուրախութեամբ, իմ՝ արտասուօք՝ մինչ զլուխ, թանայի ։
Երբ տեսիլ էնչ, ջան դնէի·
  խոկոյն հեկեկ, իմ՝ սրտի ։
Աչհաս զդման՝ գրէն համբր,
  որ 'նշանաւ՝ բարբառի ։

Որդեակ իմ՝ Աշհակ, այլ ես չկարեմ՝ յառաջ տանել զթել բանին· զի այն մէկը կրկին զկա 'ի

նոյն սահման հաստուցին, դու ինքն շարունակեա՛ որ ինչ զկնի դիպաւ ։

## ԻՍԱՀԱԿ·

Ըստ որում Մնացաք առանց ողջակիզի, յայնժամ եւ պահու ըստ յուսոյ հօր իմում ԱԾ առաքեաց զնոյն, եւ աչօ՛ տեսաք 'ի մէջ մացառաց զխոյ մի կախեալ զեղջերացն, խոյն հասեալ 'ի վերայ իմոյ պարանու կապեցի զնա՝ (ո՛հ երջանիկ խոյ) զնա զենեալ փոխանակ իմ, եւ զոհեալ ձնձներեցաք 'ի պատրաստեալն հուր ։

Ո՛հ այն պարան՝ այն չարչարանք, եւ այն վիշտք,
այնպիսի մահ՝ այնպիսի կեանք, եւ այն կիրք ։
Ընդ դանակին՝ նոր սրելոյ, փայտ եւ հուր·
ինձ պատրաստեալ՝ կային անդէն՝ բայց 'ի զուր ։
Ըստ որում զիմ՝ զմեռանիլ՝ վասն քոյ,
չկամեցար՝ դու ո՛վ Աստուած՝ մշտագոյ ։
Տո՛ւր ապա ինձ՝ զձիր շնորհաց, քոց առատ,
կալ յաշխարհի՝ միշտ վասն քո, Տէր առատ ։

## ԳԱՄԱՐ·

Նրանէ՞ քեզ Ա՛բրահամ, զզարմանալի նշան ցուցեր հնազանդութեան քում ։

## ՍԱՌԱՅ·

Օրհնութիւն՝ Աբրահամու,
յայդմ չէ՛ դէպ՝ տեսանել ։
Քանզի Աստուած՝ զնորա խորհուրդս,
առանց հրաշից՝ ճանաչէր ։

Այլ զԱստուածեան՝ սքանչելիս,
 Թերևս նա՝ չգիտաց ։
Ուստի նովաւ՝ զանձն նորա՝
 զերթ ուսուցիչ՝ խրատեաց ։
Զսքանչելի՝ հնազանդութիւնն.
 Ետ աշխարհի՝ օրինակ ։
Յոր ակնարկեալ՝ ամենեցուն,
 առցեն անտի՝ զօրինակ ։
Եկա՛յք ապա՝ յայսց հանդիսից,
 առցո՛ւք և մեք՝ զխրատ ։
Զայս օրինակ՝ զոհ մատուսցո՛ւք,
 մեր Արարչին՝ անկրակ ։
Սեղան զսիրտս՝ կազմեսցո՛ւք,
 Ճարակ հրոյ՝ զմեր սէր,
Զոհ ողջակէզ՝ զցանկութիւնս,
 զոր առաւել՝ հաճի Տէր ։

## ԱԲՐԱՀԱՄ·

Լուեցէք, երկինք բանին ։

## ՀՐԵՇՏԱԿՆ·

Աբրահամ, առ՝քեզ կրկին առաքեաց զիս Տէր, աւետարանել՝ զի յանձն իւր երդուաւ քան զոր չիք ինչ մեծ, թէ փոխանակ զի դու արարեր զայդ բան. բազմացուցանելով բազմացուցից զզաւակ քո իբրև զաստեղս երկնից և իբրև զաւազ առ ափն ծովու. և զաւակ քո ժառանգեսցէ զքաղաքս հակառակորդաց իւրոց, և օրհնեսցին ՚ի զաւակի քում ամենայն ազգք երկրի ։

Որդեակ ծնեալդ՝ 'ի ծերդ ապէ,
  յերանելի՝ յայն աւուրս ։
Զամենայն երկրի՝ ժառանգ լինելն·
  յԱրեւելից՝ յԱրեւմուտ ։
Որ քեզ տանէ՝ զայս խոստումն·
  տէր է բոլոր՝ աշխարհի ։
Այսօր երդմամբ՝ զնոյն խոստումն·
  կրկին 'ի յուշ՝ քեզ տանէ ։

ՍԱՐԱՅ·

Լուռ ե՞ս Աբրահամ ։

ԻՍԱՀԱԿ·

Չէ՞ զի լսեր ։

ՍԱՐԱՅ·

Հայեաց յերեսն, ո՞չ փայլի·

ԱԲՐԱՀԱՄ·

Օրհնութեանց՝ դու ներգործող,
  ամենազօ՛ր՝ դու Աստուած ։
Դու լինի՛ս այսու՝ փոխարարանց ,
  այդպէս պատգամ՝, փոխարկեալ աստուած ։
Զմահ որդին՝ հայրն իւր ձեռամբ,
  քեզ պատարագ՝ ընծայէ ։
Նոյնեղ մանուկն՝ մշտոյ անպարտ,
  զանձն անպարտանց՝ նուիրէ ։
Զարծի մշտայն՝ չխնեմ փառն է՞ր,
  'ի շալակ իւր՝ բարձեալ էր ։
Ի մէջ լերանց՝ այս սար փառն է՞ր,
  զոհին տեղի՝ ընտրեալ էր ։

Զփայլն համբուրն՝ փուշ և տատասկ.
չխանեմ՝ փոյն էր՝ սպանեալ էր։
Ի մոգուտատ՝ փշոց միջի,
զառն փոյն էր՝ բուսուցեր։
Ո՜հ ի միտս իմ՝ զուն տարածիր,
յոր մնկանկած՝ հաստատեմ։
Զի այս նշանք՝ չեն ի նախնի.
այսպէս հատուած՝ ես ասեմ։
Զարիւնն հեղեալ՝ ի գլուխ լերին,
ես զայլ արիւն՝ տեսանեմ։
Յանմեռուչ զոհն՝ փարեալ ի սպանդ,
ես զայլ սրտի՝ նկատեմ։
Զերկրի երկիր՝ զերկնից տարաւ,
զամբարտաւանց՝ զբացաւ։
Զերկինն երկաս՝ իբրև զիշեր,
կարծեմ սպառ՝ խաւարաւ։
Գո՜հ եմ՝ զքեզն՝ անմահ Աստուած,
ծանեայ ծանեայ, հասկացայ։
Ի ներկայիս՝ զանձաւ խորհուրդս
զապագայիցն՝ խնայոյ։
Ահա՛ այս է՝ յանկարծին օր,
զոր տեսանել՝ փափագիմ։
Ահա՛ այս է՝ այն արիւն,
և անթիւ մեղք՝ սրբեսցին։
Ահա՛ այս է՝ այն պատարագ.
անչափ խնամոց՝ նշանակ։
Արդարութեան՝ և զթութեան,
և լոյս չափ՝ և քանակ։

Ահա այս է՝ վշտակիր մահն.
  անվերջ կենաց՝ մեզ պատճառ ։
Անմա՛հ կենաց՝ մեր առաջի.
  եւ բանի դուռն՝ և տաճար ։
Երջանիկ օր, երջանիկ մահ,
  երջանիկ զոհ՝ ինքնակամ։
Գոյովք արեամբ՝ զփրկութիւն,
  որդւոյս լինիլ՝ հաստատամ.

## ԵՐԳԻՉՔ.

Ինձ ապերախտիս՝ 'ի բազում դարուց,
  պատրաստեն հնարք՝ փրկիլ 'ի պարտուց ։
Իմ ապերախտիս՝ վճար փրկութեան,
  մի՞ թէ Արարչին՝ էր գոյն ինչ աժան ։
Եկա՛յք ուրեմն՝ ո՛վ եղբա՛րք,
  զյարդ նորա՝ ծանիցո՛ւք ։
Օգնիս փրկութեան՝ ախտաւէր անձանց,
  մի՛ զո՛հ մատնեցո՛ւք ։



# ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ:

## ԽՕՍՕՂՔ:

Յովսէփ գեղեցիկ } որդիք Յակոբայ,
Բենիամին } ծնեալք 'ի Ռաքէլայ:
Յուդայ } որդիք Յակոբայ ծնեալք 'ի
Սիմոն } Լիայէ.
Ասանէթ, կին Յովսեփայ,
Տանէթ, վերակացու տան Յովսէփայ.
Միւս որդիք Յակոբայ Նահապետի.
Հարսունք և թոռունք Յակոբայ.
Ծառայք և Հովիւք.



Печ. позв. 9. Сент. 1841 г. Ценз. С. Р. Архим. [illegible]

# ՅՈՎՍԷՓ

## Գեղեցիկ

### ԱՌԱՋԻՆ ԱՆՑՔ։

---

*Յովսէփ և Տանէթ.*

ՅՈՎՍԷՓ.

*Յեղբարց Հրէից չէ՞ք որ տակաւին եկաւոր.*

ՏԱՆԷԹ.

*Ո՛չ, դեռ չերևեցաւ որ.*

ՅՈՎՍԷՓ.

*Զճանապարհն տեսողի՛լ եսուք.*

ՏԱՆԷԹ.

*Զքանի մի ամս առաքեցի, տակաւին չդարձաւ ոք.*

ՅՈՎՍԷՓ.

*Ո՛չ ապաքէն ՚ի ձորոյն Մամբրէի եգիպտոս շատ հեռի չէ, գոնեա քանի՛ անպամ՝ պարտէին գալ.*

ՏԱՆԷԹ.

*Ներեա՛ Տէ՛ր իմ, զի՞նչ է պատճառ այսպիսի հապաղութեան քում, մի՞ քանի մի հուլուաց՝ չգիտեմ։*

## ՅՈՎՍԷՓ ցդ.

Խորհրդն չգիտէ թէ նք եղբայրք իւր էին (բարձր) Խօսո նեղանաւ վասն խաբելոյ նոցա զնա Ցանկացայ տեսա-նել զկրտսեր որդի ծերոյն Յակոբայ՝ բայց դու տե-սեր, թէ ո՞րպ դժուարացան նոքա, կատարել զայն հրաման ։

## ՏԱՂՆԻԹ·

Զմինն 'ի նոցունց՝ պնդ. ա՛ւել ես՝ որ կայ 'ի բանտի·
  Նոքօք զնս՝ հալկադրել ես՝ փոյթ դառնալ անտի
Թէ և խղճալւոյն՝ երես չարարե՛լ՝ լքելն ասա առ մեզ,
  հանդարտարած սոփն՝ հարկիւ առաքէ՝ զնս առ քեզ ։
Լերինքն սերըջ՝ անպտուղ կան,
  սերմանեալ արտք՝ բողբոջ չտան ։
Կամ բողբոջեալ՝ հասկն վերայ,
  ապականեալ՝ 'ի հող դառնան ։
Ցախ և դժնիկ՝ որ 'ի լերինս,
  անբեր մացառք՝ որ 'ի հովիտս ։
Ո՛չ կերակրեն՝ զքաղցեալ դաւլնս,
  և ո՛չ զոչխարս՝ կամ հովիւս ։
Հովիւքն անկեալ՝ յուժոյ անձանց,
  զհաց խնդրեն՝ յանցաւորաց ։
Հօտքն ցրուեալ՝ 'ի մէջ լերանց,
  ՚մահու մատնին՝ անխոտ սոված ։
Վարօղք արտից՝ խեղճ երկրագործք,
  բոբիկ ոտոլ՝ անշոր անձորձք ։
Ընկեալ 'ի մէջ, անցող հողոց,
  պաշտուճ խնդրեն՝ սակաւ աւուրց ։

Զուարթութիւն՝ միայն աստէն,
և ո՛չ այլուր՝ է գտանել.
Քոյդ շնորհաց՝ աշխարհ կարօտ·
առ մեզ դիմեն՝ պհայ տանել.

ՅՈՎՍԷՓ·

Եթէ նախանձոտ եղբարքն, վնաս ինչ հասուսցեն բենիամինի· զո՞ պարտին բերել։

ՏԱ՛ՆԷԹ·

Ուստի՞ այդ կարծիք ։

ՅՈՎՍԷՓ·

Մանուկն կարի սիրելի է Յակոբայ, վասն այն կասկածեմ ։

ՏԱ՛ՆԷԹ·

Սէր Յակոբայ, զի՞նչ վնաս է նոցա ։

ՅՈՎՍԷՓ·

Երբեմն և ես իմում ծնօղի էի սիրական։
Հնոցք կայնմանէ՝ յեղբարցս նախանձու՝ ինձ բոր-
բոքեցան ։
Դառն զրպարտութե՛ց՝ բազում հնարից՝ զանձն իմ
պարտական.
Մահու կորստեան՝ զանից հարուածոց՝ արժան դա-
տեցան ։
Աստուա՛ծ իմ, դու պահեա՛ ։

ՏԱ՛ՆԷԹ·

Զի՞ հոգաս վասն անծանօթի ուրումն մանկան, և աղօթես վասն նորա ։

## ՅՈՎՍԷՓ·

Վիճակ երկոցունցս՝ կարի համանման են իրերաց, երբ մտաբերեմ զԲենիամին՝ միշտ առաջի աչացս նկարին ։

Զայր զվիշտ իւր՝ զոր կրեալ է,
երբ տեսանէ՝ այլք կրեն ։
Հաղորդ լինիլ՝ նոցունց կրից,
կամին կարի՝ տխրեալն ։
Երկուց բաղդից՝ նմանութիւն,
կամ՝ սերտ սիրոյ՝ առիթ լինին ։
Եւ կամ նոքա՝ զայլոց վշտաց·
զարժանին գին՝ հատուցանեն ։

## ՏԱՆԻԹ·

Այս մտածմունք՝ որ զքեզ·
յայդչափ հոգս՝ ընկղմեն ։
Յայսմ աշխարհի՝ իսկ բարւոյ՝
ոչ գոյ՝ գուշակեն ։
Ի վտանգէ՝ յերջանկութիւն·
թէ փոփոխիլ՝ բարի է։
Յերկրի վերայ՝ իբրև զՔեզ·
լաւ գիտնաս՝ ոչ ոք է ։
Արծաթագին՝ օտար ստրուկ,
եկեալ մտեր՝ ՚ի մէջ մեր ։
Զրպարտութեամբ՝ անխիղճ կնոջ,
՚ի մէջ բանտից՝ շատ կայեր ։
Բայց Տէր Աստուած՝ քեզ օգնական·
որ ինչ գալոյն՝ էր արկեալ ։

Սի՛րոյն պատիւ՝ միւսոյն պատիժ.
քաջալ բանիւ՝ գուշակեալ ։
Զանեղոյն՝ զոր պատմեցէր.
կուրեց կարծիք՝ թուեցան ։
Մինչ Արքային՝ ՚ի լուր անգամ.
բանքն փութով՝ հնչեցան ։
Զերալ նորա՝ յոյր տարակոյս.
գիշեր ցերեկ՝ քուն չունէր ։
Ոճով պատմեալ՝ զոր պիտոյն էր.
նմա տանել՝ ուսուցէր ։
Նոխու լուկոյն՝ բանան յապարան.
կոճն ՚ի դահոյս՝ փոխեցաւ ։
Քուրձն յապրշում՝ խոշոր խարայն.
՚ի ծիրանի՝ շրջեցաւ ։
Փոխան երկրին՝ յորում տրտում.
շրջէիր խեղճ և մոլար ։
Յարքային դաշ՝ արդէն բազմեալ,
փայլես իբրև՝ խոտ դալար ։
Աշխարհ ամէն՝ Ավխաննայեւ.
ըղ մերկական՝ քեզ պատիւ տան ։
Արքայն, իշխանք, ծերք՝ և տղայք,
քում հրամանի՝ հլու կան ։
Զօրհնութիւն հօրդ՝ զորմէ հոգաս,
դու վաղ ուրեմն՝ առեալ ես ։
՚Ի գիրկ բազմին՝ յամէն կուսէ.
ուռճացեալ՝ բարգաւաճես ։
Բայց յանհամար՝ բարութեանց մէջ.
զվիճակէդ՝ զո՛վ անդոհ։

'Ի վնաս անձինդ՝ զվիշտ զհոգ,
մտաբերեալ՝ ձայնես ո՛հ ։

ՅՈՎՍԷՓ·

Լա՛ւ, հերիք է, Ասանէթ գայ, դու այժմ երթ զգո՛յշ լեր ճանապարհաց, երբ ընկալցիս գայ՝ փութով ինձ իմացո՛ ։

ՏԱՆԷԹ·

Գլխուս վերայ՝ ես երդնում, բայց դու խնայեա՛ կյանքն քո, և մի զայլոց հոգալով քեզ վնաս գործեսցես ։

---

## Ասանէթ և Յովսէփ

ԱՍԱՆԷԹ·

Ներեա՛ ինձ Տէ՛ր իմ, խնդրել ինչ 'ի քէն ։

ՅՈՎՍԷՓ·

Ընդէ՞ր այդպէս խօսիս Տէ՛րուհի, խնդրանաց քոց երբ ես բացասեալ եմ ։

ԱՍԱՆԷԹ·

Խնդրեմ զի 'ի սէր իմ արձակեսցես զբանտարկեալ հրէայն·

ՅՈՎՍԷՓ·

զՍիմօ՞ն·

ԱՍԱՆԷԹ·

Այո՛ զՍիմօն·

ՅՈՎՍԷՓ·

Առն անծանօթի ուստի՞ այդչափ գթութիւն.

ԱՍԱՆԷԹ·

Առն անմեղի ուստի՞ այդչափ սաստկութիւն .

ՅՈՎՍԷՓ·

Ուստի՞ գիտես թէ անմեղ է.

ԱՍԱՆԷԹ·

Մեղքն յայտնի չէ, անտի գիտեմ թէ անմեղ է.

ՅՈՎՍԷՓ·

Անյայտ յանցանքն մի՞թէ չէ՞ մեղք.

ԱՍԱՆԷԹ·

Գոնեա՛ դատաւորին պա՛րտ է ունիլ զգթութիւն։

ՅՈՎՍԷՓ·

Պա՛րտ է ունիլ զգթութիւն, այլ ո՛չ թողուլ զարդարութիւն ։

ԱՍԱՆԷԹ·

Անողորմ՝ արդարութիւն· չար եւս է քան զանգթութիւն ։

ՅՈՎՍԷՓ·

Առ անմեղս գթութիւն, է ճշմարտութեան կորուսանող թուլութիւն ։

ԱՍԱՆԷԹ։

Հայեա՛ց յերկինս առ Արարիչն՝ որ ամենից տիրող է, որ զատաստանութն, ո՛չ ի լուսոյ կամ ի վա-

տայց լնայեալ, զայն զանձն 'ի միասին ամենեցուն ընձեռէ ։

## ՅՈՎՍԷՓ.

Այր, նմանօղ նմա 'ի կրթել զմարդն երբեմն ուրախացուցանէ, և երբեմն լացուցանէ ։

## ԱՍԱՆԷԹ.

Ներեա ինձ Տէր իմ, զի զոր ինչ առնես Սիմոնի, ոչ թէ սէր այլ պատիժ է ։

## ՅՈՎՍԷՓ.

Մի՛ այդպէս փութանակի բամբասեր զնա երբե զյանցաւոր, հա՜յ, հա՜յ, զայլս փութով բամբասեմք, ձի՛րք են բնութեան մերոյ բամբասելով զայլս՝ զանձինս մխիթարել, այնպէս կարծեմք թէ զոր ինչ յայլոց պակասեցուցանեմք՝ մեք շահիմք, աւա՜ղ որք 'ի ծածկել զիւր յանցանս աշխատի 'ի ձեռն ունիլ վճար ինչ, և յորժամ չկարէ գտանել, սկսանի զայլս նոյն յանցաւոր ցուցանել, մ՛ոյ բազմիցս 'ի մեզ անուանք փոփոխին, երկիւղն, խոհեմուլ, անդգամութիւն. ամօթն՝ անպարկեշտութիւն և արիութիւնն՝ երկիւղ թուի, այն է պատճառն զի մեք հաւանելով մեզ, կարի ցաւիմք 'ի վերայ բարեբաղդութեան այլոց, և դժուարաւ հաւատամք նմա, իսկ երբ զփառս ինչ ն՛ր լսեմք փութով հաւատամք ։ Բանից օտարաց՝ մի՛ փոյթ հաւատար,

զուցէ բարկութիւնն՝ ցոյց է գթութեան ։

Երբեմն պատիժ՝ ողորմութիւն է.

և երբեմն սաստ՝ լաւ կրթութիւն է ։

### ԱՍԱՆԷԹ.

Եթէ ոչ տեսանես, զոմանս ընդ ՚ի ներկայութեան Ձեր, զի խօսեսցի, և այժմ եւս չէ ասես :

### ՅՈՎՍԷՓ.

Դառ լաւ եղիցին կամք քո, մանկունք բերէք այսր զՄխման. (յ-ծ) Ասանէթ հին անդլեյն տեսեալ չէ, չգիտէ թէ Մխման իմ եղբայրս է, և սաղ.

### ԱՍԱՆԷԹ.

՚Ի բանիցն և ՚ի նշանացն զյանցաւորութիւն նորա, կամ՝ զանմեղութիւն :

### ՅՈՎՍԷՓ.

Նշանք խաբօղ են. աչք մեր միայն զդէմս տեսանեն, իսկ զխորհուրդն չկարէ որոշել, զի զնա միայն Աստուած ճանաչէ :

### ԱՍԱՆԷԹ.

Խորհուրդք՝ բազմիցս ոչ պարունակեալ ՚ի միտս,
կամայ ակամայ երեւին յերեսս :
Զախտս ծառոյ՝ թէ ՚ի ծածուկ,
 անբուժելի՝ ախտացելն :
Բողբոջք և ծիլք, պտուղք ծաղկանց,
 յայտնաբարբառ՝ քարոզեն :
Նոյնպէս զմիտս՝ մարդկայինն,
 թէ ՚ի ծածուկ՝ մեղս ունին :
Քայլք և բարբառ, և գոյն դիմաց,
 և այլ նշանք՝ փոյթ յայտնեն :

# Յովսէփ, Ասանէթ և Սիմոն.

ՅՈՎՍԷՓ (ցած)·

Ահաւասիկ գայ Սիմոն, ո՛չ ճանաչէ զիս թէ Յովսէփ եմ, կապեալ ձեռօք գայ առաջի եղբօրն, զոր սպանանել վրիժէր ։

ՍԻՄՈՆ·

Անկեալ յերկիր պագանեմ. զհողն զոր ոտք Ձեր կոխեն:

ՅՈՎՍԷՓ·

Յոտն կա՛ց, յոտն կա՛ց, տեսից ։

ՍԻՄՈՆ (ցած)

Ա՜խ այս ո՞րպիսի ձայն է, ո՞րպիսի դէմք, զի՞նչ դիպաւ ինձ յանկարծ, զի դողամ:

ԱՍԱՆԷԹ·

Խօսեա՛ց։

ՍԻՄՈՆ·

Չկարեմ խօսիլ, չգիտեմ, զի՞նչ գոյ յերեսս Տեառն իմոյ, որ պարէն իմ ցամաքեցոյց ։

ՅՈՎՍԷՓ (ցած)·

Արիւնն բռնադատէ ճանաչել, բայց չկարէ որոշել, խօսեա՛ց հո՛վիւ, զի՞նչ է անուն քո ։

ՍԻՄՈՆ·

Սիմոն ծառայ Տեառնդ յայտնի ։

ՅՈՎՍԷՓ.

Յորմէ՞ աշխարհէ ես.

ՍԻՄՈՆ.

՚Ի Խառանէ։

ՅՈՎՍԷՓ.

Ո՞ւր է հայր քո.

ՍԻՄՈՆ.

Յակոբ ծառայ Տեառն,

ՅՈՎՍԷՓ.

Զի՞նչ է անուն մօրդ.

ՍԻՄՈՆ.

Լիա կոչեն զնա։

ՅՈՎՍԷՓ.

Հայր քո չունի՞ զորդիս բայց ՚ի ձէնջ.

ՍԻՄՈՆ (յ-ծ).

Զի՞նչ այժմ խօսեցայց, Այո՛ ՚ի Ռաքէլ կնոջէ ունի զայլ որդիս։

ՅՈՎՍԷՓ.

Զի՞նչ են անուանք նց։

ՍԻՄՈՆ.

Յովսէփ և Բենիամին։

ՅՈՎՍԷՓ.

Վա՞ն էր և զնա ո՛չ բերէք ընդ ձեզ.

ՍԻՄՈՆ.

Զբենիամին հայրս չթողու հեռանալ յաչացն։

ՅՈՎՍԷՓ·

Իսկ զմի՞ւսն.

ՍԻՄՈՆ·

Օ՜, մի՞ւսն...

Նուա՜ղ, այժմ հանդերձելոցայ փառանդէց :

ՅՈՎՍԷՓ·

Հա՛, զմիւսն.

ՍԻՄՈՆ·

Նա... նա... նա... չգիտեմ:

ՅՈՎՍԷՓ (ցած)·

Դու չգիտես ես գիտեմ:

ԱՍԱՆԷԹ (ցած)·

Գուցանթաքեալ կապկապեալ լերան :

ՅՈՎՍԷՓ·

Գոնեա՛ աստ լինէ կենդանի՞ է նա·

ՍԻՄՈՆ·

Հայրս հանապազ իբրեւ զմեռեալ ողբայր զնա :

ՅՈՎՍԷՓ·

Ուրեմն մեռեալ է :

ՍԻՄՈՆ·

Մեք չգիտեմք.

ՅՈՎՍԷՓ·

Կարի լաւն խօսիս,

ՍԻՄՈՆ·

Բայց ամենեւին չատեմ,

ՅՈՎՍԷՓ.

Զի՞նչ եղև այժմ Յովսէփ.

ՍԻՄՈՆ.

Աղաչեմ զքեզ Տէր իմ, մի՛ յուշ առներ ինձ զա-նուն Յովսեփայ, զի մեռանիմ :

ՅՈՎՍԷՓ.

Ընդէ՞ր, մի՞ թէ յանցաւո՛ր է նա, և ունի զծան-րագոյն մեղս :

ՍԻՄՈՆ.

Ո՛չ.

ՅՈՎՍԷՓ.

Ապա· զի՞նչ է պատճառն :

Գուցէ հակառակ հօր ձերում, նախանձեալ իցէ ը ձեզ, և զոխ ինչ ունելով ատեցեալ է 'ի ձէնջ :

ՍԻՄՈՆ.

Քա՛ւ, ո՛չ մեղք նորա... և ո՛չ յանցանք... աւա՜ղ, ո՛ր իմ՝ զի՛նչ հարցանես, զի՞նչ ինչ յուշ ածեր խղճալւոյս, քա՛ւ է աղաչեմ դարձո՛ զխս 'ի բանոն, թէպէտ դու անգիտաբար հարցանես, այլ 'ի սիրտ իմ՝ զնոր սլաքս մխես. ես քանի՛ յիշեալ հայիմ, յանձնէս ելանեմ, և դու իւրաքանչիւր հարցմամբքդ, զանտանելի վիշտս 'ի միտս իմ՝ բերես :

Զյաց զկոծ, այն խղճալւոյն,
  երբ 'ի հօրէն՝ որոշէր :
Գո՛գ տեսանեմ՝ աչացս առջև.
  երբ զախուք՝ հօրն փարէր :

Արտօսր աչացն՝ զոր գետօրէն,
  մեր առաջի՝ նա հեղոյր ։
Ընդ ձայն դուժին, արդ տեսանեմ,
  որ զարձագանգս լնոյր ։
Այն անիծեալ՝ ժամ աւուրն
  կրկին ՚ի միտս՝ դառնայ ։
Թո՛ղ ինձ երթալ՝ ուստի եկի,
  յոյս կալ ինձ՝ ուժ չկայ ։

ՅՈՎՍԷՓ.

(ցած) Վա՛ն մխիթարելոյ յայտնեցից զիս դմա, ո՛չ, ո՛չ, տակաւին ժամանակ չէ, (բարձր) յիմարական բանք քո Սիմոն, զկարծիքս յաւելուն, ո՛ւր են եղբարք քո ։

---

## Առաջինքն և Տանէթ.

ՏԱՆԷԹ.

Եղբարքն այժմ եկին ։

ՅՈՎՍԷՓ.

Ո՛ւր է ապա բենիամին.

ՏԱՆԷԹ.

Ահա՛ գայ զկնի ամենեցուն ։

ՅՈՎՍԷՓ (ցած).

Կերպարանքն իսկապէս մօրս նմանի, (բարձր) Երթ. Տանէթ. պատրաստեա՛ վն նջ զսեղան, արձա-

կեցջէք զբաղուկս Սիմոնի, և դուք հո՛վքուք սակա-ւինչ յառաջ մատուցո՛ւք ։ (յ-ծ) Ո՞ւ էրէ թէ եռանդ-արեանս ո՛չ յայտնեցէր զիս ։

---

## Յուդայ Բենիամին և միւս եղբարքն ընդ առաջնոյ.

### ՅՈՒԴԱՅ·

'Ի կատարումն հրամանիդ՝ պլթած Տէր·
  կատարեցաք՝ զխոստմունս ։
Կրկին 'ի հող՝ զարշապարայդ,
  եկաք քսել՝ զճնդունս ։
Արդ զկարծիսն՝ զոր առնէիր,
  'ի քոյդ մտաց՝ փարատեա՛ ։
Եւ զայս ընծայս՝ ընդ աղօթից,
  քոյդ հաճութեամբ՝ վայելեա՛ ։

### ՅՈՎՍԷՓ·

Բերէք տեսնեմ՝ ՚ինչ է·

### ՅՈՒԴԱՅ·

Ընծայ հոլուոյ՝ քանանայւոյ,
  կաթիլ ծառոյ՝ բազմաբոյս ։
Ոստոյն և խունկ, ստաշխ,
  բեւեկն, և ընկոյզ ։
Նոյնպէս և հիւթ՝ հազար ծաղկանց,
  մեղուաց հնար՝ գերապանծ ։

Հաճոյ գտցի՛ բարերարիդ,
մեր այս քրտունք՝ երեսաց ։

ՅՈՎՍԷՓ·

Շնորհակա՛լ եմ՝ յընծայիցդ, միայն տայցէք ինձ բա՛րեկամք, կենդանի՛ է ծերունի հայր Ձեր ։

ՅՈՒԴԱՅ·

Յալեւորեալ հասակի անցուցանէ զաւուրս իւր, օրհնելով զանդլին կեանս Տեառնդ մերոյ ։

ՅՈՎՍԷՓ·

Այս մանուկն է Բենիամին, զորմէ ասէիք ։

ՅՈՒԴԱՅ·

Այո՛, այս է Տէր իմ ։

ՅՈՎՍԷՓ·

Շատ ապրիս որդեակ (յ-ն) քանի յերեսն հայիմ սիրտս կտրատի ։ (բարձր) Աստուա՛ծ իմ… ո՛րդեակ… գթեղ… (յ-ն) ո՛հ չկարեմ խօսիլ, արտասուք իջանեն յաչաց, գնայցից աստի զի մի տեսցեն սոքա ։

---

## Յուդայ, Սիմոն, Բենիամին և միւս եղբարքն.

ԲԵՆԻԱՄԻՆ·

Ա՞յս է պատիւն,

ՅՈՒԴԱՅ·

Ո՛հ, այն հատուկտոր բանք նորա չգիտեմ զինչ ցուցանէ.

ՍԻՄՈՆ.

Օտարն ՚ի ներքոյ ծաղրատեսակ կերպարանայն թագուցանէ:

ՅՈՒԴԱՅ.

Չգիտեմ կո՛յր բաղդն մեր, մեզ զինչ պատրաստէ:

ԲԵՆԻԱՄԻՆ.

Ո՛հ եղբարք իմ, դուք այս ո՛ւր բերիք զիս:

ՍԻՄՈՆ.

Մեղք անմեղին Յովսեփայ է զոր կրեմք, ըստ որում, խնդրուածոյ, աղաչանաց, կոծոյ նորա չլուաք, արժանապէս զոր ինչ գայցէ, պատուհասք կրել:

ՅՈՒԴԱՅ.

Ո՛չ ապաքէն ես ասացի ձեզ, մի՛ անիրաւիք յանմեղ մանուկդ, ընդէ՞ր չլուաք ինձ, այժմ ահա Ած զարիւն նորա պահանջէ ՚ի ձէնջ:

---

## Տանէթ և Առաջինքն.

ՏԱՆԷԹ.

Եկա՛յք հովիւք, տէրն իմ կամի ճաշել ընդ ձեզ:

ՍԻՄՈՆ.

Արդեօ՛ք, այլ այս մեզ ո՞րդ ճաշ պատրաստեալ է:

ԲԵՆԻԱՄԻՆ.

Աւա՜ղ, այս ինչ վտանգ է:

ՅՈՒԴԱՅ·

Այս օրն փառաւորիլ ժամ է ։

ՏԱՆԻՉԹ·

Ով յաղաղէր, եկա՛յք եկա՛յք երթիցո՛ւք ։

*Բաց 'ի Տանեթէ, այլքն.*

Աստուած Աբրահամու, ժողովուրդք քո եմք, որ հեա՛ զմեզ զի զանուն քո կարդասցուք ։

*Եղբարքն 'ի միասին.*

Քեզ ով Աստուած՝ Աբրահամու,
խոստովանիմք՝ զի մեղաք ։
Այլ տակաւին՝ քոյ եմք Տէր մեր,
զի քո ձեռօք՝ ստեղծաք ։
Զարդարութիւնդ՝ 'ի գործ եդեալ·
զմեզ պատժեր՝ մի՛ իսպառ ։
Զի առաջի՝ քոյդ էութեան,
չիք և ո՛չ մի՝ այր արդար ։
Յամէն կուսէ՝ դռունք փակեցան,
չիք առաջի՝ այլ մեր յոյս ։
Մահու երկիւղ՝ պատեաց զմեզ,
յորմէ չէ մարթ՝ բնաւ տալ խոյս ։
'Ի քեզ միայն՝ յո՛յս անյողդողդ,
միայն 'ի քեզ՝ արդ դնեմք ։
Արդարութեանդ՝ ո՛չ դիմանամք,
միայն զգթութդ՝ աղերսեմք ։

## ԵՐԿՐՈՐԴ ԱՆՑՔ։

—

## Յովսէփ և Տանէթ.

ՅՈՎՍԷՓ.

Արարեր զոր ինչ ասացի քեզ.

ՏԱՆԷԹ.

Այո՛, զամ՝ հրամանաւ կատարեցի և ՟ բանի Տող-եսու հովուացն զցորեան, և զսկիհն քո արծաթի եդի 'ի բերան ամանի կրտսերոյն : Խղճալին միամը-տաբար յուղի անկան ուրախութեամբ, և յորժամ՝ ելին 'ի քաղաքէն, մի ըմբռնեցայ զնոսա զողն, առա-քեցի զհետ զոցա, զի երբև զյանցաւորս զամենեսեան կալեալ բերցեն յառաջ Տեառնդ իմոյ :

ՅՈՎՍԷՓ.

Զկամս իմ խնամելհս կատարեալ ես, բայց զի զար-մացեալ կաս :

ՏԱՆԷԹ.

Ոչ, ո՛չ զարմացայց Տէր իմ, ընդ այսպիսի գործս քո, մինչ եղէ որ ո՛չ զարմացի, 'ի միում ժամու սիրես՝ և բարկանաս, երբեմն ատանելով՝ ուրախ ես և երբեմն տխրիս, զորդիս Յակոբայ ընկալար երբև զեղբեկամս, և աչն յանկարծ թողեր զնա և հե-ռացար, հրաւիրեցեր 'ի ճաշ ընդ քեզ, և 'ի ծա-ծուկ դարան գործել հրամայեցեր, առաւել քան զամենայն զբենիամին սիրեցեր, այժմ 'ի ծանր յանցանս, զնա զրպարտեցեր :

## ՅՈՎՍԷՓ·

Նա զոր ինչ առնեմ՝, դու այժմ ո՛չ գիտես, ե՛րբ դու այժմ զհալլումն բե՛ր յառնեան իմ, և զայս գործ իմ դու անիրաւութիւն մի՛ կարծեր, ա՛յն որ ունի զխիղճս, և զամենեցուն մխիթար ԱԾ պատրաստէ, ա՛յն որ հակառակ կայ իշխանութեան, ո՛չ հրամանին հակառակ կայ:

## ՏԱՆԻԷԹ·

Այս համարձակութիւն իմ, չէ ընդդիմութիւն քոյ կամաց, պատասխանեցի հարցման քում՝ և զհրամանաւդ կատարեցի, ես հնազանդ եմ հրամանի քում, և զպարտս իմ ճանաչեմ: Ծառայ, որ հետաքրքրութեամբ զհրաման Տեառն իւրոյ, ՚ի քննին արկեալ պատճառանաց հարցանէ, ՚ի կատարումն նորին թերի գտանի գիտեմ: Ծառայ կարգեալ ՚ի կատարումն հրամանի, երբ հրամայել կամի, զչափ անձին կորուսանէ, գիտեմ:

## ՅՈՎՍԷՓ

Ո՛վ Աստուած յաւիտենական, զամ՝ խորհուրդս իմ դու լաւ գիտես, ես ո՛չ յանկամ՝ վրէժխնդիր լինել եղբարցս, պատիժ վրէժխնդրութեան՝ ՚ի գլուխ վրէժխնդրաց կուտի, ՚ի հզօրաց վրէժխնդրել, յանդգնութիւն է, ՚ի հաւատարիմն՝ զանձն ՚ի վտանգ արկանել, իսկ ՚ի տկարէն, նշան փոքրոգութեան, յայտնի դատա՛ն կրեն, դու պահեա՛ զիս ԱԾ իմ. սաստկութեն, զոր ես ցուցանեմ եղբարցս մի՛ խրատու է, զի ծանիցեն թէ մեղքն յո՛րմէ վտանգս արկանէ զմարդ, և այնու ապաշխարեսցեն մի՛ ևս նոյն օրինակ մեղանչել:

Մայր գթառատ՝ որդւոյ մերոյ,
Թէ մեղանչէն՝ բարկանայ։
Այլ զբաղումն՝ բարձրացուցեալ,
'ի հարկանել՝ զղջանայ։

---

## Ասանէթ և Յովսէփ.

ԱՍԱՆԷԹ.

Դու իրաւունս ունէիր, ես զկարդ յիմարաբար դիւրահաւան գտայ։

ՅՈՎՍԷՓ.

Զի՞նչ է, ի՞նչ կայ, ի՞նչ խապար։

ԱՍԱՆԷԹ.

Այժմ է ժամանակ պատժոյ, այն աղուհայց ո՛չ ճանաչող ապերախտ հիւրըն, զթանկագին սկիհն որով ըմպէիր զգինի գողացեալ տարեալ էին։

ՅՈՎՍԷՓ.

Զի՞նչ խօսիս.

ԱՍԱՆԷԹ.

Արդարև, ճշմարիտ, զկնի նց ապրի Տանէթ, որս առաքեալ ըմբռնեալ է, յառաջագոյն ամենեքեան երդուեալ են յանուն Ա՜՝ և խոստացեալ են զի եթէ առ նմ՜ գտցի, մեռցորդքն յեգիպտոս գերի լիցին, և եթէ լա՛ւ որոնեալ են գտեալ են 'ի պարկի բենիամինի, եթէ ապերախտքն

այլ եւ չէին կարացեալ պատասխանել, ցնորեալ էին, և արիւնն պակասեալ է յանկերս 'նց, դողան շրթունք 'նց, և չկարեն խօսել, ո՛չ այլ ինչ ասեն, միայն գոռան գոչեն, և զհանդերձս պատառեն:

ՅՈՎՍԷՓ·

Տակաւին տեսցո՛ւք, թէ իսկապէս յանցաւո՛ր են:

ԱՍԱՆԷԹ·

Ի՛Հ, ամենևին 'ի միտս քո չիք Հաւատարմութեան բանից իմոց:

ՅՈՎՍԷՓ

Այդ ինչ ասել է, յառաջագոյն ասես անմեղ են սոքա, այժմ եկեալ գտանես թէ խաբեալ էի, յետ սակաւուց ո՞ գիտէ թէ կրկին չես ասելոց խաբեալ էի:

ԱՍԱՆԷԹ·

Ո՛Հ, դու կասկածաւորութեան չափն անցուցեր:

ՅՈՎՍԷՓ·

Այս ուրեմն, որչափ մեք Հաստատ լինիմք, անՀը-նարէ թէ չխաբիմք; քանզի Հոգի մեր 'ի մարմնի, եթէ և 'ի գերեզմանի փակեալ գոլով, չկարէ նմբնին տեսանել զարտաքոյ գործեալսն, այլ միայն Հաւաւ լինի 'նց 'ի ձեռն զգայարանաց, և 'նք բազմիցս սխալին, և ասեն, ուստի մեզ մնացեալք զգայարանք 'նց, կասկածաւո՛րք են, և բազմիցս անիրաւք:

ԱՍԱՆԷԹ·

Ուրեմն, Հոգիք մեր յամ ժամ, 'ի խաւարի կարծեց են:

## ՅՈՎԱՍԱՓ·

Արդարև այդպէս է։
Այլ որ զայն՝ այլուստ խնդրէ,
ո՛չ ՚ի լուսոյ՝ կայծերէն։
՚Ի զուր շրջի, ՚ի մութ ճայ,
կալեալ կանոյս՝ խաւարէն։
Այն անսահման՝ և անքանակ,
ամենեցուն՝ Արարիչ։
Մի միայն նա՝ է աննախանձ
և ճշմարիտ՝ լուսոյն տուիչ։
Զաշխարհ ամէն՝ կրում ձեռին,
առանց ծանրոյ՝ միշտ ունի։
Երբ զաշխարհն՝ չէր օրհնաբան,
Ինքն զինքենէ՝ միշտ օրհնի։
Զամէն բարիս՝ տանի ՚ի գլուխ,
միայն զմիտս՝ նա պարզէ։
Արդարութիւն՝ և իրաւունք,
անփոփոխան է, նա միայն է։

## ԱՍԱՆԷԹ·

Ո՜հ, այդ ո՞րպիսի Աստուածային լոյս է, որ յերես քո փայլի, բանք բերանոյ քո, չե՛ն բանք մարդոյ, զի բարբառ քո սարսափեցուցանէ զյօդուածս իմ, դու զմիտս բարձրացուցեալ ես յԱստուած, և ես աստ ՚ի ստորինս եմ մնացեալ, և խորհիմ թէ ո՞վ եմ։

Յերկնաշալի՝ անտառի մէջ,
երկնաշուն զլխ՝ ըմբռնէ։

Զգիտեմ անտի՝ թէ անցանեմ.
Ճանապարհն՝ ո՛ւր զիս հանէ։
Յայսպիսում՝ օտար վայրի,
Դու ուղեցոյց՝ թէ լինիս։
Ո՜վ աչաց լոյս՝ զօտար գերիս.
այլո՛ւմ ումեք՝ յանձն առնես։

## Տանէթ. յանցաւորք և այլք.

### ՏԱՆԷԹ.

Ահա՛ յանցաւորքն։

### ԱՍԱՆԷԹ.

Հայեա՛ց այժմ հայեա՛ց, առաջի քո ամենեքեան յերկիր անկեալ են։

### ՏԱՆԷԹ.

Հայեա՛ց, կարէ՞ մի՛ն զերեան ՚ի վեր ամբառնալ։

### ՅՈՎՍԷՓ.

Զի՞նչ գործեցիք դուք ո՛վ յիմարք, զի՞նչ արարիք, մի՞ թէ տակաւին դուք ո՛չ գիտէք, թէ ծածուկ գործք ձեր ինձ յայտնի են։

### ՅՈՒԴԱՅ.

Ողորմեա՛ց մեզ Տէր, չունիմք զպատասխանի ո՛չ զպատճառ և ո՛չ զայլ փաստ, միայն զայս գիտեմ զի Աստուած զվրէժ նախկին յանցանաց մերոց այժմ պահանջէ, Ամենագո՛ւթ Աստուած, գիտեմ զի զչար

յանցանաց մերոց պահանջես. անհաս խորհրդով քով որ ՚ի վեր է քան զամենայն միտս ։

՚Ի մէջ մնաց՝ յանցաւոր,
  զանմար կրակ՝ կանդալես։
Որով այրի՝ տիւ և գիշեր,
  բայց միշտ Յուսոյ՝ նա անկէզ ։
Մինչև յոր մի՝ ՚ի մէջ մեղաց,
  յոր յարաժամ՝ ընկղմի ։
Անկեալ յերկիր՝ կոծով անպխտան,
  հնոցին նիւթ՝ պատրաստ ։

## ՅՈՎՍԷՓ.

Ո՛չ ո՛չ, Աստուած պահպանէ, զայս ինչ ո՛չ լինի, գողն գտաւ միայն առ Բենիամին, նա միայն մնասցէ աստ գերի, և դուք, գնացէք առ հայր Ձեր.

## ՅՈՒԴԱՅ.

Ողորմելի համարձակութեամբ գնասցուք մեք ։

## ԲԵՆԻԱՄԻՆ (լալով)

Վա՛, ես աստ միայն մնամ ։

## ՅՈՎՍԷՓ.

Միայն դու կա՛ց աստէն եղբարքդ գնասցեն ։

## ԲԵՆԻԱՄԻՆ.

Կացէք կացէք առ վայր մի, ամա՛ն, մի՛ գնաք, Յուդա՛ եղբայր իմ, դու այդպէս յայտնես զպատուէր հօրդ, գոնեա՛ եկա՛յք միանգամ համբուրեսցուք զմիմեանս, եկա՛յք գիրկս արկցուք և զվերջին ողջոյն միմեանց տացո՛ւք, ո՛հ այժմ դուք երթա՛յք

և զնա գերի թողո՛ւք, ո՞հ խղճալի հայր, 'ի տեսանել զաղետալիս որդւոյ, զո՛ր յաւ կրելոց ես, դուք եղբարք իմ՝ եթէ սիրէք զիս, փոխանակ իմ՝ համբուրեցէ՛ք զձեռս հօրս, յայտնեցէ՛ք թէ կենդանի է, բայց զխղճալի վիճակէս մի՛ խօսէ՛ք:

ՅՈՎՍԷՓ (յուզ.)·

Ո՞հ աշխոյժ բնութեան իմոյ սակաւ մի ևս համբերե՛ր·

ՅՈՒԴԱՅ·

Չի՞ք մեզ այլ ևս յոյս գթութեան:

ՅՈՎՍԷՓ·

Լուայք զհրամանս իմ, արդ փութացէ՛ք 'ի կատարել:

ՅՈՒԴԱՅ·

Ների՛ր ինձ Տէր խօսել ընդ քեզ մի բան:

ՅՈՎՍԷՓ·

Փութով ասա՛, զի լուայց:

ՅՈՒԴԱՅ·

'Ի միանգամ գալստեան իմում...

ՅՈՎՍԷՓ·

Գիտեմ, ես ասայի զԲենիամին ընդ ձեզ բերէք, դուք ասայիք հայր մեր մեռանի առանց նորա, և ես ձեզ ասայի դուք առանց նորա մի՛ ներկայանայք ինձ:

ՅՈՒԴԱՅ·

Այդու հրամանաւ քով, գնացաք առ հայր մեր, որ յորժամ կամեցաւ զմեզ առաքել յառ ձեր, մեք ասացաք 'ի զո՛ւր լինի ուղևորութիւն մեր, եթէ

Բենիամին չիցէ ը մեզ ։ Հայր մեր աղաղակեաց ո՜հ զինչ խօսիք․ մնացեալ Յովսեփայ եմ, 'ի Ռաքէլայ տէր, եղէ երկուց որդւոց, և 'ի նոյանէ զմին եկեր գազան որոյ դուք եղէք գուժկան, և այժմ զմիւս որդին խնդրէք, եթէ թողից և դա գուցէ 'ի ճանապարհին վնասու իմիք հանդիպեալ զծերութիւն իմ՝ ցաւօք իջուսցէ 'ի դժոխս, բայց իբրև սատակացաւ սովն, խեղճն յանհնարս մնալ, մտածէր, եթէ ո՛չ առաքեսցէ զորդին, 'ի քաղցէ մեռանի, և եթէ առաքեսցէ 'ի կսկծոյն տանջի ։ Իբրև ամենայն հնարք իմ սպառեցան, ասաց հայրս, դու յանձն առա՛ ինձ զորդիդ, և եթէ ո՛չ յետս դարձուցից, գիտեա՛ զիս մինչու նորա պարտական ։ Այժմ քանի իմոյ հաւատացեալ եթող զորդին, այժմ ո՛ր իմ, դու ինքնին Տէր ես որդւոյ, դու ինքն եղեալ ես երբեմն որդի, եկ այժմ դու լե՛ր 'ի տեղի իմ, և տա՛ մա՛րթ է արդեօք թողուլ զնա այսր, և ինձ երթալ համարձակ առ հայր իմ ։ Ո՛չ Տէր իմ ո՛չ, թո՛ղ զԲենիամին գնալ, և ես առ 'ի տեղի նորա ծառամ գերի, զի լաւ է ինձ, լինել գերի՝ քան լսել զաղաղակ հօր իմոյ․

## ՅՈՎՍԷՓ (յ-ժ)․

Աղէքս կորստին․

## ՅՈՒԴԱՅ․

Կամն էր դարձուցանես զերեալ․ եթէ ես չեմ արժանի գթութեան, գոնեա՛ խնայեա՛ յալևոր հայրն իմ ։ Եթէ 'ի ժամ բաժանման Բենիամինի 'ի հօրէս՝ տեսանէիր տէր իմ սիրտ չխնայէր՝ գրէ թէ

զնետողն յանձնէն որոշեցաք, կրկին և կրկին փարէր զնովաւ, և համբուրէր անյագ, կրկին և կրկին յանձն առնէր, և սպասուէր տայր. 'ի յուշ ածեալ զՌա-քէլ` և համարեալ թէ ընդ Յովսեփայ խօսէր, և զերկուսին կարօտ 'ի Բենիամինէ առնոյր, և սովաւ մխիթարէր, վասն էր Տէր իմ... լաւ... գուցէ այս խղճալի վիճակ մեր 'ի գութ էած զքեզ: Ո՞վ Ա՛ծ գթութեանց, դու ինքն քաղցրացո՛ զսիրտ սորա:

ՅՈՎՍԷՓ.

Վա՜յ, այլ ես ո՛չ կարեմ ժուժել. Ո՛ սիրելի եղբարք իմ, ծանիրուք զարիւն Ձեր, ո՛չ ապաքէն ես եմ Յովսէփ, բարկութիւն իմ համար է, եկա՛յք համբուրեսցուք զմիմեանս:

ՅՈՒԴԱՅ.

Յովսէփ ջան.

ԲԵՆԻԱՄԻՆ

Օ՞հ.

ՍԻՄՈՆ.

Վա՜յ մեզ.

ՏԱՆԻԷԹ.

Այս որպիսի՞ տեսարան է:

ԱՍԱՆԻԷԹ.

Զի՞նչ է այս զոր տեսանեմք:

ՅՈՎՍԷՓ.

Մի՛ երկնչիք եղբարք իմ, վասն վաճառելոյ զիս մի՛ երկբայիք, այն մեզք ձեր առիթ եղեն փրկութեան

եղբարսն և ձեր ։ Ամենակարօղն Աստուած յայնմանէ եւ ինձ զայս երջանկութիւն, գնացէք զայս վիճակ իմ պատմեցէք հօր իմում, և ասացէք զաւ և լինել ինձ բաղդակից ։ ընդէ՞ր դուք ո՛չ շարժիք․ երկնչիմ զուցէ ո՛չ հաւատայք, Յուդայ, տո՛ւր պատասխանի, ընդ ամ Սիմոն, եկ առ իս Բենիամին ։

## ԱՍԱՆԷԹ․

Զապաղխի տեսարան սիրոյ տեսեա՜լ ես դու Տանէթ․ տես զիա՞րդ տարերք իմ պարառեալ զեղբարք իւրեանց, ոմն զճակատն համբուրէ․ ոմն զերեսն․ ոմն զձեռսն, և ոմն զքղանցսն, և ինքն կամի զինքն բոլորովին իւրաքանչիւրոց տալ ։ Խղճալիքն չկարեն ինչ խօսել․ և երբ բանան զբերանսն ամենեքին 'ի միասին ողբան ։

Անխօս լեզուք՝ արտասուօք աչք,
  զբաղում ինչ՝ զեկուցանեն ։
Ընդ պատմութիւն՝ կամ երկար ճառ,
  ամենեւին՝ պիտոյ չեն ։
Սէր 'ի սրտէ՝ սիրտ սիրելեաց,
  ինքն ինքեան՝ քարոզէ ։
Ասել խօսել՝ կամ նկարել,
  ամենեւին՝ պիտոյ չէ ․

## ՅՈՒԴԱՅ․

Ո՛հ զիա՞րդ արդար ես․

## ՍԻՄՈՆ․

Ո՛րպէս ճարտար ես ։

### ՅՈՒԴԱՅ.

կատարեցան երազքդ. զորս տեսեր ։

### ՍԻՄՈՆ.

Ո՜վ ամենազօր Աստուած, զիարդ անհա՛ս են խորհուրդք քո, մեք զՅովսէփ վաճառեցաք, զի մի՛ երկիրպագցուք, այժմ երկիրպագանեմք զի վաճառեցիք։

### ՅՈՒԴԱՅ.

Զամենայն զոր ինչ կամի Տէր այսօրինակ կատարէ, ծառայ նմին հակառակօղ, իւր բաղձմանց ծառայէ։

---

## ԱՆՑՔ ԵՐՐՈՐԴ.

—

Յակոբ. Հարսունք. և Թոռունք. ծառայք. և Հովիւք, երգիչք և առաջինքն:

### ՅԱԿՈԲ.

Գոռամ գոչեմ՝ գիշերն ՚ի բուն.  
ո՛չ մտանէ՝ յաչըս իմ քուն ։  
Շրջիմ լալով՝ զտիւն համբուն.  
լնում կոծով զերկիրս ողջոյն ։  
Չի՛ք իմ ցաւոց՝ ոք մխիթար,  
և ո՛չ վշտացս՝ անդորրարար։  
Չի՛ք յաշխարհի՝ ինձ հաւասար,  
վշտակիր և՝ խղճալի այր ։

Չե՛ք յաչս իմ՝ այլ արտասուք,
զի չորացան՝ նորա աւուք։
Խաւարեցան՝ աչքս 'ի լալոյ,
ո՛չ դադարիմ՝ 'ի սգալոյ։
Անյագ որկոր՝ անգութ երկրի,
եկուլ զՌաքէլ՝ իմ նազելի։
Անսուրբ որկոր՝ չար գազանաց·
զՅովսէփ 'ի կեր՝ քաղցին մատնեաց։
Անտանելի՝ սով աշխարհիս·
զանցեալ զչափն՝ առաւել։
զԲենիամին՝ ընդ միւս որդիս,
հարկեաց յինէն՝ անջատել։
Աշխարհ ամէն՝ զիս երջանիկ,
հայր շատ որդեաց՝ կարդային։
Արդ և ո՛չ մին՝ չունիմ առ'իս,
որք միշտ զինև՝ փարէին։
Ափերք գետոյս՝ ինձ բնակարան,
որդւոյս ուղէք՝ զբօսարան։
Դարձան խղճոյս՝ հանգստարան,
և գիշերոյ՝ ննջարան։
Չտեսանեմ՝ զոք 'ի հեռուստ,
զուրկ 'ի լուսոյ՝ տունջեան։
Շրջակայիցս՝ բան հարցանեմ,
դանդաղին տալ՝ պատասխան։
Դու ասա՛ ինձ՝ կարկաչուն գետ,
մաղթեմ զքեզ՝ տուր խապար։
Որդեկս երբ՝ ընդ քո կամուրջ,
անցին յայս կոյս՝ միաշար։

Ասա՛ մաղթեմ՝ Բենիամին,
 Կ՚որ ընդ նոսա՝ ուղեւոր ։
Թէ վտանգի՝ խմբք դիպեալ,
 եթող զնուր հայր՝ սգաւոր ։
Քաղցրիկ զեփիւռ՝ կենսապարար·
 այլ քեզ փչել՝ չեմ ուզեր,
Օ՜հ յաշխարհի՝ այլ ինձ ցաւ,
 վիշտ համարիմ՝ և երեր ։
Դարձո՛ ապա՝ զանհետ ընթացդ·
 առ իմ որդւոյ՝ երախան ։
Նաւս առնել՝ առ իմ կրտսեր·
 Բենիամին՝ սիրական ։
Հեղ երամակք՝ անմեղ գառանց·
 և դո՛ւք խղճոյս՝ թշնամի ։
Դիմէք առ մարդ՝ մայելով·
 կպչիք 'ի ստինսն՝ մի առ մի ։
Օդոյ կտրօղ՝ թռչնոց երամք,
 այդ ձեր դարձմամբ՝ առ ձագերդ,
Նա ճախրեալ՝ նոցա զձեօք,
 փարելն ինձ մահ՝ բերէ հեշտ ։
Ուր իմ գառնիկք՝ ուր իմ ձագեր,
 աղաչեմ ինձ՝ ասացէ՛ք,
Մեռա՛ւ Յովսէփ, մեռաւ Ռաքէլ,
 գէթ զայլ որդիս՝ ինձ ցուցէք ։

## Հարսունք և Թոռունք ։

Ա՜յդ քո տառապանք, այդ վիշտ անհամբերք՝ ընտիր ծերունիդ,
 զքեզ 'ի լուսոյ՝ զրկեալ տունջեան, թողին խղճալիդ ։

Հէրիք նախահայր, հէրիք լաս ոգաս, դու կսկծագին·
  և զմեզ ը̄ քեզ, 'ի սուգ դառնութ, արկանես վերջին:
փառք տուր ա̄յ, որ անդորդ սիրով, զքեզ ը̄ գրկել·
  բազմաթիւ որդւոց, քան զամէն նախնիսդ, զքեզ
    հայր կոչեալ:
Մետասան որդիքդ, քեզ հերկեքասցին, զորս քո-
    տար երկիր,
  'ի բերել զցորեան, դու առաքեցեր՝ յերկիրս
    սովակիր:
Դարձցին նք փոյթ, պատեսցեն զքեւ՝ իբրեւ զուռ ոստով,
  սփոփել զքեզ, զհայրդ վշտակիր՝ օրհնեսցեն երգովք:
Մոռա՛ դու ով ծեր, զանուն Յովսեփայ, այլեւ մի՛
    յիշեր·
  զանբաղդին վիճակ, անդուլ անդադար, մի՛ 'ի միտ
    բերեր:
Յիշեա՛ զխոստումն, ստեղծողին լնուլ, զերկիր քոյ
    որդւովք:
Զերկիրս հարց քոց, տալ 'ի տիրել,
  քոյդ բազմաթիւ՝ զաւակօք:
Յիշեա՛ զպապ քոյ՝ զԱբրահամ,
  որ յետ կենացն՝ 'ի վախճան:
'Ի պատուեալ՝ 'ի կնոջէն·
  հայր կոչեցաւ՝ անդրանկան:
Նա անդրանիկ՝ նոյն և կրսեր·
  էր մի միայն՝ յաշխարհի:
Տալ զնա զոհ՝ իւր Արարչին,
  խայտայր հոգւով՝ խնդալի:

Ո՛չ երկմտեայ՝ նա սուրբ ուխտին.
կապեալ զորդին՝ միածին:
Այն ինչ զսուրն՝ է առ զենուլ,
զնուր զծնունդ՝ զվերջին։
Այլ Տէր զսուրն, արգել քսել.
'ի պարանոց՝ Սահակայ։
Զխոյ ողջակէզ՝ տուեալ ընդ այնմ,
յատոց ծառոյն Սաբեկայ։
Այնպէս թերես, ո՜վ ալեւոր,
Տէր յարուցէ զքո Յովսէփ:
Յոր մխեցան, անգութ ժանիք,
չար գազանաց՝ անվրէպ։

## ՅԱԿՈԲ.

Եա Աստուածեան՝ սքանչելեաց,
քան ձեզ յառաջ՝ տեղեակ եմ:
Զի յանդգնեն զմարդ սանձեալ,
բնակեցոյց՝ 'ի յեդեմ:
Այլ զիմ որդւոյս՝ յարեան թաթաւ,
զպատմուճան՝ դուժաբեր։
Ահա՛ տեսէք՝ 'ի ծոցս ունիմ,
անբաժ յինէն՝ տիւ գիշեր։
Զորդւոյս երազ՝ 'ի յուշ ածեալ,
'ի միտս իմ՝ շուարիմ:
Թէ ու՛ր որայք՝ մեր խոնարհեալ.
նորայն ուղորդ՝ կան յոտին:
Ո՛ւր արեգակն՝ և ու՛ր լուսին,
ընդ մետասան՝ աստեղաց։

Երկնըպարգեւն՝ 'ի միասին,
  նորա աշխէղ՝ երեւոյ ։
Ո՞ տայէ ինձ՝ անբաղդ ծերոյս,
  լսել զձայն՝ Յովսեփայ ։
Մեռայց յայնժամ՝ ես գոհութեամբ,
  այլ յիս բաղձանք՝ չմնայ ։
Ընդ աստուծոյ՝ գօտէմարտեալ,
  կացի անյաղթ՝ և անկոր ։
Այլ 'ի ցաւոյ՝ իմ Յովսեփայ,
  անկեալ յերկիր՝ դնիմ խոր ։

## Ծառայք և Հովիւք.

Աչքդ լոյս եղիցի Տէր մեր, զի ահա գան որդիք քո, մեք տեսաք զնոսա 'ի հեռուստ և փութացաք աւետաւոր լինել քեզ, այլ զարմանք են, զի բաց 'ի դրաստուց որովք ուղեւորեցաք զնա̃, երեւէին ընդ նոսա բազմութիւնք կառաց և երիվարաց, և արք եգիպտացիք ընդ նոսա ։

## ՅԱԿՈԲ.

Զի՞նչ խօսիք որդեակք, արանց հովուաց և խաշնարածանց ուստի՞ երիվարք և կառք ։

## Հարսունք և Թոռունք.

Որդւոց Յա՛կոբ, ահա՛ երեւէին, և ըստ բանի հովուաց մեծ բազմութիւն է ընդ նոսա ։

## Եղբարքն ընդ միմեանս.

Ահաւասիկ Յակոբ հայր մեր նստեալ առ դրան-վրանն սպասէ գալստեան մերում, մեք պարտիմք

խնայել 'ի ծերութիւն նորա, և զկենդանութիւն Յովսեփու և զփառս նորա կամաց կամաց յերևան հանել, զի մի 'ի սաստիկ ուրախութենէ վտանգի իրիք դիպեսցի :

## ՅՈՒԴԱՅ·

Ողջոյն ընդ քեզ Հա՛յր մեր, օրհնութեամբ քով ողջամբ դարձաք 'ի համբոյր դարշապարաց քոց :

## ՅԱԿՈՎԲ·

Ողջամբ տեսի զձեզ որդեա՛կք, փառք ա՛յ որ անվը-նաս հասոյց զձեզ առ'իս, արդ՝ պատմեցէ՛ք ինձ զհանդամանս ուղևորութեան ձերոյ, եկա՛յք որդեակք իմ եկա՛յք համբուրեցից զձեզ, Բենիամին եկ մերձեա՛ առ իս :

## ԲԵՆԻԱՄԻՆ·

Հայրիկ Յովսէփ…

## ՅՈՒԴԱՅ (յ–ծ)·

Լռեա՛ առ վայր մի :

## ՅԱԿՈԲ·

Զի՞նչ խօսիս Բե՞նիամին, զեղբայր քո 'ի յո՞ւշ ածես Թերևս զտեղին տեսեր, ուր ժանիք գազանաց առ նա մխեցան : Որդեակք իմ զի՞նչ են այդ կառք և երիվարք ընդ ձեզ :

## ՅՈՒԴԱՅ·

Հայր իմ սոքա օտարական ուղևորք են կամին զայս գիշեր իջևանիլ առ մեզ, և 'ի վաղիւն գնալ 'ի տեղին, ուր հրամայեալ է նոցա իշխան եգիպտոսի·

ՅԱԿՈԲ·

Ծառայք հովիւք երթայք պատրաստեցէք նոյա զտեղի, և տուք զջուր ՚ի լուացումն ոտից նոյա ։

ՅՈՒԴԱՅ·

Հայր ՚ի միտ բերես զսքանչելիսն, զոր եցոյց Ած հաւուն քում Աբրահամու որ ՚ի ծերութեան հասակի, երբ սպառեալ էր ամենայն յոյս նորա, եղև հայր որդւոց ։

ՅԱԿՈԲ·

Մի՛ թէ մոռանայցդ երբէք ես որդեակ իմ ։

ՅՈՒԴԱՅ·

Ուրեմն առ Ած ամենայն ինչ հնարաւոր է ։

ՅԱԿՈԲ·

Հաւատամ իսկապէս, բայց զինչ նշանակեն բանք քո ասա ինձ անպատրուակ ։

ՅՈՒԴԱՅ·

Բան չկայ հայր, միայն թէ Յովսէփ կենդանի իցէ…

ՅԱԿՈԲ·

Ո՛վ Յուդայ որդեակ իմ, թող ինձ անբաղդիս, տանջիլ ցաւօք իմովք, և մի՛ ՚ի յուշ ածեր ինձ զորդին իմ զՅովսէփ· զորոյ արեամբաթաթաւ պատմուճան դուք բերիք ։

ՅՈՒԴԱՅ·

Ներեա ինձ հայր, բազում սխալմունք պատահին մարդկան, թերևս այր թշնամի վիրաւորեալ զնա, և մերկացուցեալ ՚ի հանդերձից վարեալ է ՚ի գերութիւն ։

## ՅԱԿՈԲ·

Աղաչեմ զքեզ Յուդայ, հերիք է, մի՛ եւս յիշեր զանցեալսն, զի 'ի շրջանի այսչափ ամաց, եթէ այդ-պէս ինչ լինէր չծածկէր համբաւն:

### Աշխարքն 'ի միասին.

Ներեա՛ մեզ Տէր, ներեա՛ մեզ հայր,
  ներեա՛ մաղթեմք արտասուօք,
'Ի յոտս քո՝ անկեալ յերկիր·
  զոտսդ համբուրեմք՝ բերանօք:
Մեր յանցանաց՝ լցեալ է չափ,
  չեմք արժանի՝ գթութեան:
Միայն զքեզ՝ տէր աղերսեմք,
  յայտնել զգութդ՝ հայրական:
Մեք եմք որդւոյդ՝ քո դաւաճան·
  մեք Յովսեփայ՝ թշնամի:
Որք նախանձեալ՝ յերազ նորա,
  մահու վարկաք՝ արժանի:
Այլ Տէր Աստուած՝ որ գթութեամբ,
  միշտ էր նմա՝ օգնական,
Դարձոյց զխորս՝ 'ի վաճառել·
  մի՛ մխել ձեռս՝ 'ի յարեան:
Մադիանայ՝ վաճառականք,
  անցին առ մեօք՝ առժամայն,
Տուաք նոցա՝ զմեր արիւն,
  տանիլ յերկիր՝ եգիպտեան:
Զպատմուճանն՝ յարիւն ուլու,
  մեք թաթաւեալ՝ ներկեցաք,

Յանձանց քերել՝ զանմեղ արիւնն,
 քեզ 'ի նշան՝ մատուցաք:
Գազան եկեր՝ ասեմք զնա,
 յանծանօթ վայր՝ մենաւոր·
Արջ, գայլ, առիւծ,
 կամ այլ ժանիք՝ թունաւոր:
Կենդանի է՝ արդ քո Յովսէփ,
 եգիպտոսի՝ իշխան է:
Ճշգիւ երազն՝ կատարեցաւ,
 զի Տէր նմա՝ պաշտպան է:
Այս երկմարք՝ քառաձի կառք,
 Յովսեփայ են՝ բովանդակ:
Զոր առաքեաց՝ տանել զքեզ,
 յիւր տէրութիւն՝ ընդարձակ:
Այլ մեք յերկիր՝ գետնատարած,
 զերեսս 'ի վեր՝ չամբառնամք:
Մինչ գթութեամբ՝ զանգէտ որդիսդ,
 ո՛չ պատուեցես՝ օրհնութեամբ:

## ՅԱԿՈԲ·

Զինչ խօսիք որդեակք իմ, ո՛չ մեռայ, Յովսէփ կենդանի՞ է, ո՜վ Յովսէփ, Յովսէփ,…

## ԲԵՆԻԱՄԻՆ·

Հայր իմ, տես զեղբայր իմ, ծանեաւ զնա, փարեցաւ զինեւ համբուրեաց անդադար, և եթէ ո՛չ կասկածէր զքէն չթողոյր զնա· արդ զի՛ հեգգաս, արի՛ գնացո՛ւք առ նա:

ՍԻՄՈՆ (յ–ծ)·

Ո՛հ զինչ եղև, եթէ ՚ի սաստիկ ուրախութեան և ՚ի ծերութեան յաղթահարեալ վտանգիցի, զինչ պատասխանի տացուք Յակոբայ ։

ՅՈՒԴԱՅ·

Ահա սթափի ։

ՅԱԿՈԲ·

Ո՞ւր եմ ես, որդեակք, Յովսէփ, Բենիամին...

ՏԱ՛ՆԷԹ·

Երջանիկ ծերունիդ, փառաւորեալ արքայն Եգիպտոսի փարաւոն· և երկրորդ նորա իշխան և վերակացու աշխարհին Յովսէփ որդի քո, առաքեցին զիս առ քեզ, կառօք և երիվարօք, տանել զքեզ ընդ ամենայն ազգայնոց քոց յԵգիպտոս ։

ՅԱԿՈԲ·

Զո՛ր գոհութիւնս, կամ զո՛ր պատարագ, մատուցից քեզ Աստուած իմ, որ միւսանգամ արժանի առներոց ես զիս, տեսանել զորդի իմ զկորուսեալ, չունիմ ինչ տալ քեզ արխուր Աստուած իմ, այլ զիմ աւուրս կենաց իմոց, ո՛չ դադարեցից օրհնել զանկարօտ բնութիւնդ, դու Աստուած իմ ներեա՛ յանցանաց որդւոց իմոց· որք յայտնապէս խոստովանին զյանցանս իւրեանց, եկէք որդեակք իմ, տեսէք զպատրաստութիւն ճանապարհի ։

# ԱՆՑՔ ՉՈՐՐՈՐԴ·

—

## Յովսէփ. Ասանէթ. Արգիչք և առաջինքն.

ՅՈՎՍԷՓ·

Զխմբդ այսպէս յանկարծ գալ հայր իմ և եղբարք։

ԱՍԱՆԷԹ·

Ո՛րպիսի կասկածոտ ոք ես, մի՞ թէ թեթև ինչ իցէ առն, որ տէրն իցէ, բազմաթիւ որդւոց և թոռանց· հօտից և խաշանց գաղթել յանծանօթ երկիր։

ՅՈՒԴԱՅ·

Ողջոյն քեզ Տէր իմ և եղբայր, ահաւասիկ Հայր իմ և եղբարք հանդերձ ազգայնովք եկին հասին յերկիրն Ռամեսայ, և զիս առաքեաց Հայրս գալ և յայտնել քեզ զի այսօր հասանին ՚ի Գեսեմ։

ՅՈՎՍԷՓ·

Ծառայք երթայք պատրաստեցէք քաջաց քաղաքիս, թէ ես կամիմ ածել զկառս, և ելանել ընդ առաջ հօր իմոյ, արդ՝ որք սիրեն զիս եկեսցեն ընդ իս։

ԾԱՌԱՅՔ·

Պատրաստ եմք ամենեքեան Տէր իմ, ոչ միայն մեծամեծք և իշխանք, այլ և ռամիկն ողջոյն թաւալ թողեալ զհրապարակս՝ կան առ դրան կառօք և երիվարօք· և բազումք հետևոտս, ուղեկից լինել բարերարիդ իւրեանց։

## ՅՈՎՍԷՓ·

Երթիցո՛ւք ուրեմն ։

## ԱՍԱՆԷԹ·

Հա՛ և ես գամ տեսանել զերջանիկ սկեսրայր իմ, դու կամիս միայն ժառանգել զանդրանիկ օրհնութիւն ։

## ՅՈՎՍԷՓ·

Եղիցին կամք քո ե՛կ ընդ իս ։

## ՅԱԿՈԲ·

Հնչեա՛ զեփիւռ՝ 'ի Հարաւոյ,
 զորդւոյ իմոյ՝ բե՛ր պատգամ ։
Թէ ո՛ւր է իմ՝ ազնիւ Յովսէփ,
 զոր տեսանել՝ ես ցանկամ ։
Բե՛ր զփոշիս՝ զոր ոտք նորա,
 յերկրի վերայ՝ կոխեցին ։
Սփռեա՛ յերեսս՝ մանրամաղ,
 թո՛ղ իմ աչք սևասցին ։
Իղձ անհանդուրժ՝ տենչ անհամբեր,
 հուր բորբոքեալ՝ 'ի սրտիս ։
Կարի երկար՝ ինձ ցուցանես,
 տակաւ ժամեայ՝ զայս ուղիս ։
Լամ անդադար՝ կոծեմ խապաւ,
 մինչև տեսից՝ զիմ որդի ։
Մինչև աչացս՝ իմ արտասուք,
 'ի յաղբերքն՝ չորասցի ։
Ո՛ւր ես Յովսէփ, ո՛ւր քո բարբառ,
 արա՛ զձայն՝ լսելի ։

Քոյով ձեռամբ՝ յայնժամ ՚ի հող․
 Ծածկեա՛ զհօր՝ քո զդի։

## ՏԱՀՆԷԹ․

Մի՛ լար երջանիկ ծերունիդ, աշխատանիկ տէր իմ նստեալ ՚ի քառաձի կառս, և ամենայն եղիպտոս ը նմա գան քեզ ընդ յառաջ։

## ՅԱԿՈԲ․

Ո՛հ որդեա՛կք իմ, Սիմօ՛ն, Բենիամի՛ն, եթէ ճշմարիտ է, ինչուցէք զիս յերկիրս, զի ծերութիւն իմ կերպարանափոխ եղև, թողէք ինձ հետիոտս վազել առ որդի իմ, և փարիլ զպարանոցաւ նորա։

## ՅՈՎՍԷՓ․

Ո՛հ, հա՛յր իմ հա՛յր, ես եմ որդի քո Յովսէփ, զոր կորուսեալ էիր ՚ի բազում՝ ամաց, ես եմ որ ՚ի գիրկս քո եմ, տո՛ւր ինձ զձեռսդ համբուրել։

## ՅԱԿՈԲ․

Յո՛վսէփ ջա՛ն…

## ՅՈՎՍԷՓ․

Տա՛նէթ, զի՞ կաս, տեսանես զի հայր իմ ՚ի սաստիկ ուրախութե՛ն ուշաթափ եղև, կոչեա՛ զբժշկապետն մատուցանել սմ՝ զվեհափողական դեղ։

## ՅԱԿՈԲ․

Այսօր է ինձ՝ օր խնդութեան,
 օր երջանիկ՝ ՚ի կեանս իմ։
Քան զոր բնաւ՝ երջանիկ օր
 ՚ի կեանս իմ՝ տեսեալ չիմ։

Օրս այս ինձ՝ գրեցի ՚նոր,
  տարեգլուխ՝ և ՚նոր ամ ։
Զի իղձքս ամէն՝ կատարեցան,
  որդ մեռանիլ՝ պատրաստ կամ ։
Զայս աչայս՝ զոր կորուսի,
  յորդւոյս կորուստ՝ դառնագին ։
Կրկին գտի՝ ՚ի գիւտ որդւոյս,
  ըստ խնամոց՝ Արարչին ։
Տեսի զերեսդ՝ այժմիկ որդեակ,
  այլ ինձ ապրիլ՝ չէ պիտոյ ։
Քոյով ձեռամբդ, դի՛ր զիս ՚ի հող,
  զի ստեղծայ՝ ՚ի հողոյ ։
Լցաւ արդէն՝ չափ խնամոց
  զոր Արարիչն՝ ինձ եցոյց ։
Չունիմ այլ ինձ՝ թերի փափաք,
  զի զվերջին՝ իղձս լցոյց ։
Միայն Տեառ՝ ինձ անդադար,
  օրհնել զանունն՝ ահաւոր ։
Ընդ բովանդակ՝ աւուրս իմ,
  թէ այլ կեցից՝ երկրաւոր ։

## ՅՈՎՍԷՓ.

Յայս դիպուածս իմ, բա՛ց յերեւելեաց, ծրարեալ խոր-հուրդք պահէն, հայր իմ տարեալ զիս առ ձեզ, և երբ ես սիրով գայի առ ձեզ, դուք կամեցայք սպանանել զիս, ապա արծաթոյ վաճառեալ, յոտար երկիր զիս տարեցիք ։ Ես տառէն մեծ ՚ի ծառա-յութենէ, և ՚ի զո՛ւր զրպարտեցայ յանդգամ կնո-ջէ, և զպատիժն՝ զոր պարտ էր կրել զրպարտչին՝

անտրտունջ եւ կրեցի։ Արկայ 'ի բանտ եւ 'ի կապանս 'ի մէջ երկուց չարագործաց, որոց միոյն պատիժ, եւ միւսոյն պատիւ գուշակեցի։ Թշնամեաց իմոց զհոգիս չարչարեցի, որոց ցանկալին մահու իմոյ, զհաց կենաց ետու, աշխարհ ամենայն զիս ինքեան փրկիչ դաւանի։ Ո՜հ, արդեօք ո՞ւմ օրինակ եմ ես, այո՛, այո՛, յերկինս գոյ խորհուրդ իմն, թերեւս այս Յովսէփ նորին օրինակ է, կերպարան եւ ստուեր։

## ԱՐԴԻԶՔ

Յիմար է որ՝ յանձին իմաստ,
  Հպարտացեալ՝ փքանայ.
Ո՛չ գիտելով, զամենից սէտս,
  միայն Աստուած՝ միշտ հոգայ.
Յիմար է որ՝ փառս այլոց,
  պեղէ զնոր՝ խորխորատ.
Զգիտելով, թէ ինքն անկցի,
  յնոյն փորեալ խոր ական։
Նաբինեք, թէ 'ի փառս,
  անզխաբար՝ անկանին.
Աղաւթեն՝ առնի փութով
  անօգնական՝ դառնին.





# ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԲՆՏՈՒ-
# ԳՈՒԱՑ:

## ԽՕՍՕՂՔ

Ոզիա, իշխան քաղաքին Բեթուղուայ։
Յուդիթ, այրի կին Մանասէի։
Ամիտալ, կին ազնիւ առն Հրէի․
Աքիովր․ զօրավար զօրաց Ամովնայ․
Քաբրի } ծերք քաղաքին․
Քարմի }



Печ. позв. 9. Сент. 1841 г. Ценз. С. Р. Архим. Агапитъ.

# ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԲԵՏՈՒ-ՂՈՒԱՑ․

## ԱՌԱՋԻՆ ԱՆՁՔ․

—

### Ոզիա, Քաբրի, Ամիտալ:

### ՈԶԻԱ․

Առ ինչ է այս ձեր խռովութիւն, ո՛ բնակիչք Բետուղուայ, առ ինչ է այս ձեր երկչոտութիւն, յերեսս ձեր չէ մնացեալ կերպարանք մարդոյ, և բոլորովին պարտուեալ փարէք զինս, արդարև բանակն բաբիլոնեան 'ի նեղ է արկեալ զմեզ, այլ տակաւին անյաղթ եմք, համբերութիւն ձեր վտանգաց այսչափ միայն էր: Ես առաւել քան 'ի զօրութենէ թշնամւոյն․ յերկչոտութենէ ձերմէ պարտուեալ դողամ: Մեծագոյն վիշտ մեր է խռովութիւն ձեր, որ միայն զմեզ պաշարէ: Հողմն ծովու որչափ և թեթև իցէ, կորուսանէ զնաւն, երբ նաւավարն երկչոտ է:

Չէք մեծագոյն՝ այլ ինչ յանցանք․
քան զհատումն՝ յուսոյ:

Օ՜հ հաւատ յոյս՝ ընդ ջերմ սիրոյ·
  ջահ են անշէջ՝ լի լուսոյ ։
Եթէ ՚ի նոցունց՝ մին պակասեալ,
  ՚ի վառամանէն՝ շիջանի ։
Ընդ և ընկերքն՝ աղօտանան
  երբ լուսոյն ձէթ՝ պակասի ։

## ՑԱՐՐԻ·

Առ ի՞նչ յուսայցուք·

## ԱՄԻԴԱՆ·

Առ մի՛լ յուսասցուք, առ զօրականս արդեօք· որք տիւ և զգիշեր աշխատեալ վաստակաբեկ անկեալ կան, առ զինուորս որոց բազուկք ՚ի քաղցուէ կթուցեալ են, առ քաջ մարտիկս· որք յորժամ աղաղակէ ընտանեաց վհատեալ են, ՚ի սահմանակի՞ց քաղաքս որք անկան ընդ իշխանութեամբ թշնամեաց, առ բարեկամս որք լքին զմեզ· թէ առ Աստուած որ բարկացեալ է ՚ի վերայ մեր ։

## ՑԱՐՐԻ·

Եւ մինչդեռ ՚ի հրապարակս քաղաքին, ուր բայց ՚ի թշուառութենէ չերևին տեսանել ինչ, ոչ կարէ գոյ, և ոչ աշխարհ ։ Ոմանք վհատեալ ՚ի կենդանւոյս, և ոմանք զբեղ հանապազ պատճառ աղէտից, ոմն զանցեալ մեզ՝ և ոմն զկերակուր յորս առեալ կոծէ, ոմն փախչի բայց ոչ գիտէ ո՛ւր դիմէ· այլ ոմն յ՚ելկեր թմբալիր զքան խօսել ոչ զօրէ ։

Այդ և Ճչիւն՝ անմեղ մանկանց·
  որպէս աղճուր՝ անկեալ ՚ի խաւարական տիկ՝ բարբառի։

Մ՛ի՛ ոք՝ իւր վերջին օր՝ զօրս համարեալ, մռմռի,
 Ը բարեկամն՝ և սիրելոյ՝ զվերջին բան, բարբառի։
Որք տակաւին՝ հաստատ յուսով,
 որչափ մարթ է՝ վաստակին։
Ծաղր և ծանակ՝ ամենեցուն,
 խենթ և խելառ՝ համարին։
Երբ տեսանեմք՝ զոք լալական.
 թէ ակամայ՝ թէ կամաւ։
Եւ մեք նմին՝ ողբակից.
 զօղս լնումք՝ կականաւ։
Երբ տեսանեմք՝ զոք դալկահար.
 ՚ի գոյն դեղին համակեալ։
Եւ մեք փոխեալ՝ զգոյն դիմաց,
 լինիմք նմա՝ նմանեալ։
Մա՛ն ինձ տալ՝ այս թշուառութի՛ որ զամենայն ոյժ,
 ՚ի յաղթօղ բաղկաց՝ բնութեան բարձեալ՝ չթող
 այլ ևս ժոյժ։
Օ՛ն յախտաժամի, և ՚ի զօրուն, թողու անվհատ.
 Ո՞ւր անդ անկեղծ սէր. ո՞ւր հաստատուն յոյս, ո՞ւր
 մաքուր հաւատ։

## ՈԶԻՄ.

Զանցեալ պատմութիւնս մատեանքը ողղեալք։ Ո՞հ, որպիսի՞ ապերախտութիւն է, ՚ի միտ բերել թէ ո՞վ եմք մեք։ Տէր մեր Աստուած է, Աստուած. ՚ի սէր մեր զո՞րպիսի հրաշս, և զո՞րպիսի զօրութիւնս արար, խորհեցարո՛ւք։ Ա՛ բաժանեաց յերկուս մասունս զջուրն ՚ի նեղքդ ատից մերոց, ո՛ քաղցրացոյց

զգաստութիւն ջուրց, ո՛ բղխեցոյց յապառաժ վիմէ զաղբիւր քաղցր ջրոյ, ո՛չ ապաքէն Աստուած էր, որ յանհետ անապատի առաջնորդեալ խնամարկէր զմեզ։ Յետ այսքան հրաշից յուսահատ լիցուք, զի մատնեաց 'ի ձեռս թշնամեաց, ո՜ն անդր։ Ամբարտաւանն Հողոփեռնէս արդ՛արև 'ի բազում ժամանակաց երկիւղ տայ մեզ, այլ չկարէ դնել 'ի վերայ մեր, ո՛չ ապաքէն և այս յԱստուածային կամաց է։

## ՔԱԲՐԻ.

Թէպէտ Ճշմարիտ են բանք քո, բայց անօրէնն այն 'ի հեռուստ առաւել ես 'ի նեղ էարկ զմեզ, զջուրն անգամ հատեալ անօրէնն տիրեաց։

Զափով ջամբեմք՝ ջուր ընտանեաց,
  կուժք իսկ փութով՝ չորանան։
Եւ որք ըմպենն՝ սակաւ սակաւ,
  զովութ անձանց՝ չստանան։

## ԱՄԻՏԱԼ.

Ո՜հ, ո՞ր զինու կարեմք զդէմ ունել թշնամւոյ մերում, որ սնանի մերով նպարաւ, հայեա՛ց միանգամ յերեսս մեր, թէ յո՞ր կերպարան փոխեցայք, շունչք մեր սպառեցան, լեզուք մեր 'ի քիմս մեր կցեցան. որչափ յաւելուն թշուառութիւնք արժանի ողբոց. արտասուք յաչաց այնչափ նուազին։ Ես զանձնէ ինչ ո՛չ հոգամ, այլ ըստ որում մայր եմ որդւոց, ո՛հ, զորդւոցս՝ զորդւոցս միայն հոգամ, որք պատեալ զինև մեռանին 'ի ծարաւոյ, և ես չկարեմ օգնել ինչ, ո՛հ այս ցաւ այնպիսի անօրինակ վիշտ

է, զոր ո՛չ զգայ, կին՝ որ չէ եղեալ մայր։ Լո՛ւր ինձ Ոզիա, առաջին պատճառ թշուառութեան մերոյ դո՛ւ ես, որ ո՛չ խօսիս զհաշտութիւն ընդ թշնամեաց, կատարելով զկամս նոցա, դու քեզէն տեսանես զի հարիւրաւոր անձինք 'ի միում վայրկենի մեռանին, այլ տակաւին անփոյթ արարեալ յանհոգս կաս, զպատուհասն մեր յանձն առնեմք արդար դատաւորին այ՝ որ դատ արասցէ ընդ մեզ և ընդ քեզ։

Ցայս մեր վիճակ՝ յայս աղաղակ,
հայեցեալ՝ ո՛չ ողորմիս։
Կարծր սրտիւ՝ քան զքարեայ,
փրկութեան ճար՝ ո՛չ խորհիս։
Եթէ անգութ՝ մեր թշնամին,
առցէ զհամբաւ՝ մեր վշտին։
Գո՛ւցէ և նա՝ ողորմեսցի.
զի սիրտ ունի՝ մարդկային։

ՈԶԻԱ՝

Մեր բարութեան մարթ է ակնունել յազգէ որ ոչ զհաւատ ունի և ո՛չ զկրօն, և մեր այն թշնամի է։

ՆԱԻՏԱԼ՝

Նաւել քան մահուամբ ծանակ լինել թշնամեաց, և 'ի գիրկս մեր տեսանել զմահ որդւոց մերոց և կանանց, լաւ չէ՞ կեալ և զԱստուած օրհնել։

ՈԶԻԱ՝

Ո՛հ, ո՞վ գիտէ թէ անօրէնն այն, թողու մեզ զկեանս մեր։

## ԱՄԻԳԱՅ·

Գտանեն յայնժամ կատարեալ 'ի սրտի, ազատեալք 'ի
քաղցէ և 'ի ծարաւոյ, յորս կայ Ո՛գիս, չէ մի
սնէր, երջանկացուցանեմք զքեզ 'ի զօրութիւն
երկնի և երկրի զոր դուդ պաշտես, եկ բայց զգրուծս
քաղաքին, և զթշնամին քեզն հրաւիրեա 'ի ներքս
մտանել ։

## ՈՕԽՆ·

Զ՛ինչ խօսիք որդեակք·

## ԱՄԻԳԱՅ·

Ա՛յո՛ այո՛, 'ի կողմանէ բոլոր հասարակութեան
խօսիմ, 'ի հաշտութիւն խօսեցաք, եւ բայց զգրուծն
կամիս, 'ի միասին զխեցցո՛ւք 'ի բանակ Հոլոփեռ-
նեայ, այլ ուրիշ ճար չկայ, անմեռքեան զայս կամիմ։

## ԵՐԳԻՉՔ·

Հրամմեցէք 'ի բանակն ։

## ՈՕԽՆ·

Ո՜հ· լուարուք ինձ որդեակք իմ, (ցած) ո՜հ Աստուած
իմ զինչ զործեցիր ցայց ինձ ճանապարհ ։ Ես
ո՛չ ընդդէմ դառնամ այս հաշտութեան ձերոյ,
միայն աղաչեմ զձեզ, դոյզն՝ ևս սպասեցէք· շատ
չկամիմ՝ որդեակք իմ, համբերեցէք այլ ևս դա-
ւուրս հինգ, դուցէ յայնմ միջոցի Աստուած ներես-
ցէ մեզ, և զպատուհաս փառաց իւրոյ մի ածցէ ապա-
ցէ թշնամեաց, և եթէ զինի հնգից աւուրց ո՛չ
լիցի օգնութիւն· յայնժամ բացցո՛ւք զդրունս· և
զթշնամին առցո՛ւք 'ի ներքս·

## ԱՄԻՏԱԼ·

Եւ մեք 'ի պատիւ հրամանի քոյ համբերեմք ։

## ՈԶԻԱ·

Այժմ եւ ընդ ձեզ զձեռս համբարձեալ, յերկնից զօգնութիւն մաղթեմ, միայն աղօթքն զծառայն ընդ Տեառն հաշտեցուսցեն ։

Դու Տէր Աստուած՝ գթա 'ի մեզ,
թէ և մեղաք՝ այլ քո եմք ։
Թէ խրատել՝ զմեզ կամիս,
մի տար այլոց, քանզի մեք յօժար եմք ։

## ԵՐԳԻՉՔ·

Թէ խրատել զմեզ կամիս,
մի տար այլոց, քանզի մեք յօժար եմք ։

## ՈԶԻԱ·

Օ՜ հաւատարիմ՝ քո պաշտօնեայս,
անօրինաց՝ մի մատներ ։
Թէպէտ սիրով՝ 'ի խրատել,
զքոյդ ծառայս՝ կամիս Տէր ։
Այլ անօրէնք՝ մեծաբանեալ,
բարձրաբարբառ՝ չաստացեն ։
Ո՞ւր է Աստուած՝ սոցա փրկիչ,
ծաղր արարեալ՝ գոչեսցեն ։

## ԵՐԳԻՉՔ·

Այլ անօրէնք՝ մեծաբանեալ·
բարձրաբարբառ՝ չաստացեն ։

Ո՛ւր է Աստուած՝ սոյա փրկիչ,
ծաղր արարեալ՝ գոչեսցեն ։

ՔԱՐԲԻ.

Ո՛վ է այն կին, որ գայ, ՚ի կերպարանս նորա զարմանալիք երևին, և ՚ի դէմսն պայծառ լոյս, արեգակն է արդեօ՞ք թէ լուսին, չգիտեմ ում նմանեցուցից։

ԱՄԻՏԱՅ.

Անհիւս ծամք, սեաւ զգեստք, և խոնարհադէմ ընթացք նորա նման են դստեր Մերարայ ։

ՈԶԻԱ.

Յուդի՞թ է,

ՔԱՐԲԻ.

Այո՛, նա է այրի կին Մանասէի ։

ՈԶԻԱ.

Վասն է՞ր այսօր ՚ի դուրս ելեալ է ՚ի պատնիշափակ լեյէն ։

ԱՄԻԴԱՅ.

Գիտեմ, զի այս կին, փակեալ ՚ի նեղ խցի զգիշերն աղօթիւք և զտխուր պահօք անցուցանէր։ Յորժամ ունէր զինչս և զգեղեցկութի, ո՛չ ընչիւք հպարտացաւ, և ո՛չ գեղօք պարծեցաւ, մինչ զի ցորչափ յաշխարհի է, ո՛չ ոք կարաց ասել ինչ զնմանէ սուտ ուղորդ, բայց չգիտեմ՝ յայս նուագ...

## Յուդիթ և առաջինիքն.

### ՅՈՒԴԻԹ.

Ո՛վ Ոզիա, զի՞նչ է այս, ո՛վ իշխանք Բետուղուայ, զի՞նչ է այս համբաւ 'ի բերան ամենեցուն, լսեմ զի եթէ յընթացս հինգ աւուրց, ո՛չ եկեսցէ օգնութիւն, զքաղաքն մատնելո՞ց էք 'ի ձեռս թշնամեաց: Վա՜յ մեզ: Ո՛ խղճալիք ա՛յս է ջանք գտանելոյ զճանապարհ փրկութեան, ո՛հ ամենեքեան յանցաւոր էք, ժողովո՛ւրդք դուք 'ի մի կողմանէ, և իշխանք 'ի միւս կողմանէ մեղանչէք, ոմն յուսահատ յԱստուածային խնամոց, այլ ոմն զօրութեան նորա զչափ դնել ջանայ, ոմն փոքրոգութեամբ, այլ ոմն ըստ բերման գործէ, ոմն զյոյս չունի, և ոմն զերկիւղ, այլ ո՛չ զերկիւղն չափէք, և ո՛չ զյանդգնութիւն, անյուսութիւնն և յանդգնութիւնն միօրինակ մեղք են, առաքինութիւնն զչափ ունի, ամենայն որ զանցանէ զչափով մեղք են:

Յորդ անձրևօք՝ թէ առերօթք՝ միշտ լինին,
 և թէ 'ի սպառ՝ երաշտութի, անձրևաց ջուրք՝ պակսին:
Երկոքին ևս՝ միօրինակ,
 զդաշտ զանտառ՝ նա և զօդ:
Ապականեալ՝ յաղարտ վարեն,
 զբերս երկրի՝ և զխոտ:
Այսպէս երբ յոյս՝ անցեալ զչափ,
 անհոգ թողու՝ զմարդիկ:
Չպարտանան՝ խնդրել զճար,
 կամ փրկութեան՝ ինչ գործիք:

Իսկ չար երկիւղն,
երթէ ուրեք՝ հաստատի ։
Ընդ հաւատ՝ արմատախիլ,
այլ ո՛չ բուսոյք՝ ստեղծնի ։

ՈՕԶՄ.

Ո՛վ ընտիր և իմաստուն կին. Աստուած միայն տայ քեզ բարբառել ։

ՔԱԲՐԻ.

Ո՛կարէ զմնձն ազատ կործել յայդմ պակասուէ:

ՈՕԶՄ.

Դու հաճոյ ես Այ, դու արգե՛լ զայս պատիժ, և ցոյց մեզ ճանապարհ փրկութեան ։

ՅՈՒԴԻԹ.

Զդէմ կացէք՝ փորձանաց,
և առ Աստուած՝ յուսացէք ։
Նա զամենայն՝ տուրս նորա,
մեզ 'ի խրատ գիտացէք ։
Որ զամենայն՝ իւր սիրելեաց,
զհաւատն այսպէս՝ նա փորձէ ։
Գիտել ճշդիւ՝ թէ 'ի փորձանս,
անդրդուելի՝ հաստատ է ։
Այսպէս. Յակոբ, Մովսէս, Սահակ,
մեր սիրելի՝ նախահարք ։
Զհաւատոյն՝ ցուցին հանդէս.
զդէմ կացեալ՝ իբրու արք ։
Բայց անհաւատք՝ նորին փառաց
'ի չար օձից՝ և կորձաց ։

Ես կամ ՚ի թէժ կրակի մէջ,
  տոչորեցման՝ հնոցերաց ։
Թէ զմեր մեղս՝ ՚ի կշիռ դնեմք,
  այս մեզ դեռ յոյժ սակաւ է ։
Յայս կերպարան՝ թէ Տառապո՛ւք,
  յատուկ փրկչին՝ խրատ է ։
Քանզի Աստուած՝ մեր Արարիչ,
  զոր ինչ կամի՝ բարի է ։
՚Ի բարկութեան՝ իւրում անգամ,
  զսէրն առ մեզ՝ միշտ յիշէ ։
Քոյով բանիւ՝ վկայեցեր,
  թէ Աստուծով՝ ես խօսիմ ։
Հաստատ ինձ՝ զի և մօրքս,
  զնմանէ՝ միշտ խորհիմ ։
Միտքս իբրև՝ լուսոյ խորան·
  զճառագայթ՝ լուսափիւռ ։
Յանձն և հոգիս՝ համակ սփռէ,
  ՚ի մէջ վշտացս՝ ունի զիւր ։
Այլ թէ զինչ է, մի հարցաներ,
  միայն արա՛ զոր ասեմ ։
Յերկնային՝ կա՛ց առ դրան,
  խնդաց քաղաքիս՝ գամ և ես ։
Այլ դուք ո՛վ արք, հաստատ յուսով՝ յանկեղծ սէր,
  կացէք յաղօթս զի ուղղեսցէ զոր ես խորհիմ՝ երկ-
    նից Տէր ։

## Ոգիս և Երգիչք·

Դու Տէր Աստուած՝ գթա՛ ՚ի մեզ,
  թէ և մեղաք՝ այլ քո եմք ։

Թէ խրատել՝ զմեզ կամիս,
մի՛ տար այլոց, քոյոյդ մեք յօժար եմք :

---

## Քարմի. Աքիովր և առաջինքն.

ՔԱԲՐԻ.

Տէր իմ Քարմի գայ :

ԱՄԻԴԱԼ.

Ընդէր զթիկնապահն չունի ընդ իւր :

ՈԶԻԱ.

Զի՞նչ է Քա՛րմի, զի՞նչ համբաւ ունիս :

ՔԱՐՄԻ.

Զկալանաւոր բերեմ առ քեզ, զորք Թշնամւոյն զայրս զայս կապեալ ՚ի վերայ փայտի արկին ՚ի ներքս. անուն նորա Աքիովր է, իշխան Ամօնացւոց:

ՈԶԻԱ.

Հողեփեռնէս այսպէ՞ս հայի առ բարեկամս :

ԱՔԻՈՎՐ.

Այս օրէնք են հպարտից, եթէ լսեն զբան ինչ հակառակ կամաց բարկանան.

ՈԶԻԱ.

Պարզ խօսեա՛ց զի լուայց :

ԱՔԻՈՎՐ.

Նշլիցին բանք քո խօսեցայց. Հողեփեռնէս զայրա-

ցեալ ընդ բազմօրեայ պաշարումն Բետուղուայ, խորհուրդ եհարց ինձ, և ես զանցեալ պատմութիս մի առ մի յայտնեցի նմա. ծանուցանելով զծագումն և զծնունդ ազգին իսրայէլի, զփոխել նոցա ՚ի Խառանէ յԵգիպտոս, զբռնութիւն իշխանին Եգիպտոսի, և զազատութիւն ձեր հրաշիւք, և զնշանս զոր տեսեք յանապատին, զկերակրելն երկնային հացիւ, և զպատերազմիլն սակաւուք ընդ բազմաց: Վերջապէս ասացի, մեք տեղեկացա՛ւք, եթէ նոքա մեղուցեալ են ընդ դէմ այ իւրեանց, յաղթութիւնն մեր է, իսկ եթէ հաշտ են ընդ այ իւրեանց մի՛ յուսար յաղթել:

ՕԶԻԱ.

Ո՛վ Ամենազօր Աստուած, բերանով թշնամեաց անգամ յայտնես զհրաշս քո:

ԱՔԻՈՎՐ.

Ի վերայ այսր բանի խիստ սրտմտեալ Հողոփեռնէս, մերժեաց զիս յաչաց իւրոց, և առաքեաց յայս կողմն, որպէս զի ՚ի միասին ընդ ձեզ և զորև իմ՛ բարձցէ յերկրէ:

ՕԶԻԱ.

Մի՛ թէ անօրէնն այն այդչափ յուսացեալ է ՚ի զօրութիւն իւր:

ԱՄԻՏԱԼ.

Այրդ այդ ամենեւին անգո՛ւթ է:

ԱՔԻՈՎՐ.

Ի ներքոյ երկնից չի՛ք քան զնա այր ամբարտաւան

և անգութ, ՚ի զայրագին գոչմանէն ամենայն զօրաւոր սիրտք վհատին ։

Դէմքն անճոռնի՝ ինքն տգեղ,
  զանձն կարծէ՝ ոմն Աստուած ։
Զերկին զերկիր՝ իւր հրամանաւ,
  կարծէ եկեալ՝ ՚ի հաստուած ։
Բարքն մոլի՝ կամքն անհաստատ,
  ալէկոծեալ՝ իբրև ծով ։
Պատժել զանմեղս՝ միշտ է պատրաստ,
  չիք գթութիւն՝ նորա քով ։

## ՌՕԽԱ·

Ահ երկնչիր բարեկամ, զի ամենազօրն Աստուած, զորոյ զփառսն պղծեսցես, զամենայն չար խորհուրդ նորա դարձուցանէ ՚ի գլուխ իւր, Աստուած զքեզ ո՛չ տամից խորհրդոց ապարեաց առ մեզ, զօրու՛ թշնամւոյն զմեզ…

## ՔԱՐԲԻ·

Յուդիթ գայ ։

## ՌՕԽԱ·

Դուք ամենեքեան ՚ի բա՛ց գնայցէք, բարեկամ զոր հարցանելոց եմ քեզ՝ մնասցէ յայսմն, մանկո՛ւնք տարէք զիշխանս զայս յապարանս իմ, և ես փութով՝ գամ, երթ Աքիոր, ուրախ լե՛ր, զկնի մեկնելոյ ՚ի քոյոց, ես յուցից քեզ, զբարեկամութիւն, զհայրութիւն, և զեղբայրութիւն ։

## ԱՔԻՈՎՐ·

Ես ո՛չ յուսայի թէ այսպիսի շնորհաց հանդիպելոց եմ ։

Ոզիա. Յուդիթ և 'ի հեռուստ Նորգինէք.

ՈԶԻԱ.

Դու ե՞ս Յուդիթ, թէ երեկոյեան լոյսն՝ այլ ընդ այլոյ յուսանէ :

ՅՈՒԴԻԹ.

Նա եմ.

ՈԶԻԱ.

Զարմա՜նք :

Ընդէ՞ր զգեստ սգոյ .քո փոխեցեր 'ի բարակաման բեհեզս, ընդէ՞ր 'ի բաց արկեալ զսևաթոյր .քոյն, որ զդէմ ունէր զերկեցկութեան քում զարդարեալ ես բոսորանեալ ծիրանեօք, մերժեալ զմոխիրն զոր ցանէիր զգլխովդ. օծեալ ես իւղով անուշիւ, հիւսեալ զհերս գլխոյ .քո, և զապարօշն կապեալ 'ի ճակատ զօր հարսնութեանդ նկարագրես, ազուցեալ զոտս .քո յակներօծ կօշիկս, և արկեալ ապարանջան 'ի ձեռսդ, և զքայլս յականց պատուականաց ընդելուզեալ մարգարտով 'ի պարանոցդ, և մատանեօք զարդարեալ զմատունսդ, զո՛ր 'ի կերպարանս .քո՝ իբրև յերկնի աստեղք շողշողան :

ՅՈՒԴԻԹ.

Ժամանակն անցանէ, Ոզիա՛. բա՛ց զդրունս, զի ելից արտաքս.

ՈԶԻԱ.

'Ի դրո՞ւրս կամիս ելանել.

### ՅՈՒԴԻԹ.

Այո՛:

### ՈԶԻԱ.

Աւանց գլխուց և ընկերաց:

### ՅՈՒԴԻԹ.

Բաւ է. մի՛ ևս խօսիր, չկամիմ ունել զոք ընդ իս բա՛յց ՚ի սոյն աղախնոյ:

### ՈԶԻԱ.

(յ-ծ) Դի բանս որ մեծագոյն համարձակութիւն է, և հրաշք իմն ըմբռնեն զմիտս իմ, և զկամս (ճ-չյչ) ուլ... կին դու... սակաւ ինչ... (յ-ծ) չհամարձակիմ՝ հարցանել, թէ յո՛ յուսացեալ է, և ո՛ւր կամի գնալ. (ճ-չյչ) ե՛րթ կին դու. Աստուած հարցն մերոց եղիցի ընդ ձեզ:

### ՅՈՒԴԻԹ.

Անդէն միայն, և աներկիւղ՝ ընթանամ,
՚ի մութ գիշեր, ո՛չ երկնչիմ, այլ երթամ:
Որ զիս յայս գործ, կարգեաց յինէն, անքա՛ծ է.
գո՛գ յականջս իմ, յաղթես սպատգամ, միշտ հնչէ:

### ԵՐԳԻՉՔ.

Զնոր զարմանս՝ մեք տեսանեմք,
որ չէ եղեալ՝ յաշխարհի:
Զի ամենից՝ զվիշտ պհող,
յանձն բառնայ՝ կին այրի:
Ասպազայից՝ իբրու անգէտ,
յանդուգն մեզ՝ երևի:

Բայց գործք նորա՝ չեն ըստ բերման,
  այլ խոհական՝ և արի ։
Ինքն զգեցեալ՝ զնուրբ զգեստս,
  որպէս երբէք՝ պճնեալ չէ ։
Զսուրբ հոգին՝ ՚ի ներքս ՚ի սիրտն,
  ընդ զգեստուք՝ պահպանէ ։
Ուր երթայ չասէ,
  այլ մեծ յոյս ազդէ ։
Զսկիզբն հրաշիցս՝ որ կարաց զգալ.
  Նա միայն գիտէ ։

---

## ԵՐԿՐՈՐԴ ԱՆՁՔ ։

## Ոզիա և Աքիովր.

### ԱՔԻՈՎՐ.

Վասն է՞ր այդչափ անարգես զկուռս մեր Ո՛զիա. մի՞ թէ ես քոյոյդ զդոյն առնեմ ։

### ՈԶԻԱ.

Արարք իմ ո՛չ եթէ չարալեզուութիւն է ո՛վ իշխան, այլ աշխոյժ կրօնի ։ Ես տեսի ՚ի քեզ սերմն հաւատոյ, և զնոյն աճեցուցանել ցանկամ.

### ԱՔԻՈՎՐ.

Եթէ և առ Արարիչն Ձեր հաւատացից չէ՞ բաւական ։

ՈԶԻԱ·

Չէ բաւական,

Այլ պարտիս զսուտ Աստուածս քո 'Նոպաւ մո-ռանալ, և զմերն միայն պաշտել :

ԱՔԻՈՎՐ·

Ո՛ հաստատեաց զմիութիւն նորա :

ՈԶԻԱ·

Դրջան ամենայն ժամանակաց, և ճշմարիտ վկայու-թիւն Հարց մերոց, և նոյն ինքն Աստուած, զորոյ զզօրութիւն և զհրաշս պատմեմ, սուրբ բերանով խուրով ծանոյց զինքն երկու բառիւս ,, ես եմ Աս-տուած որ էն :

ԱՔԻՈՎՐ·

Աւելորդ է ինձ առ այժմ վկայութեանց ձերոց ընդ-դէմ պատասխանել :

ՈԶԻԱ·

Բարի է, վկայութիւն մեր 'ի զո՛ւր լինի, ըստ որում սուտ ես, թէպէտ սուտ ես, այլ մարդ ես, խելք քո դատախազ լինի քեզ : Յաղթութիւն և անյաղ-թութիւն մնասցէ 'ի մի կողմն, մեք 'ի խնդիր եղ-ցո՛ւք ճշմարտութեան, առանց ջերմութեան արեան, տո՛ւր հարցմանս պատասխանի :

ԱՔԻՈՎՐ·

Ասա՛ զի լուայց·

ՈԶԻԱ·

Կարէ՞ յաշխարհի լինել ինչ առանց պատճառի :

ԱՑԻՈՎՐ·

Ո՛չ, տ̃կն ։

ՈՕԻԱ·

Բարձրացո՛ զմիտս քո 'ի պատճառս պատճառաց, և տես՛ թէ միտքդ դադարին յանպատճառ իմ̃ն պատճառ՝ թէ ո՛չ ։

ԱՑԻՈՎՐ·

Այդ փաստ զօրաւոր ապացոյց է գոյութեան Աստուծոյ այլ ո՛չ միութեան, գո՛ւցէ և Աստուածք մեր իցեն 'ի թուոյ այնոցիկ պատճառաց ։

ՈՕԻԱ·

Ո՛վ իշխան, 'ի սէր հոգւոյդ ասա՛, զորո՞ց Աստուածոց ասես, զձեռակերտ քարանց և փայտից ։

ԱՑԻՈՎՐ·

Այն քարինք և փայտք, եթէ լիցին պատկեր անմահ իմ̃ն գոյութեան, և յայնժամ ևս ո՛չ կոչին Աստուածք ։

ՈՕԻԱ·

Ո՛չ կոչին, վասն զի բազում են ։

ԱՑԻՈՎՐ·

Եւ զինչ վնաս 'ի բազմութենէն ։

ՈՕԻԱ·

Ես չկարեմ զանկատար իմ̃ն գոյացուն կոչել Ա̃ծ ։

ԱՑԻՈՎՐ·

Ճշմարիտ ասես ։

### ՌՕԽՆ.

Զոր ես կատարեալ ասեմ, ո՛չ չափ ունի, և ո՛չ քանակ:

### ՄՔԻՈՎՐ.

Եւ ես այդպէս հասկանամ:

### ՌՕԽՆ.

Քանզի ձեր աստուածք՝ յոյժ բազմաթիւ են,
ուստի և ըստ քեզ՝ որոշ որոշ են:
Եւ երբ սկսեալքն՝ բազմաթիւ լինին,
անշուշտ և սկիզբք՝ յոգնակի դնին:
Ուստի յայտնեալ լինի՝ ո՛վ անսկզբանն.
սա էր սկիզբն՝ նախ քան զյաւիտեան:
Կամ տո՛ւր ինձ՝ հարցմանս՝ յարմար պատասխան,
կամ սա կուռք են՝ նման և խոտան:

### ՄՔԻՈՎՐ.

Տրամաբանական հանճարովդ զիս կապեցեր, թէ-պէտ չկարեմ տալ պատասխանի, այլ տակաւին ո՛չ համոզիմ, թէպէտ հանճարդ զմիտս կապեաց, այլ խելքս տակաւին չհաճի: Եւ վասն ա̃յ որում միտք ո՛չ հասանեն, զերևելի Ա̃ծս իմ չթողում:

### ՌՕԽՆ.

Եթէ միտք մեր կարէին իսկութեան նորա լինելն հմտանալ, և նա ևս ո՛չ կոչէր Աստուած, ո՛ կարէ գիտել զանհասն զէութիւն, ըստ որում որպէս զմարմինս մեր չէ բաղկացեալ յանդամոց, և ո՛չ որպէս զհոգիս ենթարկի զանազան կերպ, իբրև

զմարդիկ չունի զկերպարանս, և ո՛չ զձև, եթէ խոր-
հիս 'ի նմա զանդամս, զկիրս, և զկերպարանս, բո-
լորովին զկատարելութիւն նորա նուաստացուցանես:

## Ա.ՑԻՈՎՐ·

Ո՞չ ապաքէն դու ինքն սահման դնես մ̃յ, կոչելով զնա սուրբ, և արդար:

## Ո.ԶԻԱ·

Ո՛չ, ըստ որում ես զնա գիտեմ արդար, այլ արդարութիւն նորա միակերպ է, սուրբ կոչեմ զնա, այլ սրբութեանն չատեմ զչափ կամ զորքանութիւն, յամենայն ժամ պատրաստ է յամենայն տեղիս է, թէպէտ չիք նորա տեղի և սահման. եթէ այսորիւք պատմութեամբք իմով, չկարեմ յայտնել զինչութիւն նորա, գէ՞թ ո՛չ մտաբերեմ զխորհուրդս հակառակ փառաց Աստուծոյ:

## Ա.ՑԻՈՎՐ·

Նա այդպէս Ո՛զիա, չէ հնար տեսանել զԱ̃ծ ձեր:

## Ո.ԶԻԱ·

Գուցէ յաւուր միում կարէ մերձ տեսցես, այլ այժմ եթէ խնդրես յամենայն տեղիս տեսանես:

## Ա.ՑԻՈՎՐ·

Զիա՞րդ կարեմ տեսանել զիրն, որ 'ի միում ո՛չ պարունակի:

## Ո.ԶԻԱ·

Թէպէտ 'ի հայելդ յարեգակն աչքդ խոտղին, այլ զլոյս նորա յամենայն տեղիս տեսանես:

Եթէ տեսանել՝ ցանկաս դու զԱստուած,
նա յամէն տե՛ղ է ։
Անձն ամէն մարդոյ՝ և քո միտք անգամ,
իւր բնակետղ է ։
Այլ թէ սորա՝ ո՛չ զօրեսցես,
՚ի համոզել՝ զքո միտս ։
Ցո՛յց ինձ տեղի, ուր չէ Աստուած.
և կասեցո՛ զիս ՚ի յետս ։

## ԱՅԻՈՎՐ·

Ափշեալ կամ չգիտեմ զինչ ասացից, թէպէտ հասկացայ, այլ կարծիք ՚ի մտացս ՚ի սպառ ո՛չ փարատին ։

## ՌՕԽԱ·

Սովորութիւն՝ յորժամ խելաց,
ընդդէմ լինի՝ ո՛վ իշխան ։
Սիրտն ՚ի կարծեաց՝ մէջ տարբերի,
երբ ՚ի ծովու՝ Ովկիան ։
Զանգործ քնար՝ ՚ի գործ դնել,
չէ դիւրին գործ՝ այլ դժուար ։
Քանզի յամէն՝ անեղաց զարկ,
թողու զտեղին՝ ամէն լար ։

## Ամիտալ և առաջինքն.

ՈՀ Ո՛զիա, զինչ է այս, զինչ ուխտեցաք, աղաղակք Բետուղուայ լռեցին, և վասն է՞ր, քանզի չիք ինչ յոյս լաւութեան վիշտք յաւելուն, և ձայնք լռեն, երէկ ամենայն որք զօգնութի խնդրէր, այսօր չիք առ որ ճար խօսելոյ, և ամենեքեան իբրև զարբեալս զանդաչեն ։

Մեզ վճռաբար՝ ելից նշան,
անտի յայտնի՝ բացարձակ։
Թէ ըստ մեղաց՝ մերոց բազմաց,
պատժելոց եմք՝ մեք արագ։
Քանզի այն նաւ՝ փոյթ ընկղմի,
Ոյր ղեկավար՝ անփոյթ է։
Նոյնպէս հիւանդն վաղ մեռանի,
որ անզգայ ցաւոյն է։

ՈԶԻԱ·

Սաստիկ կսկիծն, փութով փարատի, ըստ որում ոմանք ընտելանան, և ոմանք 'ի կրել անկարանան այլ մեք չեմք 'իսպառ անյոյս։

ԱՄԻՏԱԼ·

Գիտեմ, զի յոյս քո մնայ 'ի Յուդիթ, այլ շատ դատարկ յոյս է։

---

## Երգիչք 'ի բացուստ. Քաբրի և առաջինքն:

ԵՐԳԻՉՔ·

Օ յնեցարո՛ւք, քաջացարո՛ւք։

ՈԶԻԱ·

Ո՛հ զի՞նչ է այն աղաղակ։

ՔԱԲՐԻ·

Ե՛լ ընթա՛ 'ի դուրս, աղմուկ ինձ յարեաւ 'ի զօրս մեր։

ՈԶԻԱ.

Ընդէ՞ր,

ՔԱԲՐԻ.

Ո՛ գիտէ ։

ԱՄԻԴԱԼ.

Վա՜յ մեզ, թշնամին եկեալ է.

ՈԶԻԱ.

Ո՛հ, փութացո՛ւք ՚ի տեսանել ։

---

## Յուդիթ Նրգողք, և առաջինքն.

ՅՈՒԴԻԹ.

Օ՛կայ առէք բարեկամք, կացէք.

ՈԶԻԱ.

Յուդիթ է վա՜շ ։

ԱՄԻՏԱԼ.

Ամենազօ՛ր Աստուած ։

ՅՈՒԴԻԹ.

Եկա՛յք, եկա՛յք ո՛ բարեկամք, գոհացարո՛ւք զամենազօրէն ած, որ կատարեալ զխոստումն իւր, ահա՛ ՚ի ձեռն իմ զթշնամին կործանեաց, և զցանկութիւն մեր ելից ։

ՈԶԻԱ.

Եւ զի՞նչ է այս յանկարծ աղաղակ ։

ՅՈՒԴԻԹ·

Զնոյնս ես եւրու ասնել. բայց զհաստակագոյնն տեսցես առ վայր մի ։

ՈԶԻԱ·

Եւ զի՞նչ այժմ Հողեփեռնէս...

ՅՈՒԴԻԹ·

Ո՞ւր է Հողեփեռնէս. կեանք նորա բարձան յերկրէ։

ՈԶԻԱ·

Ո՞ւր տեղ.

կեանք նորա բարձա՞ն յերկրէ ։

ԱՄԻՏԱՂ·

Ո՛հ, զի՞նչ խօսիս.

ԱՔԻՈՎՐ·

Ո՞վ է որ սպան ։

ՅՈՒԴԻԹ·

Ես սպանի.

ՈԶԻԱ·

Դո՞ւ.

ԱՔԻՈՎՐ·

Ե՞րբ·

ԱՄԻՏԱՂ·

Ո՞րպէս.

ՅՈՒԴԻԹ·

Լուարո՛ւք ինձ, թէ զի՛նչ անցին,
առ Թշնամին՝ դիմակալ.
Զի պարզպակէս՝ ես պատմեցից,
զբան չասեմ՝ ծալ ՚ի ծալ ։

Երբ 'ի դրանց՝ ելի 'ի դուրս,
  խեղճ քաղաքիս՝ Բետուղուայ:
'Ի թշնամւոյն՝ պահապանաց
  կալեալ յատեան՝ ես անձայ:
Ժողովեցինքս՝ նստեալ յաթոռ,
  յիս հայեցան՝ ակնապիշ:
Եհարց ուստի՞, և վասն է՞ր գաս,
  կին բամբիշ:
Զեղեալ զվէպս՝ ես յայտնեցի,
  բայց ո՛չ ոճով՝ զինչ պա՛րտ էր:
Այլ 'ի պատրել՝ զամբարտաւանն,
  զոր ինչ յայնժամ՝ արժա՛ն էր:
'Ի գեղ դիմացս՝ սիրահարեալ,
  տխմար մոլին՝ կնադաւ:
Զոր ասէի՝ անշուշտ լինել,
  ունկն դնէր՝ խիստ անձկաւ:
Գո՛ւթ և շնորհ՝ առիս ցուցեալ,
  ընդ իմ վիճակ՝ կարեկից:
Գո՛գ զարտասուս՝ հեղոյր յաչայն,
  զերթ մերձաւոր՝ ազգակից:
(Այլ յայնպէս դէմս, զայն գթութիւն.
  բնաւ չէր մարթ՝ տեսանել:
Թէ Արարչին՝ խնամքն ընդ իս,
  զմիտսն չառնէր՝ բանտարգել:)
Զինչ և իցէ՝ լուաւ բանիս,
  և խիստ գովեաց՝ զիմ փախուստ:
Բարեաւ եկիր՝ ինձ ասելով,
  ետ քաջալեր, գո՛գ յերկնուստ:

Ասէ տեսկէն, լե՛ր դու ընդ իս,
  յեմ խորանիս՝ ոսկեթեւել:
Զայս երեկոյ, տարաժամեալ,
  հաճեա՛ց ընդ իս՝ 'ի ընթրել:
Անդէն բացաւ՝ սեղան գեղեխեալ
  ոսկեայ ափսէք՝ դաստաղաս:
Քաղցր համպղամք՝ բազմատեսակ,
  նեկտար մաքուր՝ յոսկի թաս:
'Ի սէր գեղոյս՝ սիրահարեալն,
  շուտ արբեցաւ՝ 'ի գինւոյ:
Ակն յառէր՝ անթարթ 'ի դէմս,
  մինչ պակասել՝ 'ի յուժոյ:
Եւ ահա՛ դասք՝ սեղանակցաց,
  մէկ մէկ գնացին՝ յիւրեանց տեղ:
Վերջինն ելեալ՝ ձգեաց զդուռն,
  ես մնացի՝ յայն վայր 'նեղ:

## ԱՄԻՏԱԼ.

Մեծ վտանգ է:

## ՅՈՒԴԻԹ.

Թէ Արարիչն՝ զսիրեալս,
  յիւրոց ձեռաց՝ ո՛չ թողու:
Այն վտանգք՝ թեթեւ թուին,
  որպէս զճանճ՝ եւ մեղու:
Իբրեւ գիշերն՝ ընդ միջեցաւ,
  ողջոյն բանակն՝ էր 'ի քուն:
Հողեփեռնէս զանցեալ զչափ,
  արբեալ դնէր՝ 'ի գինւոյն:

Կամաց կամաց՝ իբրև զգող,
ելի 'ի սնարս՝ անկողնոյն ։
Ընպատմելի՝ խոր հառաչմամբ
առ Տէր մաղթեմ՝՝ միշտ անքուն ։
»Տէր Սաբաւովթ՝ մեր Արարիչ,
ահա այս է՝ վերջին ժամ ։
Ում ժողովուրդդ՝ կան սպասեն,
ցլուսանալ՝ տունջեան ։
Ըստ որում դու՝ ինձ խոստացար,
և ես 'ի նոյն՝ ապաստան ։
Նկի յայս վայր՝ սարսափելի,
յայս սարսուելի՝ տեսարան ։
Արդ զօրութիւն՝ տո՛ւր աղախնոյդ,
յայս նուագ ։
'Ի կատարումն՝ իմ խորհրդոյ,
անահ սրտիւ՝ գոլ ազատ ։ »
Զայս ասացեալ՝ առի զսուրն,
որ ընդ սնարիւքն՝ կախեալ կայր ։
Մերկացուցի 'ի պատենէն,
պերթ 'ի մարտի՝ անյաղթ այր ։
Ահեակ ձեռամբ՝ կալեալ զգանգուրն,
աջովն սուր՝ լթերաքամ ։
Առ Տէր յուսով, հարի զգլուխն,
որ չափ զօրէր՝ բազուկս խամ ։

ՈԶԻՆ․

Մեծ զօրութիւն է ։

# ԱՄԻՏԱՒ.

Մեծ վտանգ ․

## ՅՈՒԴԻԹ.

Եբրայ անգութն՝ զաչս իւր անլոյս,
և ո՛չ գիտէ՝ թէ ո՛ւր է ։
՚Ի քուն մտեալ՝ զինքն կարծէ,
այլ անդ ետես՝ թէ սո՛ւր է ․
Յայս կողմն յայն կողմն՝ հայի խոժոռ,
յառնել ջանայ՝ ՚ի տեղւոյն ․
Ետես զհերսն՝ ՚ի ձեռս իմ,
ձայնել ճգնի՝ յօգնութիւն ․
Այլ մոլորեալ՝ շունչն յընթացից·
՚ի խուչափողն՝ չանցանէ ․
Յօդս ցնդեալ՝ անձայն շշունչ,
զբառ յօդել՝ ո՛չ զօրէ ․
Ես կրկնեցի՝ զհարուած դանկին,
զահեղ գլուխն՝ ՚ի մարմնոյն ։
Հատեալ ՚ի բաց՝ ՚ի միւս կողմն,
արկի վնա՝ յարմատոյն ․
Մարմինն ՚ի մէջ՝ ջերմոտ արեանն,
իբր ՚ի ծովու՝ ընկղմէր ։
Ահեղ գլուխն՝ թաւագլոր,
վնոր բարբառ՝ յօդ յօդէր ։
Իսկ ես կացեալ՝ յայս տեսարան,
իբր զմարտիկ՝ յաղթական ․
Կամ և դողամ՝ խիստ երկիւղիւ,
մինչ ցվերջինն՝ ՚ի վախճան ։

## ԱՄԻՏԱՅ·

*Ես միայն 'ի պատմուէն սարսափիմ.*

## ՅՈՒԴԻԹ·

Զշունչ առի՝ անդ միանգամ,
և զոհացայ՝ զԱրարչէս ։
Որ տկարիս՝ ետ զօրութիւն,
գալ մտանել՝ յայն հանդէս ։
Զսաւանին՝ շուրջ զանկողնով,
քարշեալ զկտաւ՝ Նրբաման ։
Զհատեալ գլխոյն՝ պատեցի,
'ի կիր արկեալ՝ զայն յաման ։
Այս աղախին՝ որ ընդ իս է,
կայր սպասէր՝ արտաքոյ ։
Ետու նմա՝ դիւրակիր բեռն,
Հոգեբեռնեալ՝ զոռ գլխոյ ։
Ելի արտաքս՝ 'ի խորանէն,
ո՛չ ոք գտաւ՝ ինձ արգել ։
Կամ ո՛չ տեսին՝ կամ պատուեցին
զուղի ետուն՝ անարգել ։
Այսպէս ընդ գունդս՝ բազմաթիւ,
ընդ պահապանս՝ դաշնակիր ։
Անցեալ եկի՝ առ ձեզ ո՛վ արք,
տալ . լքեալցդ՝ քաջալեր ։

## ՈԶԻԱ·

Հայեցարո՛ւք 'ի զարմանսդ ։

## ՔԱՐՐԻ·

Հայեա՛ց յայցելութիւնդ ։

ԱՔԻՈՎՐ.

Ո՜վ զարհուրելի գլուխ. Հողոփեռնեայ է, ծանեայ…

ՈԶԻԱ.

Մանկո՛ւնք այց արարէք Իշխանին, թալկացաւ.

ԱՄԻՏԱԼ.

Զ՚այսմի ճշմարտութիւնն չկամեցեալ տեսանել, փախչի։

ՅՈՒԴԻԹ.

Մի՛ այդպէս թուեսցի մեզ, չէ՛ մարթ փախչիլ 'ի ճշմարտութէ՛, դուցէ աչք մտաց նորա չե՛ն սովոր, անաղօտ տեսանել զայսպիսի ճառագայթս։

Երբ այն ինչ՝ դուրս գայ,
 յարիւնոտ հրոյ, հրէշ վիթխարի։
Յարեան ուր ցանկայր, չկարէ հայել,
 աչքն խտողի։
Բայց յետ դոյզն աւուրց,
 աչքն սովորի՝ միշտ 'ի նա հայել։
Ցնծալ զուարճանալ՝ անտխուր սրտիւ,
 զակն 'ի նա յառել։

ԱՔԻՈՎՐ.

Ես պարտեցայ ո՛վ մարդիկ. Յուդի՛թ, Ո՛զիա. աշխարհ ինձ կերպարանափոխ եղև, ես յանձին իմում չգտանեմ զինութիւն Աքիովրի, ո՛ փոխեաց զմիտս իմ, զի խորհուրդք իմ և կամք չե՛ն ըստ առաջնոյն, 'ի միտս իմ և 'ի հոգիս միայն Աստուած ձեր է, որ է ո՛ք, և միայն յաւիտեան, այնպէս ճանաչեմ, և այնպէս

հաստատամ, կուռքն զոր ցարդ պաշտէի սուտ են, և ունայն, ափսո՜ս զոհից, պատարագաց, և խնկոց, զոր նոցա մատուցի։ Բա՛ց յա՛յ Աբրահամու չճանաչեմ զայլ Աստուած։ Հաւատոս միայն առ քեզ է Տէր, Աստուած հզօր և անմահ, միայն 'ի քո ձեռաց գիտեմ՝, զաշխարհ, զերկինս և զմահ։

## ԱՄԻՏԱՅ.

Միայն նա չէ, և ես մեղայ, 'ի շատ երկիւղէս 'ի կարծիս անկայ, բարկացուցի զքեզ ո՛վ Աբարիէ. 'ի մէջ վշտացս մոռացայ թէ ո՛վ ես դու, և զինչ կարես առնել։

Ցողնութենէդ՝ անյոյս եղեալ,
  հողխ զքեզ՝ բարկացոյց։
Ներեա՛ Աստուած իմ՝ իմ Աբարիէ.
  լցի զչափ՝ յանցուածոց։

## ԲԱՐԲԻ.

Զօրակա՜ն ծայրագոյն խնամն ցուցեր մեզ Աբարիէ։

---

# Քարմի և առաջինքն.

## ՔԱՐՄԻ.

Բանք քո ճշմարտութեան ո՛վ արի նահատակ, զի բարեկանեան զօրք զմնեանս կոտրեն։

## ԱԶԻԱ.

Երկէր զի մի լիցին պատրանք երեւակայութեան։

ՔԱՐՄԻ·

Ո՛չ, քանզի զբաղեալս 'ի նոցանէ աչօք տեսի, զմիա-ցորդսն և զփախստեայս լաւ նկատեցի և ըստ բանի Յուդիթայ հրամայեցի զօրաց մերոց աղաղակ բառնալ 'ի պարապոյ·

ԱՄԻՏԱՆ·

Լու աստի լսելի լինին ։

ՔԱՐՄԻ·

Զօրք թշնամւոյն իբրև լուան զաղաղակ մեր, կարծեցին սկիզբն առնումն պատերազմի, և աճս փութացան 'ի բանակ Հոլոփեռնեայ լսել 'ի նմանէ զպատգամ, և զինչ, իբրև տեսին զմարմին նորա թաթաւեալ յարեան, աղաղակաւ դարձան յետս առ զօրսն խառնեալս 'ի ձայնէ մերմէ ։ Այս համբաւ տարածեցաւ 'ի զօրսն, ծառք և մայրեք· թուփք և քարինք թուեցան նոցա երբայեցիք զօրք, ուստի դարձեալ 'ի փախուստ սկսան կոտորել այլ զընկեր իւր, եթէ մին խոնարհէր յոտն կացուցանել զբարեկամ իւր անկեալ 'ի խաւարն անդ, այլ ոմն եկեալ 'ի յետուստ, և զնա նետահար առ սփռեալսն արկանէր, և այնպէս գուցեմն և դաշեմն զօրս ինքեան, յորմէ երկուցեալ տաճիկ երիվարք նոցա· սկսան և նոքա խրտնել կամեն, գլխակոյծս և զսան-դամնտամուտս և զնոր իմն կտրած 'ի զօրսն յարացանել, ձիք խռնջին· մարդիկ վայեն, ոմանք անէծանեն, և ոմանք 'ի խոր սրտէ հառաչեն ։

Յիմարութիւն՝ օրհասին·

Երայ զանտես՝ Ճանապարհ ։

Ոմն երկնչի, ոմն փախչի.
  ոմն մատնի՝ 'ի խաւար ։
Յայնմ սոսկալի վիճակի,
  ո՛չ ոք գիտէ՝ զի՞նչ առնէ ։
Որ երկնչի՝ խիստ երկիւղիւ.
  բնաւ չգիտէ՝ ուստի՞ է ։
Իսկ որ փախչի՝ պերթ մահայերծ,
  չգիտէ վասն է՞ր՝ է փախուստ ։
Որ մեռանի՝ լեղապատառ.
  չգիտէ զմահուն՝ զգալուստ ։

ՌՕԺԻՆ.

Ո՛հ Աստուած իմ, երա՛զ է արդեօք.

ՔԱՐՄԻ.

Ո՛չ լսես զաղաղակդ, այս ձայն զոր լսես, աղաղակ փախստէիցն է, որ հեռաւորաց կարծիք թուի ։

Այլ մեզ դիմակայ՝ չմնացին զօրք,
  նետից և սրոյ՝ ո՛չ մնացին պէտք,
  զի զնոյն սպաշտօն՝ լցին փախից դէպք ։

ՌՕԺԻՆ.

Օ՜հ եղերո՛ւք փախստէից, և զմեծ մասն աւարին տո՛ւք Յուդիթայ ։

ԱՄԻՏԱԼ.

Ո՛վ արբէ կին, առաւել քան զամենայն կանայս Աստուած զքեզ պատուեաց և օրհնեաց ։

ՔԱՐՐԻ.

Քաջութիւն քո, յամենայն դարս և 'ի ժամանակս գովեսցի ։

ԱՔԻՈՎՐ·

Փրկիչ ես Իսրայէլի, և փառք նորա ։

ՅՈՒԴԻԹ·

Այս գովութիւնք՝ չեն ինձ դէպ·
այլ Արարչին՝ մի միայն ։
Որ իմ՝ ձեռամբ՝ իբրև գործեաւ,
արար զհանդէս՝ քաջութեան ։

---

## Յուդիթ և Երգիչք:

ԵՐԳԻՉՔ·

Փառք և պատիւ՝ մեր Արարչին,
որ ընդ մեզ է՝ յաւիտեան ։
Զթշնամին՝ մահու մատնեաւ,
արար խապառ՝ ցիր և ցան ։

ՅՈՒԴԻԹ·

Ի բաբելոնէ՝ եկն զօր բանակ,
զօրսն պատրաստեալ՝ պարսկական դաշնակ:
Դաշտք մարդկամբք լցան, առուք չորացան·
Իսրայէլ կարծեալ՝ աշխարհի վախճան :

ԵՐԳԻՉՔ·

Փառք և պատիւ՝ մեր Արարչին
որ ընդ մեզ է՝ յաւիտեան ։
Որ զթշնամին՝ մահու մատնեաւ·
արար խապառ՝ ցիր և ցան ։

## ՅՈՒԴԻԹ.

Անգութ զօրավարն, անօրէն գնդաւ՝
եկն բարկութեամբ :
Շղթայ, սուր, և զահեղ կրակ՝
եցոյց բռնութեամբ :
Բայց բաղդն յանկարծ.
իբրև մրրիկ յեղափոխեցաւ :
Սաստն իբրև փոշի, բարձեալ ’ի յերկրէ՝
յօդս ցնդեցաւ :

## ԵՐԳԻՉՔ.

Փառք և պատիւ մեր Արարչին,
որ ընդ մեզ է յաւիտեան :
Որ զթշնամին մահու մատնեալ,
արար ’խայտառ ցիր և ցան :

## ՅՈՒԴԻԹ.

’Ի մի վայրկենի, այն ահեղ բանակ՝ ցիր և ցան եղև,
Պարսիկ Ասորւոյ, Ասորի Պարսկի՝ թշնամի եղև :
Ո՛չ զայս յաղթութիւն, կարօտ զօրութեանց, արար
խումբ զօրաց,
այլ զանգութ բանակն, մատնեաց մահու կեր,
այրի սպանեաց :

## ԵՐԳԻՉՔ.

Փառք և պատիւ՝ մեր Արարչին,
որ ընդ մեզ է՝ յաւիտեան :
Որ զթշնամին՝ մահու մատնեալ,
արար ’խայտառ՝ ցիր և ցան :

## Ամենեքեան 'ի միասին.

Տեսէք մարդիկ, ահեղ բանակս,
 ունի զմի՝ զօրավար։
Երբ նորա կեանք՝ բարձան յերկրէ,
 զօրքն մատնեցան՝ 'ի յաւար։
Եւ զքեզ հոգի՝ պաշարեալ ունի,
 չար ախոյից բանակ։
Զօրավար նորին՝ է հպարտութեան,
 ախտ մահադուշակ։
Կաց ախոյեան՝ քոյոյ կրից,
 առաքինի՝ սուրբ կենօք.
Հար 'ի յերկիր՝ զթշնամիս,
 ցրուեսցին զօրքն՝ բանակիդ.

## ՎԵՐՋ։

## ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ։

| Երես. | Տող. | Սխալ. | Ուղիղ. |
|---|---|---|---|
| 9 | 22 | պատմիս | պատմես |
| 17 | 10 | Աւ | Այւ |
| 23 | 10 | բնութեան | բնութ |
| 42 | 21 | 'ի նամըս | ինամըս |

## ՑԱՆԿ ԳՐՈՑՍ։


| | |
|---|---|
| | երես. |
| Մահ Աբելի | 7 |
| Զենումն Իսահակայ | 39 |
| Յովսէփ գեղեցիկ | 75 |
| Ազատութիւն ընտուղուայ | 123 |


